ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՎԱՐՈՒԺԱՆ ԳԵՂԱՄԻ ԳԵՂԱՄՅԱՆ
ԷԴԳԱՐ ԱՐՄԵՆԻ ԷԼԲԱԿՅԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱԴՐԲԵՋԱՆ

տեղեկագիրք

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2019

ՀՏԴ 93/94:32:33:355:008
ԳՄԴ 63.3+66+65+68+71
Գ 422

Տպագրվում է Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ:

Հեղինակներ՝
պ.գ.թ. Վարուժան Գեղամյան
Էդգար Էլբակյան

Գիտական խմբագիր՝
բ.գ.թ., պրոֆեսոր Ռուբեն Մելքոնյան

Գրախոսներ՝
բ.գ.թ. Արտյոմ Տոնոյան, պ.գ.թ. Միեր Աբրահամյան

Գ 422 «Ժամանակակից Ադրբեջան» տեղեկագիրք / Գեղամյան Վ., Էլբակյան Է. – Եր., ԵՊՀ հրատ., 102 էջ:

Տեղեկագրքում նկարագրվում են Ադրբեջանի Հանրապետության պատմության առանցքային դրվագները, ներկայիս քաղաքական և տնտեսական համակարգի, զինված ուժերի, սոցիալ-մշակութային կյանքի հիմնական առանձնահատկությունները: Տեղեկագիրքը նախատեսված է արևելագետների, քաղաքագետների, պատմաբանների, դիվանագետների, քաղաքական գործիչների, ռազմական փորձագետների, ինչպես նաև տարածաշրջանով հետաքրքրվող ընթերցողների լայն շրջանակի համար:

ՀՏԴ 93/94:32:33:355:008
ԳՄԴ 63.3+66+65+68+71

ISBN 978-5-8084-2421-0

© ԵՊՀ հրատ., 2019
© Գեղամյան Վ., Էլբակյան Է., 2019

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ 5

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ 7

Բնակլիմայական պայմաններ 7

Վարչատարածքային բաժանում..... 8

Հաղորդակցություն 9

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ 13

Վաղ շրջան.....13

Ռուսական կայսրությունն Անդրկովկասում.....15

Ադրբեջանի ժողովրդական Հանրապետությունը 21

Ադրբեջանական ԽՍՀ 24

Ադրբեջանի Հանրապետություն..... 30

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ 38

Նավթագազային ոլորտ և էլեկտրաէներգիա 38

Գյուղատնտեսություն 40

Արդյունաբերություն.....42

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ 44

Ժողովրդագրություն..... 44

Էթնիկական քարտեզ 45

Կրոնական կյանք 48

Լեզու և գրականություն 51

Կրթություն և գիտություն..... 54

Մամուլ և սոցիալական ցանցեր 56

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 59

Ներքին քաղաքականություն..... 59

Սահմանադրություն, պետական կարգ..... 59

Միլլի մեջլիս 63

Նախագահ 64

Կառավարություն 66
Տեղական ինքնակառավարում 69
Դատական իշխանություն 69
Արտաքին քաղաքականություն 69

ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐ 79

ՀԱՎԵԼՎԱԾ 82
Ադրբեջանում գործող կուսակցություններ 82
Ադրբեջանի քաղաքական գործիչներ 87
Ադրբեջանի պետական տոներ և հիշատակի օրեր 99
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 101

Նվիրվում է Հայաստանի
սահմանները պաշտպանողներին:

ԱՌԱՋԱԲԱՆ

Յուրաքանչյուր պետության համար հարևան երկրների հետ հարաբերությունների կառուցման, ղեկավարման և զարգացման նպատակով անհրաժեշտ են վերջիններիս ներքին ու արտաքին համակարգերի մասին տեղեկության մշտական ձեռքբերումն ու մշակումը: Վերլուծական նմանատիպ աշխատանքն առավել արդիական նշանակություն է ստանում, երբ իրականացվում է շարունակվող զինված հակամարտության պայմաններում:

Այս տեսանկյունից Հայաստանի համար առաջնային կարևորություն ունի Ադրբեջանի մասին մշտապես թարմացվող տեղեկատվական շտեմարանի առկայությունը:

Սույն ձեռնարկի հեղինակները նպատակ են ունեցել ստեղծել հայերենով ամփոփ տեղեկագիրք, որը ներկայացնում է Ադրբեջանի Հանրապետության քաղաքական ու տնտեսական համակարգի, զինված ուժերի և սոցիալ-մշակութային կյանքի հիմնական առանձնահատկությունները՝ հիմնված գիտա-վերլուծական համապարփակ ուսումնասիրությունների վրա:

Անկախ Հայաստանի պատմության մեջ իր տեսակով առաջին ամփոփ տեղեկագիրքը կազմելիս հեղինակները որպես օրինակ են ընդունել Խորհրդային Միությունում և Արևմուտքում տարածված նմանատիպ տարաբնույթ աշխատանքները (մասնավորապես՝ «справочник»-ի և «area/country handbook»-ի ձևաչափերը):

Տեղեկագիրքը բաժանված է մի քանի գլուխների, որոնք ներկայացնում են ժամանակակից Ադրբեջանի պետական և

հասարակական կառուցվածքի գրեթե բոլոր հիմնական բաղադրիչները՝ աշխարհագրությունից մինչև զինված ուժեր, տնտեսությունից մինչև արտաքին քաղաքականություն:

Սույն տեղեկագիրքը կարող է ծառայել որպես ուղեցույց պետական և քաղաքական գործիչների, արտաքին հարաբերությունների և շահագրգիռ այլ գերատեսչությունների աշխատակիցների, ինչպես նաև արևելագետների (հատկապես Ադրբեջանի ուսումնասիրությամբ զբաղվողների), քաղաքագետների, պատմաբանների և լրագրողների համար:

Տեղեկագրքի հավելվածում ներկայացված է գրականության համառոտ ցանկ՝ լրացուցիչ ընթերցանության համար: Հավելվածում ներկայացված են նաև Ադրբեջանի Հանրապետության քաղաքական կուսակցությունները, առանցքային քաղաքական գործիչները, Ադրբեջանի տոնացույցը:

Տեղեկագրքում մինչև 1918 թ. Ադրբեջանի Հանրապետության և ադրբեջանցիների վերաբերյալ տեղեկություններ տալիս օգտագործվել է «թյուրքախոս թաթարներ» ձևը, որը համարել ենք տվյալ հանրույթին նկարագրելու համար գիտականորեն առավել ճշգրիտ պայմանական տարբերակ:

Հեղինակները շնորհակալություն են հայտնում բ.գ.թ., պրոֆեսոր Ռուբեն Մելքոնյանին, բ.գ.թ., դոցենտ Վարդան Ոսկանյանին, բ.գ.թ Արտյոմ Տոնոյանին, բ.գ.թ. Ամալյա Պետրոսյանին, Մարիամ Մելքոնյանին՝ աշխատանքի ընթացքում տեղեկագրքի վերաբերյալ իրենց արժեքավոր դիտարկումների և առաջարկությունների համար:

Վարուժան Գեղամյան
պ.գ.թ., արևելագետ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Բնակլիմայական պայմաններ

Ադրբեջանի Հանրապետության տարածքը, ըստ պաշտոնական տվյալների, կազմում է 86.6 հազար կմ^2 : Սակայն Ադրբեջանի փաստացի տարածքը 75 հազար կմ^2 է՝ դուրս թողնելով պաշտոնական տվյալների մեջ ներառված Արցախի Հանրապետության փաստացի տարածքը (12 հազար կմ^2):

Երկրի ամբողջ արևելյան սահմանը ձգվում է հյուսիսից հարավ՝ Կասպից ծովի երկայնքով (713 կմ): Հյուսիս-արևելքում երկիրը սահմանակցում է Ռուսաստանին (390 կմ), հյուսիս-արևմուտքում՝ Վրաստանին (480 կմ), հարավ-արևմուտքում՝ Թուրքիային (15 կմ) և հարավում՝ Իրանին (600 կմ): Արևմուտքում այն սահմանակցում է Հայաստանի Հանրապետությանը (140 կմ) և Արցախի Հանրապետությանը (291 կմ): Ադրբեջանը սահմանակցում է Հայաստանի Հանրապետությանը նաև Նախիջևանի հատվածում, որտեղ սահմանի երկարությունը 221 կմ է:

Ադրբեջանի տարածքի նշանակալի հատվածն զբաղեցնում են լեռները: Մեծ և Փոքր Կովկասյան լեռնային համակարգերի միջև գտնվում է Կուր-Արաքսյան ընդարձակ ցածրավայրը, հարավ-արևելքում՝ Մուղանի դաշտավայրը և Թալիշի լեռները: Ամենաբարձր կետը Բազարդյուզ լեռան գագաթն է (4466 մ), որը գտնվում է Ադրբեջան-Ռուսաստան սահմանին: Մյուս ամենաբարձր կետը Շահդաղն է (4243 մ):

Գետերը պատկանում են Կասպից ծովի ավազանին: Խոշորագույն գետերը Կուրը և Արաքսն են, կան նաև բազմաթիվ լեռնային գետակներ: Կասպից ծովի ափերը թույլ են կտրտված, խոշորագույն թերակղզին Ապշերոնյանն է: Կասպից ծովի ադրբեջանական հատվածում կան մի շարք կղզիներ և կղզեխմբեր: Խոշորագույն ջրային ավազանը Մինգե-

չաուրի ջրամբարն է (մակերեսը՝ 605 կմ²): Ամենախոշոր լիճը Սարիսուն է (քաղցրահամ, մակերեսը՝ 65.7կմ²): Խոշոր լճերից են Աղգյոլը, Հաջիղաբուլը, Բյոյուքշորը, Գյոյգյոլը:

Երկրի տարածքում առկա են կլիմայական 9 գոտիներ, ինչի շնորհիվ կենդանական և բուսական աշխարհը բավական խայտաբղետ է:

Ադրբեջանի տարածքը հարուստ է ածխաջրածնային (նավթ, գազ) և այլ օգտակար հանածոներով (երկաթ, պղինձ և այլն):

Վարչատարածքային բաժանում

Պաշտոնապես Ադրբեջանի Հանրապետության տարածքը բաժանված է 59 վարչական շրջանի (rayon), 1 ինքնավար հանրապետության և հանրապետական նշանակության 11 քաղաքի: Այս թվերի մեջ Ադրբեջանի իշխանությունների կողմից ներառված են նաև այն տարածքները, որոնք կազմում են Արցախի Հանրապետությունը:

Ադրբեջանի կազմի մեջ գտնվող Նախիջևանի Ինքնավար Հանրապետության (Naxçıvan Muxtar Respublikası) տարածքը բաժանված է 7 վարչական շրջանների և մեկ քաղաքային շրջանի (Նախիջևանը):

Ադրբեջանի խոշորագույն քաղաքներն են Բաքուն, Սումգայիթը, Գյանջյան (Գանձակ), Մինգեչաուրը, Լենքորանը, Շիրվանը, Նախիջևանը, Շամխորը (Շամքիր), Շաքին, Եվլախը:

Ադրբեջանը պաշտոնապես բաժանված է նաև 10 տնտեսական շրջանների (iqtisadi rayon): Այդ շրջաններն են.

Ապշերոնի	Գյանջյա-Ղազախի	Շաքի-Զաքաթալայի	Լենքորանի	Ղուբա-Խաչմազի
Առանի	Վերին Ղարաբաղի	Քյալբաջար-Լաչինի	Լեռնային Շիրվանի	Նախիջևանի

Երկրի տնտեսական հիմնական գործունեությունը կենտրոնացած է Ապշերոնի տնտեսական շրջանում:

Վերջին տարիներ Ադրբեջանում ջանքեր են գործադրվում հատուկ տնտեսական գոտիների ստեղծման ուղղությամբ, որոնք նպատակ ունեն օրենսդրական և հարկային արտոնությունների միջոցով խթանել տնտեսության զարգացումը: Հիշատակության է արժանի Բաքվի Ալաթ նավահանգստում ստեղծված «Բաքվի միջազգային ծովային առևտրային նավահանգիստ» ազատ տնտեսական գոտին:

Հաղորդակցություն

Ադրբեջանում առկա է երկաթուղային և ճանապարհային լայն ցանց, որը մեծապես ժառանգված է ԽՍՀՄ-ից և չնայած անկախությունից հետո իրականացված բարենորոգումներին՝ դեռևս կարիք ունի արդիականացման:

Ավտոմոբիլային ճանապարհները (շուրջ 60 հազար կմ, որի կեսը պատված է ամուր շերտով) հանդիսանում են երկրի ներսում ուղևորափոխադրման և բեռնափոխադրման հիմնական միջոցները: Կարևորագույն մայրուղիներն են Բաքու-Ղուբա (ՌԴ սահման), Բաքու-Ղազախ (Վրաստանի սահման), Ալաթ-Ասթարա (Իրանի սահման), Բաքու-Եվլախ, Նախիջևան-Սադարակ (Թուրքիայի սահման) ճանապարհները: Որպես կանոն՝ մայրուղիները անցնում են երկաթուղային գծերին զուգահեռ: Մայրաքաղաքի և շրջանների միջև, ինչպես նաև դեպի հարևան երկրներ ուղևորափոխադրումներն իրականացվում են գերազանցապես ավտոբուսային երթուղիներով:

Երկաթուղին (շուրջ 2700 կմ) մայրաքաղաք Բաքվին է կապում երկրի խոշոր բնակավայրերը (Գանձակ (Գյանջյա), Ղազախ, Բալաքյան, Եվլախ, Սումգայիթ, Լենքորան, Հորադիզ և այլ քաղաքները): Ադրբեջանը երկաթուղով կապված է

Վրաստանի, Ռուսաստանի և Իրանի հետ. գործում են կանոնավոր չվերթներ դեպի Մոսկվա, Թբիլիսի, Ռոստով, Մախաչկալա, Դերբենտ, ինչպես նաև Կիև (Ուկրաինա), Մաշհադ (Իրան) քաղաքներ[1]: 2017 թ.-ից գործում է Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղային կապը, սակայն 2019 թ. դրությամբ այն չի սպասարկում ուղևորներին: Երկաթուղին սպասարկում է «Ադրբեջանական երկաթուղի» ՓԲԸ-ն:

Մետրո գործում է միայն Բաքու քաղաքում (առկա է երեք գիծ, 25 կայարան):

Երկրի հիմնական օդային դարպասը Բաքվի Հ. Ալիևի անվան միջազգային օդանավակայանն է: Բացի այդ՝ գործում են ևս 19 օդանավակայաններ, որոնց զգալի մասն ունի ռազմական կամ երկակի (քաղաքացիական-ռազմական) նշանակություն: Ազգային փոխադրիչ է հանդիսանում AZAL («Ադրբեջանական ավիաուղիներ») ընկերությունը, որին պատկանում է նաև Buta Airways բյուջետային ավիաընկերությունը:

Ջրային հաղորդակցության ուղիներով Ադրբեջանը կապված է Թուրքմենստանի և Ղազախստանի հետ: Գործում են չորս խոշոր նավահանգիստներ՝ Բաքու, Ասթարա, Լենքորան և Սումգայիթ: Ջրային տրանսպորտի միջոցով Ադրբեջանում իրականացվում են գերազանցապես բեռնափոխադրումներ: Գործում են Առևտրի նավատորմը, Կասպիական նավթային նավատորմը և այլն:

Հաղորդակցային կարևոր ուղիներից են Բաքու-Նովոռոսիյսկ, Բաքու-Սուպսա, Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղերը, Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազամուղը, որոնք ապահովում են ադրբեջանական նավթի և գազի փոխադրումը դեպի արտասահմանյան շուկաներ: Պարբերաբար շրջանառվում են տեղեկություններ այն մասին, որ ապագայում նախա-

[1] Իրանի և Արդրբեջանի միջև ուղիղ երկաթուղային կապ առկա է միայն Նախիջևանի հատվածում:

տեսվում են նաև այլ խողովակաշարերի կառուցում ու շահագործում:

Ադրբեջանում բջջային կապն ապահովում են 3 հիմնական օպերատորներ (Azercell Telekom, Azerfon-Vodafone (Nar ապրանքանիշով) և Bakcell): Նախիջևանի տարածքում հիմնական օպերատորը Naxtel-ն է:

Ադրբեջանում գործում է մի քանի տասնյակ հեռուստա- և ռադիո ընկերություններ: Համապետական նշանակության 12 հեռուստաալիքներից 4-ը պատկանում են պետությանը (AzTV, İTV (Հանրային հեռուստաընկերություն), İdman TV, Mədəniyyət TV): Նախիջևանում գործում է պետական Naxçivan TV հեռուստաընկերությունը: Ադրբեջանի պետական նավթային ընկերությունը (SOCAR) 2013 թ.-ից շահագործում է CBC միջազգային հեռուստաալիքը (նախկինում՝ ATV International), որի եթերը նախատեսված է արտասահմանյան լսարանի համար: Արտասահմանյան հեռուստաընկերություններից Ադրբեջանի տարածքում հեռարձակման թույլտվություն ունի միայն թուրքական պետական TRT 1 հեռուստաալիքը:

Ադրբեջանի ազգային ինտերնետային հասցեները գտնվում են .az դոմենային տիրույթում: Ադրբեջանի տարածքի շուրջ 60%-ում գործում է 4G ցանցը: Ըստ վերջին տվյալների՝ Ադրբեջանում համացանցից օգտվողների թիվը կազմում է ամբողջ բնակչության շուրջ 80%-ը: Ադրբեջանցի օգտատերերի շրջանում սոցիալական ցանցերից առավել տարածված է Facebook-ը:

Ադրբեջանում հաղորդագրությունների փոխանակման առավել տարածված հարթակերն են (մեսինջեր) WhatsApp և Facebook Messenger հավելվածները:

Ադրբեջանում հանրային ծառայությունների ոլորտում վերջին տարիներին առանցքային նշանակություն ունի ASAN տեղեկատվա-հաղորդակցային գործակալությունը, որը

ապահովում է հանրային ծառայությունների թվայնացումը և դրանց՝ «մեկ պատուհանի» սկզբունքով աշխատանքը, ինչպես նաև մատուցում է թվային տարաբնույթ հանրային ծառայություններ:

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Վաղ շրջան

Աշխարհագրական այն տարածքը, որը ներկայումս զբաղեցնում է Ադրբեջանի Հանրապետությունը, բնակեցված է եղել հնագույն ժամանակներից: Մարդկության պատմության վերջին երկու հազարամյակի ընթացքում արևելյան Անդրկովկասի այս հատվածը հանդիսացել է տարբեր աշխարհաքաղաքական միավորների մի մասը (անտիկ դարաշրջանում Աքեմենյան Իրանից ու Հռոմեական կայսրությունից մինչև Ռուսական կայսրություն ու Խորհրդային Միություն՝ նոր ժամանակներում): Այս տարածքում գոյություն ունեցած բոլոր կայսրություններն ու պետական ավելի փոքր կազմավորումները թողել են իրենց քաղաքակրթական ազդեցությունը նկարագրվող տարածաշրջանի սոցիալ-քաղաքական զարգացման վրա:

Մերձավոր Արևելքում քրիստոնեության տարածումից հետո ներկայիս Ադրբեջանի տարածքում բնակվող ժողովուրդների մեծ մասն աստիճանաբար ընդունեց քրիստոնեություն: Այս ժամանակաշրջանում հիշատակության է արժանի հատկապես Աղվանքի պետությունը, որն արևելյան Անդրկովկասի խոշորագույն քրիստոնեական պետական միավորումն էր: Կովկասի արաբական նվաճման ժամանակ (7-8-րդ դարեր) տարածաշրջանն ընկավ իսլամական խալիֆայության տիրապետության ներքո, ինչի արդյունքում սկսվեց նաև տեղաբնիկների աստիճանական իսլամացումը:

Արևելյան Անդրկովկասի պատմության հաջորդ փուլը կապված է 11-րդ դարում Կենտրոնական Ասիայից թյուրքական ցեղային միավորումների (հատկապես սելջուկ-թյուրքերի)՝ դեպի այս տարածաշրջան զանգվածային ներթափանցման հետ: Սելջուկ-թյուրքերի ներհոսքին, որոնք հաստա-

տվեցին տարածաշրջանի տարբեր մասերում, հաջորդեցին նաև Չինգիզ խանի և Լենկ Թեմուրի արշավանքները, որոնք 13-15-րդ դարերում կտրուկ փոխեցին ամբողջ տարածաշրջանի, այդ թվում նաև՝ արևելյան Անդրկովկասի, ժողովրդագրական ու սոցիալական կազմը: Նշված փոփոխության հետևանքով 15-րդ դարում այստեղ ձևավորվեցին Քարաքոյունլուների և Աքքոյունլուների պետական միավորումները, որոնց կենտրոնները երկրամասի հարավային շրջաններն էին:

16-18-րդ դարերում արևելյան Անդրկովկասի մեծագույն մասը ընկնում է պարսկական տիրապետության տակ, երբ Իրանում իշխանությունը գտնվում էր թյուրքախոս Սեֆյան, այնուհետև Ղաջարական դինաստիաների ձեռքին: Այդ ժամանակահատվածում տարածաշրջանում իրանական պետության իշխանությունն սկսում են վիճարկել Օսմանյան կայսրությունը (16-րդ դարի երկրորդ կեսից), իսկ այնուհետև նաև՝ Ռուսական կայսրությունը: Վերջինս 18-րդ դարի սկզբից դառնում է տարածաշրջանի նոր խոշոր կայսրությունը՝ Կովկասի համար պայքարը տեղափոխելով երեք հզոր պետությունների ռազմա-քաղաքական մրցակցության դաշտ: Այն բանից հետո, երբ 1747 թ. անկում ապրեց Սեֆյան դինաստիան, ինչպես Իրանի այլ շրջաններում, այնպես էլ արևելյան Անդրկովկասում թուլացավ կենտրոնական իշխանության ազդեցություն, ինչը հանգեցրեց տեղում գոյություն ունեցող ֆեոդալական միավորների՝ խանությունների ինքնավարության որոշակի մեծացմանը, ինչպես նաև կենտրոնաձիգ իշխանության զգալի վակուումի: Խանությունների իշխող վերնախավը մեծ մասամբ կազմված էր թյուրքախոս և իսլամ դավանող, կիսաքոչվոր կամ քոչվոր տոհմերի ներկայացուցիչներից:

Ռուսական կայսրությունն Անդրկովկասում

Ժամանակակից Ադրբեջանի ստեղծման համար տարածաշրջանի քաղաքական պատմության կարևորագույն փուլը կարելի է համարել Անդրկովկասի նվաճումը Ռուսական կայսրության կողմից, որը տեղի ունեցավ 18-րդ դարի վերջին-19-րդ դարի առաջին տասնամյակում: Ռուս-պարսկական, ինչպես նաև ռուս-թուրքական մի քանի պատերազմների արդյունքում (ամրագրված, մասնավորապես, Գյուլիստանի (1813 թ.) և Թուրքմենչայի (1828 թ.) պայմանագրերով) Կասպից և Սև ծովերի միջև գտնվող տարածքը գրեթե ամբողջությամբ դարձավ Ռուսական կայսրության մի մասը:

Դրան հետևեց տարածաշրջանում ռուսական տիրապետության շուրջ 100-ամյա շրջանը, որի ընթացքում այստեղ հաստատվեցին բոլորովին նոր քաղաքական և սոցիալ-մշակութային իրողություններ: Ռուսական կայսրությունն իր բնույթով փորձում էր նմանվել եվրոպական պետություններին, սակայն գաղութային քաղաքականության տեսանկյունից նկատելիորեն տարբերվում էր եվրոպական տերություններից: Ցարական իշխանությունները ձգտում էին հնարավորինս արդիականացնել (մոդերնիզացնել) իրենց տիրապետության տակ գտնվող տարածքները՝ այդպիսով նպատակ ունենալով նպաստել կայսրության ընդհանուր զարգացմանը: Մասնավորապես՝ վարչատարածքային կառավարման նոր մոդելները, ժամանակակից տրանսպորտային ենթակառուցվածքների հիմնումը, ներդրված նոր կրթական համակարգը գրեթե մշտապես «արևելյան» կայսրությունների մաս կազմած արևելյան Անդրկովկասը մոտեցրին արևմտաեվրոպական մոդերնիզացված քաղաքակրթությանը:

Վերոնշյալ գործընթացներն ավելի արագացան Բաքվում նավթային արդյունաբերության ակտիվ զարգացմանը զու-

գահեռ, որի առավել ծաղկուն շրջանն սկսվեց 1870-ականներին, երբ պետությունը հնարավորություն տվեց նավթային շուկա մտնել արտասահմանյան մասնավոր ընկերություններին: Աստիճանաբար նավթային ոլորտը դարձավ արևելյան Անդրկովկասի տնտեսական և սոցիալական կյանքի հիմնական լոկոմոտիվը:

Ինդուստրիալիզացման գործընթացի արդյունքում տեղի ունեցավ ժողովրդագրական նշանակալի փոփոխություն. նավթային արդյունաբերության զարգացումը ենթադրում էր առաջին հերթին Բաքվի շրջանում բազմազգ քաղաքային բնակչության առաջացում՝ ի հաշիվ շրջան և քաղաք ժամանող աշխատանքային ներգաղթյալների, որոնց կազմում կային ռուսներ, հայեր, թյուրքախոս թաթարներ, թաթեր և այլք: Չնայած ուրբանիզացման արագ տեպմերին՝ գյուղացիները շարունակում էին կազմել երկրամասի բնակչության ճնշող մեծամասնությունը:

Ժողովրդագրական տեղաշարժերին զուգահեռ՝ փոխվում էր նաև բնակչության հասարակական կառուցվածքը. տեղի բնակիչները որպես վարչական աշխատողներ աստիճաբար ներգրավվում էին կայսրության կառավարման համակարգում (տեղական կառավարման մարմիններից մինչև դատական համակարգ), իսկ նախկին գյուղացիները ձևավորում էին բանվորական նոր շերտը՝ աշխատանքի անցնելով արդյունաբերական ձեռնարկություններում և երկաթգիծ կառուցող ընկերություններում: Այս շրջանում նախկին խոշոր առևտրականներից և ժառանգական հողատերերից ձևավորվում է թաթարական առևտրային և արդյունաբերական բուրժուազիան, որն սկսում է կարևորագույն տեղ զբաղեցնել նաև երկրամասի հասարակական-քաղաքական կյանքում: Մասնավորապես՝ այս խմբի ներկայացուցիչների ջանքերով արևելյան Անդրկովկասի խոշոր բնակավայրերում բացվում են տարատեսակ կրթական, մշակութային, բարեգործական

հաստատություններ, սկսում են տպագրվել թյուրքալեզու և օտարալեզու պարբերականներ: Այս գործընթացները, իրենց հերթին, նպաստում էին թյուրքախոս քաղաքային բնակչության շարունակական արդիականացմանը:

Վերոնշյալ գործընթացին զուգահեռ աստիճանաբար ձևավորվեց նաև թաթարական մտավորական խավը, որը կրթություն էր ստացել երկրամասի միջնակարգ դպրոցներում և վարժարաններում, ապա շարունակել կրթությունը Ռուսական կայսրության և Արևմտյան Եվրոպայի (հատկապես՝ Փարիզի) համալսարաններում, ինչպես նաև Ստամբուլում: Հասարակության այս խավն աչքի էր ընկնում առավելապես աշխարհիկ, արևմտյան կենսակերպի ու կրթական բարեփոխումների, հակագաղութային պայքարի տրամադրություններով, ինչպես նաև եվրոպական քաղաքական գաղափարախոսությունների հանդեպ հակվածությամբ:

19-րդ դարի վերջին երկու տասնամյակներից ի վեր՝ մտավորականներն սկսում են ակտիվ հասարակական դիրքորոշում հայտնել սոցիալական նշանակության տարաբնույթ խնդիրների վերաբերյալ: Հասարակական ակտիվության հիմնական միջոցը ժամանակի թյուրքալեզու և ռուսալեզու մամուլն էր (հիշատակության են արժանի թյուրքալեզու առաջին «Աքինչի», «Հայաթ», «Աչըգ Սյոզ», ռուսալեզու «Կասպիյ» օրաթերթերը, ինչպես նաև «Մոլլա Նասրեդին» ամսագիրը):

Շարունակվող արդիականացմանը զուգահեռ՝ ինտելեկտուալ շրջանակների կողմից ժամանակի ընթացքում ձևավորվեց թյուրքախոս թաթարների մշակութային յուրահատուկ միջավայրը, որը տվյալ հանրույթի համար հիմք դարձավ համախմբող նոր ինքնության կառուցարկման համար: Ինքնության կերտման վերոնշյալ գործընթացի առանցքում թյուրքական ազգայնականության գաղափարն էր: Հասարակական նշանակության խնդիրների լուծման շուրջ համախմբած մտա-

վորականներն աստիճանաբար սկսեցին ձևակերպել և բարձրաձայնել թյուրքախոս թաթարական համայնքին հուզող խնդիրները՝ այդպիսով մուտք գործելով տեղական քաղաքականության դաշտ: Նախնական շրջանում մտավորականների առաջ քաշած հարցադրումները գերազանցապես վերաբերում էին կայսրության ներսում քրիստոնյաների համեմատ մուսուլմանների հավասարության հաստատման, վարչական և կրթական բարեփոխումների, աշխատավորների ու գյուղացիների իրավունքների մեծացման և այլ պահանջներին:

19-րդ դարի երկրորդ կեսի և 20-րդ դարի սկզբի համաշխարհային սոցիալ-քաղաքական գործընթացների ազդեցությունը տարածվում էր նաև արևելյան Անդրկովկասի վրա: Մասնավորապես՝ մտավորական և աշխատավորական շրջանակներում մեծ տարածում գտան Եվրոպայից փոխառված այնպիսի գաղափարախոսություններ, ինչպիսիք են սոցիալիզմը, լիբերալիզմը, եվրոպական տիպի ազգայնականությունը (նշվածներից վերջինը որպես արդիականացման պայքարի վերջնանպատակ սահմանում էր ազգային պետության (nation-state) ստեղծումը):

Ծավալվող ինդուստրացման արդյունքում արձանագրվող տնտեսական ու ժողովրդագրական աճը (հատկապես Բաքվում և դրա շրջակայքում) առաջացրեց կատաղի մրցակցություն ռեսուրսների և շուկայի համար, ինչի արդյունքում արևելյան Անդրկովկասի հանրության բոլոր շերտերի ներկայացուցիչների մոտ առաջացավ անհանգստություն տնտեսական բարեկեցիկ ապագայի վերաբերյալ, որը հանգեցրեց ռեսուրսների համար լարված պայքարի:

Ստեղծված միջավայրը պարարտ հող էր բախումների, ընդվզումների և հատկապես միջէթնիկ հակամարտությունների համար: Առանձնակի դաժանությամբ աչքի ընկան հատկապես Անդրկովկասի մի շարք շրջաններում 1905-1906

թթ. տեղի ունեցած հայ-թաթարական բախումները, որոնք ընթացան կայսերական իշխանությունների թողտվության պայմաններում՝ թյուրքախոս թաթար բնակչության ակտիվ նախաձեռնությամբ: Բախումներն զգալիորեն փոխեցին երկրամասի ժողովրդագրական բաշխվածության պատկերը. մասնավորապես քաղաքներում յուրաքանչյուր ազգության ներկայացուցիչներն սկսեցին էլ ավելի կոմպակտ բնակվել առանձին թաղամասերում՝ այդպիսով մեծացնելով հասարակության բևեռվածությունը և միջէթնիկ լարվածությունը:

Հայ-թաթարական բախումներն արագացրեցրին թաթարական մտավորականության առաջ քաշած կրթական-սոցիալական օրակարգի քաղաքականացումը: Հենց այս շրջանում ստեղծվեցին առաջին քաղաքական միավորումները և կուսակցությունները, որոնք դարձան քաղաքական պայքարի հիմնական դերակատարները՝ հաճախ վարելով ընդհատակյա կամ վտարանդի գործունեություն (հիշատակության են արժանի «Հյումմաթ», «Դիֆաի», «Մուսավաթ» կուսակցությունները): Թաթարական համայնքի առավել քաղաքականացմանն ու ռադիկալացմանն էին նպաստում նաև երկրամասի անմիջական հարևանությամբ ծավալվող իրադարձությունները՝ սահմանադրական հեղափոխությունն Իրանում (1905-1911 թթ.), երիտթուրքական հեղաշրջումը Օսմանյան կայսրությունում (1908-1909 թթ.), ինչպես նաև Ռուսական կայսրությունում տեղի ունեցող քաղաքական տեղաշարժերը (1905-1907 թթ.): Վերջին երկու իրադարձությունների արձագանքներն ուղղակի ազդեցություն ունեցան արևելյան Անդրկովկասում տեղի ունեցող գործընթացների վրա, մասնավորապես՝ թյուրքական ազգայնական և սոցիալիստական տրամադրվածություն ունեցող զանգվածների դժգոհության ալիքի ծավալման, մոբիլիզացման ու քաղաքականացման տեսանկյունից:

Արևելյան Անդրկովկասի պատմության զարգացման նոր փուլն սկսվեց Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին (1914-1918 թթ.): Թեև այս երկրամասը ռազմական գործողությունների անմիջական թատերաբեմ չէր, սակայն պատերազմի տարիներին և դրա արդյունքում արձանագրված փոփոխությունները բոլորովին այլ իրադրություն ստեղծեցին ամբողջ Անդրկովկասում: Մասնավորապես՝ 1917 թ. հեղափոխական շարժումները (Փետրվարյան և Հոկտեմբերյան հեղափոխությունները) պատճառ դարձան, որ Ռուսական կայսրության ծայրամասերում թուլանա կենտրոնական իշխանությունը, իսկ ռուսական բանակի դուրս բերումը երկրամասից փաստացի նշանակեց Անդրկովկասի անջատումը Ռուսաստանից:

Արևելյան Անդրկովկասի բնակչության մեծամասնությունը կազմող թյուրքախոս թաթարներին ներկայացնող քաղաքական կազմակերպությունները հայերի և վրացիների հետ 1917 թ. վերջին-1918 թ. սկզբում ձեռնամուխ եղան տարածաշրջանային մեկ ընդհանուր ինքնակառավարման մարմնի ձևավորմանը (Անդրկովկասյան Սեյմ, Անդրկովկասյան Դեմոկրատական Ֆեդերատիվ Հանրապետություն), որը պետք է տնօրիներ երկրամասի ճակատագիրը մինչև Ռուսաստանում իրավիճակի հանգուցալուծումը և Կովկասի փոխարքայության կարգավիճակի ճշտումը: Սակայն կողմերի միջև առկա տարաձայնությունները հնարավորություն չտվեցին հանդես գալ միասնական քաղաքական օրակարգով: Ավելին, ընթացող պատերազմի և օսմանյան բանակի հարձակման պայմաններում Անդրկովկասի երեք խոշոր դերակատար ազգերի միջև հարաբերություններն էլ ավելի վատթարացան՝ ընդունելով բացահայտ թշնամական բնույթ: Արևելյան Անդրկովկասում թյուրքական անկախ պետության ստեղծմանը նպաստում էր հատկապես Օսմանյան կայսրությունը, որը, ոգևորված ռուսական բանակի՝ Կովկասից հեռացման փաստով,

քաղաքական և ռազմական մեծ ջանքեր էր գործադրում այստեղ թյուրքական պետության միջոցով դուրս գալ դեպի Ռուսաստանի այն տարածքներ, որոնք բնակեցված էին թյուրքալեզու ժողովուրդներով (պանթյուրքիստական այս նախագծի իրագործումը, ըստ երիտթուրքական իշխանության ներկայացուցիչների, պետք է փրկեր Օսմանյան կայսրությունը վերջնական կործանումից)։ Նույն ժամանակաշրջանում պակաս կարևոր չէր նաև արևմտյան մեծ տերությունների, մասնավորապես՝ Գերմանիայի և Մեծ Բրիտանիայի խաղացած դերն Անդրկովկասի հետագա ճակատագրի հարցում։

Ստեղծված իրավիճակի արդյունքում 1918 թ. մայիսի վերջին Անդրկովկասում ստեղծվեցին երեք անկախ հանրապետություններ։

Ադրբեջանի Ժողովրդական Հանրապետությունը

Ադրբեջանի Ժողովրդական Հանրապետությունը հռչակվել է 1918 թ. մայիսի 27/28-ին։ Այն ստեղծվեց դրան նախորդող տասնամյակներում արևելյան Անդրկովկասում ձևավորված թյուրքախոս թաթարական ինտելեկտուալ, սոցիալական և քաղաքական հիմքերի վրա։

Ադրբեջանի Հանրապետությունը հռչակվում է Անդրկովկասի տրոհման արդյունքում վերջինիս արևելյան և հարավային հատվածներում։ Ուշագրավ է, որ «Ադրբեջան» տեղանվան վերագրումը պատմական Առանի և Շիրվանի տարածքներին, որպես այդպիսին, աննախադեպ էր։ Ըստ տիրապետող պատմագիտական բնորոշումների՝ նորահաստատ ադրբեջանական, ինչպես նաև օսմանյան վերնախավերի համար այն պետք է որպես միջոց ծառայեր տարածաշրջանի ապառուսականացման և ապահիրանականացման պայմաններում համաթյուրքական աշխարհագրության մեջ ներառելու

այսպես ասած «իրական Ադրբեջանը», այն է՝ իրանական աշխարհի հյուսիսային և հյուսիսարևելյան երկրամասերը (որոնք հայ մատենագրության մեջ հայտնի են «Ատրպատական» անվամբ):

Նորահոչակ պետության իշխող վերնախավը գերազանցապես կազմված էր ուսյալ խավից, որոնք ներգրավված էին քաղաքական տարբեր կուսակցություններում: Կառավարության առաջին ղեկավարը Ֆաթալի Խան Խոյսկին էր, իշխող կուսակցությունը՝ ազգայնական «Մուսավաթը», իսկ փաստացի մայրաքաղաքը՝ Գանձակը (Գյանջյան) (մինչև 1918 թ. սեպտեմբեր):

Հանրապետության ստեղծումը նոր կարևոր խթան հանդիսացավ թյուրքախոս թաթարների ինքնութենակերտման գործընթացի շարունակման և արագացման համար:

Կարճատև կյանք ունեցած Ադրբեջանի Հանրապետության պատմությունը կարելի է բաժանել պայմանական երեք փուլի: Առաջին փուլում (1918 թ. հունիս-սեպտեմբեր) նոր ձևավորված ադրբեջանական կառավարությունն օսմանյան բանակի օժանդակությամբ փորձում էր հաստատել իր իշխանությունը հարավ-արևելյան Կովկասի երկրամասում: Առաջին հերթին խոսքը Բաքու քաղաքի նվաճման մասին է, որը 1917 թ. վերջից փաստացի գտնվում էր սոցիալիստական ուժերի՝ Բաքվի կոմունայի իշխանության ներքո (կոմունան ղեկավարում էր Ստեփան Շահումյանը): Արևելյան Անդրկովկասի տնտեսական և քաղաքական կենտրոն հանդիսացող այս քաղաքն օսմանյան կանոնավոր բանակին և թաթարական զորամիավորումներին երկար դիմադրելուց հետո սեպտեմբերին, այնուամենայնիվ, ընկնում է:

Պետականաշինության հիմնական փուլը մեկնարկում է 1918 թ. աշնանը (և տևում մինչև 1919 թ. օգոստոս), երբ դրվում են գործադիր, օրենսդիր և դատական իշխանության հիմքերը, որոշարկվում են սոցիալական և տնտեսական քաղաքա-

կանության հիմնական տարրերը: Այս փուլում Ադրբեջանի կառավարության իշխանության հիմնական երաշխավորն էին Բրիտանական կայսրության զորքերը, որոնք 1918 թ. փոխարինել էին պատերազմում պարտություն կրած Օսմանյան բանակին: Բրիտանական կայսրությունը տարածաշրջանում հետապնդում էր սեփական շահերը, որոնք այդ շրջանում, ըստ էության, համընկնում էին ադրբեջանական իշխանությունների շահերի հետ:

Երրորդ փուլը, որը փաստացի անկախության շրջանն էր, տևում է 1919 թ. օգոստոսից մինչև 1920 թ. ապրիլ: Այս ընթացքում տարածաշրջանից հեռանում են բրիտանական զորքերը և Ադրբեջանը միայնակ պետք է դիմագրավեր իր առջև ծառացած խնդիրներին:

Բացի սոցիալ-տնտեսական տարաբնույթ խնդիրներից՝ առաջնային նշանակություն ունեին հարևան պետությունների՝ Հայաստանի և Վրաստանի հետ տարածքային վեճերի լուծումը ու սահմանների ամրագրումը: Այս առումով առավել բարդ իրավիճակ էր ստեղծվել Հայաստանի հետ հարաբերություններում. Ադրբեջանը հավակնում էր իր տարածքին միացնել Ղարաբաղի, Զանգեզուրի և Նախիջևանի երկրամասերը:

Սակայն նշված ոչ մի խնդիր վերջնական լուծում չստացավ, քանի որ 1920 թ. Ադրբեջանի իշխանությունները, զրկված լինելով արտաքին մեծ տերության որևէ հովանավորությունից (այս շրջանում Բաքվին շարունակում էին աջակցություն ցուցաբերել քեմալական շարժման ղեկավարները), ստիպված էին դիմադրել բոլշևիկյան Կարմիր բանակին, որը նպատակ էր դրել խորհրդայնացնել երկիրը՝ ապահովելով Ռուսաստանի հարավային սահմանների ամրությունը և նպատակ ունենալով այնտեղից «արտահանել կոմունիստական հեղափոխությունը» դեպի Մերձավոր Արևելքի և Կենտրոնական Ասիայի մուսուլմանական երկրներ:

Ադրբեջանական ԽՍՀ

Ադրբեջանն անդրկովկասյան առաջին հանրապետությունն էր, որը խորհրդայնացվեց (1920 թ. ապրիլի 27-ին)։ Տեղում խորհրդայնացման գործընթացը համակարգում էր բոլշևիկյան գործիչ Նարիման Նարիմանովը։ Խորհրդայնացման առաջին տարիներին խնդիր էր դրված հաստատել բոլշևիկյան ամուր իշխանություն երկրի ամբողջ տարածքում՝ զսպելով ընդդիմադիր ցանկացած դրսևորում, ինչպես նաև օժանդակել հարևան երկրների խորհրդայնացման գործընթացին։ Պաշտոնապես իշխանությունը գտնվում էր Ադրբեջանի հեղափոխական կոմիտեի և Ադրբեջանի բոլշևիկյան կուսակցության ձեռքում, սակայն խորհրդային կարգերի հաստատման արդեն առաջին ամիսներից ակնհայտ էր, որ թե՛ արտաքին, և թե՛ ներքին քաղաքականության գրեթե բոլոր հարցերում իրական իշխանությունը պատկանում էր Ռուսաստանի բոլշևիկյան կուսակցությանը, որը Մոսկվայից միանձնյա որոշում էր անհրաժեշտ քաղաքականությունը։

Ամբողջ Անդրկովկասի խորհրդայնացումից հետո Լենինի գլխավորությամբ որոշում կայացվեց այստեղ գոյություն ունեցող հանրապետությունները մտցնել տարածաշրջանային նոր կառույցի մեջ։ Թեև այդ որոշումը միանշանակ չընդունվեց տեղի բոլշևիկների կողմից, սակայն 1922-1936 թթ. Ադրբեջանը Խորհրդային Հայաստանի և Խորհրդային Վրաստանի հետ միասին կազմեցին Անդրկովկասի Խորհրդային Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետությունը (ԱԽՖՍՀ), որը նախատեսում էր երեք երկրների ինտեգրացիա տնտեսական և քաղաքական ոլորտներում։ Ընդհանուր առմամբ այս նախագիծը ևս տապալվեց և վերջինիս կազմալուծումից հետո երեք հանրապետությունները շարունակեցին դարձյալ ֆորմալ առումով միջազգային իրավունքի սուվերեն սուբյեկտի կարգավիճակով իրենց գոյությունը՝

իրականում ամբողջապես ենթարկվելով մոսկովյան կենտրոնական իշխանությանը:

Խորհրդային Ադրբեջանի պատմությունը անհրաժեշտ է դիտարկել այն մեծ համատեքստում, որում զարգանում էր ընդհանուր, այսպես կոչված, «սովետական հայրենիքը»՝ ԽՍՀՄ-ը: Միևնույն ժամանակ կարևոր նշանակություն ունեին տեղական առանձնահատկություններն ու իրողությունները, որոնք դրսևորվում էին այդ մեծ համատեքստում: 1920 թ.-ից մինչև Հայրենական մեծ պատերազմի շրջանը սովետական պետականաշինության երկու հիմնական մոտիվներից էին «կարմիր տեռորը» և ազգային հարցի լուծման ուղիները: 1920-1930-ականներին ազգային հարցի լուծման ձևաչափ էր ընտրվել վարչատարածքային որոշակի միավոր զբաղեցնող հանրույթների «էթնոսավորումը», նրանց ազգային պատմությամբ և ավանդույթներով օժտելը («կորենիզացիա»): Խնդիր էր դրված հատկապես ծայրագավառներում ստեղծել հոմոգեն սոցիալական խմբից բաղկացած միութենական հանրապետություններ կամ այլ ենթակայության միավորներ: Ադրբեջանի դեպքում, հաշվի առնելով լեզվական մերձությունը հարևան Թուրքիայի հետ և պատմադավանաբանական ընդհանրությունն Իրանի հետ, խորհրդային իշխանությունների կողմից խնդիր էր դրված ստեղծելու բոլորովին այլ ինքնություն՝ նամանավանդ, որ այդ տարիներին Թուրքիայում և Իրանում նույնպես ընթանում էին ինքնութենակերտման ակտիվ միջոցառումներ:

Այսպես, եթե 1926 թ. մարդահամարում երկրի բնակչության մեծամասնությունն անվանվում էր «թուրք», ապա 1939 թ. մարդահամարում ստեղծվում է նոր միասնական էթնոհորոնիմ՝ «ադրբեջանցի»: Լեզուն նույնպես սկսում է կոչվել «ադրբեջաներեն», ավելին՝ նախկին արաբատառ և թուրքական ձևի լատինատառ գրերից անցում է կատարվում կյուրեղագրի (ընդհուպ մինչև 1992 թ.): Սրանով խորհրդային իշխա-

նությունները փորձում էին ապաթյուրքականացնել ազգաստեղծման պրոցեսն Անդրկովկասում՝ տեղի մուսուլմանությանը կտրելով նաև համաիրանական ժառանգությունից: Այսպիսով, ԽՍՀՄ տարիներին նոր ուղղություններ են հաղորդվում ներկայիս ադրբեջանցիների ազգային ինքնության զարգացմանը:

Այս գործընթացը շարունակվում է նաև հետպատերազմյան տարիներին, հատկապես դեպի Իրանի հյուսիս սովետական ներխուժման և 1960-ականներին ողջ ԽՍՀՄ տարածքի, ազգայնական տրամադրությունների աստիճանական ներթափանցման ժամանակ: Այս երկուսի հիման վրա ապագայում պետք է ձևավորվեին «Արաքս գետով բաժանված ազգի» կամ «Միասնական Ադրբեջանի» մասին մերձպատմագիտական միֆ-պատումները, որոնցում Ադրբեջանի Հանրապետությունը ներկայացվում է որպես Իրանի հյուսիսի երկրամասերի հետ միասնական ադրբեջանական էթնոտարածք:

Ինչ վերաբերում է «կարմիր տեռորին», ապա որպես համասովետական «կաթսայի» մաս՝ Ադրբեջանը ապրել է վարչատնտեսական նույն ձեռնարկումները, ինչ մյուս հանրապետությունները, այն է՝ արագացված կերպով իրականացվող ինդուստրիալիզացման և գյուղացիության կոլեկտիվացման քաղաքականություն, «ժողովրդի թշնամիների», այդ թվում՝ մտավորականության հանդեպ հետապնդումներ և գնդակահարություններ:

Տարածաշրջանի խորհրդայնացումից հետո «ազգային սահմանների» հստակեցման ժամանակ Ադրբեջանի սահմաններում Խորհրդային Ռուսաստանի ղեկավարության ուղղակի որոշմամբ ընդգրկվեցին հայկական Նախիջևանը և Ղարաբաղը՝ ստանալով ինքնավարության ձևական կարգավիճակներ (Հայաստանի խորհրդայնացումից հետո Ադրբեջանի կազմում ձևավորվեցին Լեռնային Ղարաբաղի

Ինքնավար Մարզը (ԼՂԻՄ) և Նախիջևանի Ինքնավար Հանրապետությունը)։ Բոլշևիկյան ղեկավարության այս որոշումները ընդունվեցին տարածաշրջանային աշխարհաքաղաքականության բարդ համատեքստում (մասնավորապես՝ թուրք-բոլշևիկյան համագործակցության պայմաններում), ինչպես նաև պայմանավորված էին բոլշևիկյան ղեկավարության ներքին վախերով և «հեղափոխության արտահանման» այն ժամանակվա տեսլականով։

Հայրենական մեծ պատերազմի տարիներին Բաքուն՝ իր նավթի պաշարներով, նացիստական Գերմանիայի թիրախներից էր, սակայն բուն Ադրբեջանի տարածք հակառակորդի ուժերն այդպես էլ ոտք չեն դրել։

Հետպատերազմյան տարիների զարգացման կարևոր մոտիվներից են ուրբանիզացիայի արագ տեմպերը, որոնք պայմանավորված էին արդյունաբերականացման նոր թափով և միևնույն ժամանակ փոխում էին Ադրբեջանի ժողովրդագրական դիմագիծը։ Գյուղերից քաղաքներ ներհոսքի հաշվին ադրբեջանական քաղաքները և առաջին հերթին՝ Բաքուն, աստիճանաբար կորցնում են ցարական շրջանից ժառանգած բազմազգ քաղաքի համարումը՝ վերածվելով միութեանական հանրապետության «ազգային քաղաքների» (դեռևս ունենալով նկատելի բազմազգ բնակչություն)։

1960-ական թվականներն ամբողջ սոցիալիստական աշխարհում՝ Լեհաստանից մինչև Ադրբեջան, նշանավորվեցին ազգայնական տրամադրությունների երևան գալով։ Առնվազն Ադրբեջանում սրան նախորդել էին տնտեսական բարդությունները՝ կապված կենտրոնի կողմից ադրբեջանական նավթի հանդեպ հետաքրքրության անկման հետ։ Սրա արդյունքում Ադրբեջանի տարածքում աստիճանաբար սկսե-

ցին ավելի ցցուն ի հայտ գալ ազգամիջյան հին խնդիրներն ու թշնամանքը[2]:

Այս փոփոխությունների պայմաններում 1969 թ.-ին Ադրբեջանի Կոմունիստական կուսակցության առաջին քարտուղար է ընտրվում Հեյդար Ալիևը: Մինչև այդ պաշտոնին հասնելը վերջինս գլխավորել էր Ադրբեջանի պետական անվտանգության կոմիտեն և բավական մանրամասնորեն ծանոթ էր ԽՍՀՄ ընդհանուր և տեղային իրադրությանն ու զարգացման օրինաչափություններին: Հ. Ալիևը, արձագանքելով երկրում առկա խնդիրներին, սկսում է աստիճանաբար աշխատել դրանց ուղղությամբ. տնտեսության վերաաշխուժացման համար մեծ ուշադրություն է դարձվում գյուղատնտեսությանը (օր.՝ բամբակագործություն) և վերամշակող արդյունաբերությանը (օր.՝ խմիչքի արտադրություն):

Առաջին հերթին Հ. Ալիևը հետզհետե սկսում է բարձրաստիճան կուսակցական պաշտոնյաներին ընտրել ըստ ազգային պատկանելության՝ ադրբեջանցի և հատկապես՝ նախիջևանցի լինելու սկզբունքի (մինչ այդ Ադրբեջանի կոմկուսը համեմատաբար ավելի բազմազգ էր): Լուրջ աշխատանքներ են սկսում իրականացվել Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում (ԼՂԻՄ) և նրա շուրջը ժողովրդագրական պատկերը փոխելու ուղղությամբ. հանգուցային կետերում ստեղծվում են ադրբեջանաբնակ նոր գյուղեր, վերաբնակեցվում և ընդարձակվում են հները[3]: Ազգագրական և

---

[2] Հենց այս տարիներին որոշում կայացվեց հիմնահատակ ոչնչացնել Շուշի քաղաքի երբեմնի հայկական թաղամասի մնացորդները և փոխարենը կառուցել «խրուշչովյան» ոճի բազմաբնակարան շենքեր:

[3] 2002 թ.-ի հուլիսին տված մի հարցազրույցում Հ. Ալիևը խոստովանել է. «Երբ ես ԱդրԽՍՀ առաջին քարտուղար էի, փորձում էի փոխել Լեռնային Ղարաբաղի ժողովրդագրությունը: Լեռնային Ղարաբաղը հարց էր բարձրացնում այնտեղ ինստիտուտի, բուհի բացման մասին: Մեզ մոտ չէին առարկում: Ես որոշեցի բացել, բայց հարակից շրջաններից ադրբեջանցիներին արդեն ոչ թե Բաքու էինք ուղարկում, այլ այնտեղ: Այնտեղ կոշիկի

բանահյուսական նյութի համակողմանի ուսումնասիրությունը թույլ է տալիս պնդելու, որ հենց 1970-ականներին՝ Հ. Ալիևի իշխանության տարիներին է ադրբեջանցիների մեջ արմատացել Ղարաբաղի՝ ադրբեջանապատկան լինելու ներքին համոզմունքը:

Սովետական տնտեսության կառուցվածքային ճգնաժամի և ազգային տրամադրությունների փոփոխության պայմաններում անդրկովկասյան երեք հանրապետություններում, այդ թվում՝ Ադրբեջանում սկսում են հիմնավորվել սոցիալ-տնտեսական հարաբերությունների մեջ կոռուպցիոն տարրերը և ստվերային տնտեսության դրսևորումները: Սա խիստ օրինաչափ էր՝ հաշվի առնելով, որ նախընթաց տարիներին սոցիալական կազմակերպման ոչ մի այլ մոդել կենտրոնը չէր առաջարկել, այդ իսկ պատճառով՝ ավանդական հասարակությանը բնորոշ կառուցակարգով երկրներում սկսեց աճել «յուրայինների» հանդեպ ֆավորիտիզմի պրակտիկան: Այդ տարիներն ուշագրավ էին նաև նրանով, որ աճող ազգայնական տրամադրությունների ֆոնին կուսակցական նոր առաջնորդները որդեգրում էին խիստ օպորտունիստական մոտեցում՝ չկամենալով ամբողջությամբ ճնշել ազգային խոսույթը: Փոխարենը վերջիններս փորձում էին սեփական օրակարգի առանձին մասեր տեղավորել դրա համատեքստում, ինչպես օրինակ Հ. Ալիևի՝ վերը նշված քայլերը:

ֆաբրիկա բացեցինք և մարզին հարակից շրջանների ադրբեջանցիներին նույնպես այնտեղ էինք ուղարկում: Այդ և այլ միջոցներով ես ջանում էի, որ Լեռնային Ղարաբաղում ադրբեջանցիներն ավելի շատ դառնային, իսկ հայերի թիվը կրճատվեր: Ով այդ ժամանակ աշխատել է Լեռնային Ղարաբաղում, գիտի այդ մասին»:

Ադրբեջանի Հանրապետություն

Ադրբեջանի քաղաքական պատմության նորագույն շրջանն սկսվեց 1980-ականների երկրորդ կեսին, երբ ամբողջ ԽՍՀՄ-ում մեկնարկած քաղաքական և սոցիալ-տնտեսական փոփոխությունների պայմաններում Ադրբեջանում ևս առաջացան նոր իրողություններ. դրանց առանցքում հակահայկական շարժումն էր:

Ուշ խորհրդային շրջանում ադրբեջանական ազգայնական պայքարը սուր ծայրով ուղղվեց դեպի հայությունը: 1988 թ. Բաքվում՝ Լենինի հրապարակում, առաջին մեծ ցույցերն սկսվեցին «մա՛հ հայերին» վանկարկումներով: 1988 թ. փետրվարին տեղի ունեցավ սումգայիթյան ջարդը:

Արդեն այդ տարիներին ղարաբաղյան հարցը ամենահարմար միջոցն էր իշխանության համար պայքարող ուժերի, տվյալ դեպքում՝ «Գոյություն» (Varlıq) կազմակերպության և «Ադրբեջանի ժողովրդական ճակատի» (Azərbaycan Xalq Cəbhəsi) համար՝ ճնշում բանեցնելու երկրի կոմունիստական իշխանությունների վրա և ժողովրդի աչքերում նրանց ապալեգիտիմացնելու: Քաղաքական առաջնորդներն օգտվում էին լայն արձագանքից, որ ստեղծում էին հակահայկական տրամադրությունները ղարաբաղյան հարցի շուրջ, և իրենք էլ իրենց հերթին ահագնացնում էին այդ տրամադրությունները:

Հակամարտության սրման և պատերազմի փուլ թևակոխելուց հետո ղարաբաղյան թնջուկն ավելի վճռորոշ դեր խաղաց Ադրբեջանի ներքաղաքական կյանքում: Բացի այս՝ անհերքելի փաստ է, որ պատերազմը, ազգային վրեժի կոնցեպտը և թշնամու կերպարն զգալի ներդրում են ունեցել արդեն նոր ժամանակների պայմաններում ադրբեջանական ազգագոյացման գործընթացում:

Սկսած 1988 թ.-ից՝ պատերազմի հարցում ադրբեջանական ռազմավարությունը մեկն էր և շատ հստակ՝ հենվելով

սկզբում դեռևս գոյություն ունեցող կենտրոնի, իսկ վերջինիս կազմալուծումից հետո՝ մասամբ նորանկախ Ռուսաստանի հետ հարաբերությունների վրա՝ ուժի միջոցով հայերին դուրս մղել Ղարաբաղից՝ լուծելով հարցը «չկա մարդ, չկա խնդիր» սկզբունքով: Ռազմատեղագրական առումով փորձ էր կատարվում սրան հասնել ԼՂԻՄ ներսում և նրա շուրջ առկա ադրբեջանաբնակ գյուղերի և քաղաքների ամրացման և որպես ցատկահարթակ օգտագործման միջոցով: Սա էլ հուշեց հայկական կողմի ռազմավարական գերխնդիրը՝ ոչնչացնել և վերահսկել այն բոլոր հաղորդակցային ուղիները, բարձունքները, կրակակետերի վերածված ադրբեջանաբնակ և հայաթափված բնակավայրերն ու շրջանները, որտեղից թշնամին սպառնում էր Արցախի և Սյունիքի հայկական բնակավայրերին: Սա իրականացվեց 2 փուլով՝ 1991 թ. հոկտեմբեր – 1992 թ. մայիս՝ բուն ԼՂԻՄ տարածքի մաքրագործումը և 1992 թ. դեկտեմբեր – 1993 թ. նոյեմբեր՝ ԼՂԻՄ-ին հարակից պատմական հայկական տարածքների ազատագրումը:

Հայկական կողմի պատերազմական հաջողություններին էապես նպաստեց նաև Ադրբեջանում տնտեսական և քաղաքական բարդությունների հետևանքով վրա հասած իշխանության ճգնաժամը, ինչի արդյունքում 1 տարվա մեջ երկրում 2 անգամ տեղի ունեցավ իշխանափոխություն: Այսպես՝ 1991 թ. սեպտեմբերի 8-ին առաջին նախագահական ընտրություններում հաղթած Այազ Մութալիբովը ներքաղաքական պայքարում տանուլ տվեց Խոջալուի (1992 թ. փետրվար) և Շուշիի (1992 թ. մայիս) անկման պատճառով: Այդ ալիքի վրա իշխանության եկած «Ադրբեջանի ժողովրդական ճակատը»՝ Աբուլֆազ Էլչիբեյի գլխավորությամբ նույն կերպ իշխանությունից հեռացվեց 1993 թ. հունիսին. իրադարձային առիթն այդ անգամ Քյալբաջարի (Քարվաճառ) շրջանի և Լաչինի (Քաշաթաղի) շրջանի հյուսիսային հատվածի անկումն էր (1993 թ. ապրիլ): Արդեն 1993 թ.-ի փետրվարի դրությամբ ԼՂՀ ՊԲ ստո-

բաբաժանումների ձևավորումը վերջնական տեսք էր ստացել և ռազմաճակատում՝ հիմնականում Մարտակերտի շրջանում, Ադրբեջանն սկսեց պարտությունը պարտության հետևից կրել, ինչի գագաթնակետը հանդիսացավ վերոնշյալ շրջանների ռազմակալումը հայկական ուժերի կողմից:

Քյալբաջարի անկումը ծայրահեղ կերպով վատացրեց Ադրբեջանի զորքի և իշխանական շրջանակներում բարոյա-հոգեբանական կացությունը. սկսվեցին կադրային զտումներ, Բաքվում մտցվեց պարետային ժամ: Պաշտպանության նախարար Ռահիմ Ղազիևն ազատվեց պաշտոնից:

Փոխարենն այդ ընթացքում աճել էր Գանձակում (Գյանջյա) տեղակայված հրամանատար Սուրաթ Հուսեյնովի հեղինակությունը: Վերջինս, պատերազմի սկզբում չունենալով ռազմական կրթություն, հավաքագրել էր կամավորների ջոկատ և 1992թ. հունիսին մասնակցել Մարտակերտի գրոհին: Այդ կապակցությամբ 1992 թ. հուլիսի 2-ին նախագահ Ա. Էլչիբեյի հրամանագրով ստանձնել էր փոխվարչապետի լիազորությունները և նշանակվել Ադրբեջանի նախագահի արտակարգ և լիազոր ներկայացուցիչը Ղարաբաղի և հարակից շրջանների հարցով: Սակայն 1993 թ. փետրվարին՝ մարտակերտյան ուղղությամբ հայկական կողմի հակահարձակման օրերին, հակասություն առաջացավ Բաքվի և Ս. Հուսեյնովի միջև, որի ինքնակա գոյությունն ու իշխանությունը մտահոգում էին Ա. Էլչիբեյին: Այս ամենի հետևանքով Ս. Հուսեյնովն ազատվեց զբաղեցրած պաշտոնից: Ի պատասխան սրա՝ վերջինս ռազմաճակատում գործող իր ուժերի զգալի մասը հետ քաշեց Գանձակ (Գյանջյա): Այն բանից հետո, երբ 1993 թ. մայիսի 28-ին ռուսական զորքերը հեռացան Գանձակից, կառավարական ուժերն սկսեցին գրոհել ապստամբ գնդապետի բազան: «Թայֆուն» անունն ստացած այս օպերացիան, սակայն, ձախողվեց, և արդեն հունիսի 10-ին հենց Հուսեյնովի խմբավորումներն սկսեցին գրոհել Բաքվի ուղղու-

թյամբ: Հունիսի 17-ի լույս 18-ի գիշերը Ա. Էլչիբեյը քաշվեց ծննդավայր Նախիջևան և այդուհետ դադարեց քաղաքական լուրջ դերակատարում ունենալ Ադրբեջանի կյանքում:

Կենտրոնաձիգ իշխանության թուլության պայմաններում տեղաբնիկ ոչ թյուրքական ժողովուրդների կողմից ևս նախաձեռնվեցին ինքնավարության կամ անկախության հռչակման գործընթացներ (հիշատակության է արժանի 1993 թ. հունիսից օգոստոս գոյություն ունեցած Թալիշ-Մուղանական Ինքնավար Հանրապետությունը):

Օգտվելով իշխանության վակուումից, ինչպես նաև բնակչության շրջանում տիրող տրամադրություններից՝ 1993 թ. ամռանն իշխանության վերադարձավ Հ. Ալիևը, որին ի վերջո հաջողվեց վերակազմակերպել պետական ապարատը և հաստատել կայուն կենտրոնաձիգ իշխանություն: Փորձ կատարվեց նաև 1993-1994 թթ. ձմռան ամիսներին լայնամասշտաբ հարձակման միջոցով ճեղքել հայկական պաշտպանությունը և վերականգնել կորուսյալ բնակավայրերը, սակայն հայկական կողմի արհեստավարժ և անձնազոհ դիմադրության շնորհիվ ռազմաճակատի գիծն ստաբիլացավ այն կետում, որում այն այսօր կա, ինչն ստիպեց Հ. Ալիևին 1994 թ.-ի մայիսին գնալ հրադադարի:

Դրանից հետո Ադրբեջանի ղեկավարությունը լծվեց և՛ սեփական դիրքերի, և՛ երկրի սոցիալ-տնտեսական կյանքի ամրացմանը: Հիշատակության են արժանի մի շարք միջազգային խոշոր նավթագազային ընկերությունների հետ «Դարի պայմանագրի» կնքումը, ՌԴ և Արևմուտքի հետ հարաբերությունների արդիականացումը, ինչպես նաև ենթակառուցվածքային մի շարք նախագծերի իրականացումը:

Միևնույն ժամանակ նավթարդյունահանող ավտորիտար երկրներին բնորոշ եղանակով գործող վերնախավը, որ այս դեպքում ներկայացված է կառավարող ընտանիքի տեսքով, իշխանական հարաբերությունների էությունը հանգեցրեց

արտաքին գործընկերներից արտարժույթով ստացվող եկամուտների քաղաքական կապիտալիզացիայի և երկրի ներսում դրա վերաբաշխման/«դոտացիայի» պրոցեսի: Ըստ որում, իշխանության նման բովանդակությունը հոգեհարազատ էր ադրբեջանական միջավայրին նաև սոցիալ-մշակութային անցյալի, ի մասնավորի՝ խանական վարչարարության փորձառության բերումով: Նման եղանակով «էժան փողի» առկայության շնորհիվ հնարավոր է դառնում վարչահրամայական և ճնշիչ ապարատի գործարկումը, քաղաքական ընդդիմախոսների լռեցումը և քիչ թե շատ միակազմ իշխանական բուրգի կառուցումը, որ բնորոշ են ինչպես Հ. Ալիևի իշխանության տարիներին, այնպես էլ նրա որդու՝ Ի. Ալիևի նախագահության առաջին շրջաններին:

2003 թ. Հ. Ալիևը մահացավ՝ որդուն՝ Իլհամ Ալիևին, ժառանգելով քաղաքականապես կայուն, ավտորիտար պետություն: Վերջինս շարունակեց ամրապնդել ավտորիտար կառավարման մոդելը, ինչի արդյունքում, ըստ էության, Ադրբեջանը վերածվեց բոնապետության: Այսպես, 2010 թ. Միլլի մեջլիսի ընտրություններում առաջին անգամ ո՛չ ընդդիմադիր «Մուսավաթից», ո՛չ «Ադրբեջանի ժողովրդական ճակատից» որևէ պատգամավոր չընտրվեց՝ ազդարարելով ամբողջությամբ նախագահին ենթակա օրենսդիր մարմնի ձևավորումը:

Խոսելով Ի. Ալիևի նախագահության տարիների մասին՝ պետք է նշել, որ առհասարակ ամբողջ հետխորհրդային շրջանում Ադրբեջանի ներքին և արտաքին քաղաքականությունը, ինչպես նաև «հասարակական պայմանագիրը», այն է՝ իշխանությունների լեգիտիմացման պրոցեսը պայմանավորվել կամ ազդվել են երեք հիմնական գործոն-գործընթացներով՝ նավթարդյունաբերության երկրորդ «բումը», (միջ)կլանային պայքարը և Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը:

«Դարի պայմանագրի» կնքումից հետո, ինչպես նշել ենք, երկիր ներհոսող նավթադոլարները թույլ տվեցին աշխուժացնել տնտեսությունը և կառուցել քիչ թե շատ էֆեկտիվ պետական համակարգ: Ավտորիտար էլիտայի լեգիտիմացման այսօրինակ կերպը՝ «մենք՝ ձեզ փող, դուք մեզ՝ ենթակայություն», ավելի արտահայտիչ ու դյուրությամբ կիրարկելի դարձավ 2005 թ. -ից հետո, երբ նավթի վաճառքից ստացվող միջոցներն էականորեն աճեցին՝ պայմանավորված համաշխարհային շուկայում գների աճով և նավթարդյունահանման ծավալների մեծացմամբ: Արդյունքում՝ 2000 թ.-ին Ադրբեջանի ՀՆԱ-ն 5.3 միլիարդ դոլարից 2010 թ. հասավ 54.4 միլիարդ դոլար ցուցանիշի: Հետագա տարիներին նույնպես Ադրբեջանի բյուջետային մուտքերը թվային առումով շարունակել են մեծանալ՝ 2008 թ. 7.4 միլիարդ մանաթից 2018 թ. -ին հասնելով 20.1 միլիարդի:

Բյուջետային այսպիսի մուտքերը 2000-ականների ընթացքում թույլ են տվել իշխող վերնախավի տարբեր ներկայացուցիչներին ոչ միայն «ապահովելու հասարակական կարգը», այլև հիմնադրելու սեփական ընտանեկան հարստությունը և ֆինանսական «մինի-կայսրությունները»: Ըստ տարբեր աղբյուրների՝ Ադրբեջանի ամենահարուստ ընտանիքն Ալիևներն են[4]:

---

[4] Ըստ հետաքննական աղբյուրներում շրջանառվող տեղեկությունների՝ վերջիններիս ձեռքում է կենտրոնացած վառելիքի, հեռահաղորդակցության, հեռուստաալիքների, մեծածախ առևտրի, նավթարդյունաբերության շուկայի նշանակալի մասը:

Ալիևներին կապակցյալ Փաշաների ընտանիքը, որից սերում է Մեհրիբան Ալիևան, լուրջ շահաբաժիններ ունի բանկային ոլորտում, շինարարության, հեռուստաալիքների, կապի, տեղեկատվական տեխնոլոգիաների, օծանելիքի արտադրության ոլորտում: Ընդունված է համարել, որ Փաշաների ունեցվածքը գրեթե հավասար է Ալիևների ունեցվածքին:

Ազդեցիկ դիրք ունի նաև Քյամալադդին Հեյդարովի ընտանիքը, որ երկար տարիներ զբաղեցրել է պետական մաքսային կոմիտեի, ապա արտակարգ իրավիճակների նախարարության (փաստացի՝ կիսառազմականացված

Ադրբեջանական վերնախավը բաղկացնող առանձին օլիգարխիկ ընտանիքները և անհատները պարբերաբար գտնվում են վերադասավորումների մեջ, որոնք հաճախ արտացոլվում են պետական պաշտոնյաների փոխատեղումներում, ինչպես նաև աղմկահարույց դատական գործերում:

Ադրբեջանի նորագույն շրջանի պատմության նոր շրջափուլը կարելի է համարել 2013-2014 թ, որը պայմանավորված է նավթի գների անկմամբ: Տեղին է նկատել, որ նավթային սեկտորում շուրջ 5.8% անկում առաջին անգամ արձանագրվել էր 2011-2012 թվականներին՝ 1996 թ. -ից սկսյալ առաջին անգամ դանդաղեցնելով երկրի տնտեսական աճը: Պատմականորեն հենց այս շրջանի հետ են համընկնում ԼՂ հակամարտության հարցով իրապես առարկայական բանակցությունների տապալումը (Կազան, 2011 թ. հունիս) և դրան հաջորդած դիպուկահարների, ապա նաև դիվերսիոն-խրամատային պատերազմները (ակտիվացման սկիզբը՝ 2014 թ. հունվար), ուսումնամարզական թռիչք իրականացնող հայկական ուղղաթիռի խոցումը (2014 թ. նոյեմբերի 12), և էսկալացիայի բարձրակետը հանդիսացող 2016 թ. ապրիլյան մարտերը: Հակամարտության և վերջինիս առարկայական բանակցային փուլի փաստացի սառեցման պայմաններում ռազմական էսկալացիան Ադրբեջանի միակ գործիքն է՝ թույլ չտալու, որ սեփական հասարակությունը և միջազգային հանրությունը «մոռանան» ԼՂ խնդրի մասին: Արտաքին աշխարհում սա թույլ է տալիս յուրովի ասելիք ունենալ տարածա-

---

կառույց) ղեկավարի պաշտոնները: Հեյդարովները տիրապետում են մրգային հյութերի, շինանյութի, բետոնի, ասֆալտի, քիմիկատների, աղյուսի, կաշվի, տեքստիլի, կաթի, ալկոհոլի և սպիրտի արտադրության ոլորտներին, ինչպես նաև կարևոր մասնաբաժիններ ունեն բանկային, զբոսաշրջային և գյուղատնտեսության ոլորտներում:

Երկրի գերհարուստ անձանցից են նաև պետական նավթային ընկերության՝ SOCAR-ի ղեկավար Ռովնաղ Աբդուլաևը, «Ադրբեջանական ավիաուղիներ» ՓԲԸ նախագահ Ջահանգիր Ահմադովը և այլոք:

շրջանային խաղաղության համանվագում, իսկ ներքին աշխարհում՝ տնտեսական բարդությունների հետնապատկերին՝ մոբիլիզացնել հասարակությունն արտաքին (ռազմական) օրակարգի և թշնամու կերպարի շուրջ:

Ալիևների ընտանիքի ձեռքում իշխանության պահպանման տեսանկյունից կարևոր իրադարձություն էր 2016 թ. սահմանադրական փոփոխությունների հանրաքվեն: Մասնավորապես՝ երկարացվեց նախագահական կառավարման ժամկետը՝ 5-ից դառնալով 7 տարի, նախագահն ստացավ Միլլի մեջլիսը ցրելու և արտահերթ նախագահական ընտրություններ անցկացնելու իրավունք: Բացի այդ՝ սահմանվեց առաջին փոխնախագահի պաշտոնը, որը նախագահի լիազորությունների վաղաժամկետ դադարի դեպքում ստանձնելու էր երկրի ղեկավարի գործառույթները (նախկինում՝ փոխանցվում էր վարչապետին): Հանվեց նաև նախագահ ընտրվելու տարիքային շեմը (նախկինում՝ 35 տարեկանից բարձր):

Սահմանադրական բարեփոխումները շարունակությունը եղան 2015 թվականին իշխանական վերնախավում մեկնարկած կադրային փոփոխությունների քաղաքականության, որը նպատակ ուներ վերաբաշխելու ռեսուրսներն ու իշխանական լծակները՝ դրանք կենտրոնացնելով Ալիևների ընտանիքի և նրանց լոյալ երիտասարդ տեխնոկրատ կադրերի վրա:

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ադրբեջանի տնտեսությանը կառուցվածքային առումով բնորոշ են կենտրոնական պլանայինից շուկայականի անցման, ինչպես նաև ածխածնաջրածնային պաշարների արտահանման վրա հենվող համակարգի բաղադրիչներն ու օրինաչափությունները: Հատկանշական է, որ 2017 թ. դրությամբ նավթային սեկտորը կազմել է երկրի ՀՆԱ-ի կեսից քիչը՝ միևնույն ժամանակ շարունակելով կազմել արտահանման մեծ մասը՝ շուրջ 86-90% (չնայած արդյունահանվող նավթի ծավալների կրճատմանը): Սա անուղղակի կերպով վկայում է այն մասին, որ Ադրբեջանի ՀՆԱ-ն ձևավորող տնտեսության մյուս ճյուղերի կենսունակությունը նույնպես պայմանավորված է երկիր մուտք գործող նավթագազային եկամուտներից:

Նավթագազային ոլորտ և էլեկտրաէներգիա

ԽՍՀՄ փլուզումից հետո նախկին միութենական այն հանրապետությունները, որ չունեին նավթագազային պաշարներ, այս կամ այն չափով և փոփոխական հաջողություններով լծվեցին բազմաճյուղ (դիվերսիֆիկացված) տնտեսական համակարգ կառուցելուն: Ինչ վերաբերում է այդպիսի պաշար ունեցող երկրներին, այդ թվում՝ Ադրբեջանին, ապա վերջիններս հետսովետական-հետարդյունաբերական տնտեսական փլուզումից վերականգնվելու, օտարերկրյա ներդրումներ գրավելու և «արագ փողի» գոյացման համար ձեռնամուխ եղան նավթի և գազի վաճառքի միջոցով ազգային տնտեսություն ձևավորելուն:

Այսպես, 1994 թ. սեպտեմբերի 20-ին Բաքվի «Գյուլիստան» պալատում Ադրբեջանի և 7 այլ երկրների (ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Ռուսաստան, Թուրքիա, Նորվեգիա, Ճապոնիա, Սաուդյան Արաբիա) 13 առաջատար նավթային ընկերություն-

ների միջև ստորագրվեց պայմանագիր Կասպից ծովի ադրբեջանական հատվածի «Ազարի», «Չիրաղ» և «Գյունաշլու» նավթահանքերի խորքաշերտերում գտնվող նավթի համատեղ արդյունահանման մասին: Պայմանագրի արժողությունը 7.4 մլրդ դոլար էր: Իր տարողունակության և նախատեսվող աշխատանքների մեծության համար սա անվանվել է «Դարի պայմանագիր»:

Հետսառըպատերազմյան տարիներին Ադրբեջանի էներգետիկ քաղաքականության շահը շատ դեպքերում համընկել է ԵՄ և ԱՄՆ տարածաշրջանային, ինչպես նաև ազգային անվտանգային շահերի հետ: Ի սկզբանե նպատակ էր դրված, որ ադրբեջանական նավթը պետք է հասնի նաև եվրոպական շուկա՝ նպաստելով դիվերսիֆիկացման միջոցով եվրոպական էներգետիկ անվտանգության ամրապնդմանը: 1999 թ. Թուրքիայի, Ադրբեջանի և Վրաստանի միջև կնքվեց եռակողմ միջկառավարական համաձայնագիր Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի կառուցման մասին, որն իրականություն դարձավ 2006 թ.-ին՝ ադրբեջանական նավթը հասցնելով մինչև հարավարևելյան Միջերկրական:

Նույն թվականին շահագործման է հանձնվել նաև Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազատարը, որով հաջորդ տարի ադրբեջանական «Շահդենիզ» գազակոնդենսատային հանքավայրի (բացահայտված 1999 թ.) գազն սկսել է հասնել Թուրքիա: Եվս 5 տարի անց՝ 2011 թ., հայտարարվել է Անդրկովկասյան բնական գազի խողովակաշարի (TANAP) կառուցման մասին, որի բացումը տեղի է ունեցել 2018 թ.-ի հունիսին: Նախատեսվում է, որ TANAP-ը միացվելու է Անդրադրիատիկյան խողովակաշարին (TAP), որով ադրբեջանական «Շահդենիզ» հանքավայրի գազը հասցվելու է մինչև Իտալիա:

Ըստ մասնագիտական գնահատումների՝ 2017 թ. վերջի դրությամբ ադրբեջանական նավթի ապացուցված պաշար-

ների հարաբերակցությունն արտադրության հետ 24.1 է, որից հետևում է, որ արդյունահանման ներկայիս տեմպերի պահպանման և նոր հանքավայրերի չբացահայտման դեպքում նավթը կհերիքի ևս 24 տարի: Իրականում, սակայն, արդյունահանման տեմպերի ներկայիս նվազման պարագայում այդ ժամանակն ավելի կերկարի, սակայն ինչ-որ պահից նավթը կսկսի բավականացնել միայն ներքին պահանջարկին:

Ադրբեջանը, լինելով էլեկտրաէներգիայի արտադրման տեսանկյունից ինքնաբավ պետություն, էլեկտրաէներգիայի փոխանակություն է իրականացնում Հայաստանից զատ՝ իր բոլոր հարևանների հետ: Ադրբեջանում գործում է շուրջ 41-42 էլեկտրակայան Ամենախոշորներն են «Ադրբեջան» (2400 ՄՎտ), Շիրվանի (1050 ՄՎտ) ջերմաէլեկտրակայանները և այլն:

Գյուղատնտեսություն

1990-ականների տնտեսության քայքայումը բացասաբար է անդրադարձել Ադրբեջանում գյուղատնտեսության ոլորտի վրա: Դրա պատճառների շարքում առաջնահերթ կերպով կարելի է թվարկել խոշոր տնտեսվարող սուբյեկտների կազմալուծումը, վերջիններիս՝ նախկին միութենական հանրապետությունների հետ ունեցած տարատեսակ կապերի թուլացումը, ինչպես նաև այս ոլորտում երկրի տեխնոլոգիական հետամնացությունը: Աստիճանաբար, սակայն, «նավթադոլարների» շնորհիվ ամբարվող ֆինանսների, ինչպես նաև երկրի ընդհանուր կարգաբերման շնորհիվ, սկսած 1996 թ.-ից, հնարավոր դարձավ կենսական նշանակության բարեփոխումներ իրականացնել նաև գյուղատնտեսության ոլորտում: Այսպես, եթե 1995 թ. գյուղատնտեսության ոլորտում աշխատում էր ամբողջ զբաղված բնակչության 30.8%-ը, 2006թ.-ին՝ 39.1%-ը, ապա 2015 թ. սկզբում՝ 36.7%-ը: Ճգնաժամային

տարիներից հետո զբաղվածների թվի աճը, այնուհետև 9 տարվա ընթացքում՝ նվազումը համահունչ է զարգացման համանման ուղի անցած երկրների պատկերներին և նշանակում է, որ Ադրբեջանն ընթանում է գյուղատնտեսության կառուցվածքային և տեխնոլոգիական զարգացման ճանապարհով, ինչն անխուսափելիորեն ուղեկցվելու է ոլորտում զբաղվածների թվի նվազմամբ և ՀՆԱ մեջ ոլորտի մասնաբաժնի մեծացմամբ:

Երկրի բնակլիմայական պայմաններում զարգացած են գյուղատնտեսության գրեթե բոլոր հիմնական ճյուղերը՝ այգեգործություն, ծխախոտագործություն, բամբակագործություն, կարտոֆիլի մշակում, ձկնորսություն, թեյի մշակում, խաղողագործություն, մրգերի մշակում, ծաղկի մշակում, ոչխարաբուծություն, ձիաբուծություն, տավարաբուծություն, մեղվաբուծություն, ուղտաբուծություն, թռչնաբուծություն և այլն:

2012 թ. Ադրբեջանում արտադրված ՀՆԱ-ի 5.7%-ն է բաժին ընկել գյուղատնտեսությանը, 2014 թ.-ին՝ 5.3%, իսկ արդեն 2015 թ.՝ 6.2%-ը: Նույն 2015 թ. անասնապահական մթերքների աճը եղել է 2.5%, բուսաբուծականինը՝ 11.3%: Անասնաբուծության ակտիվ զարգացումը խոչընդոտում են տեխնոլոգիական թերացումները և կերային բազայի հետ կապված խնդիրները: Ինչ վերաբերում է գյուղմթերքների արտահանմանը, ապա առաջատար դիրքերում են միրգ-բանջարեղենը (2015 թ. դրությամբ՝ 312 միլիոն ԱՄՆ դոլարի):

Ներկայումս Ադրբեջանում պետականորեն փորձ է արվում գյուղատնտեսական արտադրության ոլորտում անցում կատարել ավելի խոշոր տնտեսվարող սուբյեկտների կամ այսպես ասած՝ «ֆերմերային տնտեսությունների» ձևակերպին:

Արդյունաբերություն

Ադրբեջանական արդյունաբերության քարշակն, անշուշտ, նավթի և գազի արդյունահանումը և վերամշակումն են: Տնտեսության կառուցվածքային խնդիրներից է մեկ գերակա ճյուղից կախվածության արդյունքում արդյունաբերական մյուս ոլորտների աճի՝ նույնպես գերազանցապես նավթագազային եկամուտներից կախյալ լինելը: Բացի (նավթ)արդյունահանող արդյունաբերության ճյուղից՝ երկրում համեմատաբար զարգացած են նաև ավտոմեքենաշինությունը (այդ թվում՝ կցորդիչների և կիսակցորդիչների արտադրությունը), կահույքագործությունը, մեքենաշինությունը, ալկոհոլային խմիչքի արտադրությունը, թղթի և ստվարաթղթի արտադրությունը, քիմիական արդյունաբերությունը, դեղագործությունը, փայտի վերամշակումը, շինանյութի արտադրությունը, մետալուրգիան, մորթու և մորթե նյութերի, կոշիկների արտադրությունը և այլն: 21-րդ դարում կառուցված կամ գործարկված առավել խոշոր արդյունաբերական ձեռնարկություններից հիշատակության են արժանի ժամանակակից պողպատաձուլարանը (2001 թ.), Իմիշլիի շաքարի գործարանը (2006 թ.), Սումգայիթի տեխնոլոգիական պարկերը (2009 թ.), Սումգայիթի քիմիական արդյունաբերության և Բալախանիի արդյունաբերական պարկը (2011 թ.), Գանձակի ալյումինի համալիրը (2012 թ.), Նախիջևանի ցեմենտի գործարանը (2012 թ.), Ղազախի ցեմենտի գործարանը (2013 թ.), Սումգայիթի տեքստիլի պարկը (2013 թ.), Բաքվի նավաշինական գործարանը (2013 թ.), Հաջիղաբուլի (2017 թ.) և Մասալլուի (2018 թ.) արդյունաբերական թաղամասերը և այլն:

Վերջին տարիներին Ի. Ալիևի անձնական վերահսկողությամբ ջանքեր են գործադրվում տնտեսության ոչ նավթային սեկտորը (qeyri-neft sektoru) զարգացնելու համար: Այս առումով նշանակալի տեղ են զբաղեցնում զբոսաշրջության և

ծառայությունների մատուցման ոլորտները, որոնք որոշակի զարգացում են ապրել[5]: Տնտեսության կարևորագույն ճյուղերից է շարունակում մնալ շինարարությունը:

Չնայած տնտեսության՝ վիճակագրական ցուցանիշներով պարբերաբար հաղորդվող քանակական բարելավումներին՝ ակնհայտ է, որ Ադրբեջանի տնտեսության ներկայիս կառուցվածքի պայմաններում ոչ նավթային սեկտորը կախված է լինելու նավթային սեկտորից եկող եկամուտներից:

Ադրբեջանում դրամավարկային քաղաքականությունը իրականացնում է Ադրբեջանի Կենտրոնական բանկը: Երկրի ազգային արժույթը մանաթն է (մանրադրամը գյափիքն է, 1 մանաթը հավասար է 100 գյափիքի):

[5] Զբոսաշրջության աճի բարձր տեմպերը ապահովվում են առաջին հերթին ի հաշիվ Պարսից ծոցի և Հեռավոր Արևելքի երկրներից զբոսաշրջային մեծ հոսքերի շնորհիվ:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Ժողովրդագրություն

Ադրբեջանի վերաբերյալ ժողովրդագրական բոլոր պաշտոնական հաշվարկները, որոնք ներկայացվում են Ադրբեջանի պետական վիճակագրական կոմիտեի կողմից, կարիք ունեն լրացուցիչ ճշգրտման: Հաշվի առնելով պետության ծայրահեղ ավտորիտար բնույթը՝ վիճակագրական տվյալներն իշխանությունների համար հանդիսանում են քարոզչական կարևորագույն գործիքները: Հետևաբար՝ ներկայացվող պաշտոնական տվյալները հաճախ ամբողջովին խեղաթյուրված են:

Առաջին հերթին վիճակագրական տվյալները չեն արտացոլում ժողովրդագրական իրական պատկերը: Ըստ պաշտոնական տվյալների՝ Ադրբեջանում բնակվում է ավելի քան 10 միլիոն մարդ (2019 թ. հուլիսի տվյալներով): Սակայն հաշվի առնելով բնակչության թվաքանակի չափման մի շարք լրացուցիչ տվյալներ (բնակֆոնդի ցուցանիշներ, ընտրողների ցուցակներ, ծնելիության լրացուցիչ ցուցանիշներ և այլն)՝ վստահորեն կարելի է պնդել, որ ներկայացված թիվը և դրանից բխող այլ ցուցանիշները չեն համապատասխանում իրականությանը:

Մասնավորապես՝ տարբեր գնահատումների վրա հիմնվելով՝ կարելի է նշել, որ Ադրբեջանի բնակչությունը 2019 թ. դրությամբ կազմում է շուրջ 6 միլիոն 165 հազար մարդ (որից ոչ ավելին, քան 200 հազարը բնակվում են Նախիջևանի Ինքնավար Հանրապետությունում):

Ադրբեջանից արտագաղթը կազմում է տարեկան շուրջ 80 հազար մարդ:

Երկրի բնակչության մեծամասնությունը կազմում են քաղաքաբնակները (ընդհանուր բնակչության ավելի քան 52%-ը)։ Մայրաքաղաք Բաքվում բնակվում է շուրջ 2.2 միլիոն մարդ։

Էթնիկական քարտեզ

Ադրբեջանում ապրում են բազմաթիվ տեղաբնիկ ժողովուրդներ և ազգային փոքրամասնություններ, որոնց իրական թվաքանակը չի արտացոլվում մարդահամարների տվյալներում և պաշտոնական այլ վիճակագրություններում։ Հաշվի առնելով նաև պետության ավտորիտար և փակ բնույթը՝ Ադրբեջանի բնակչության ազգային կազմի վերաբերյալ համապարփակ տվյալները բացակայում են կամ խիստ թերի են։ Միևնույն ժամանակ, ըստ մոտավոր հաշվարկների, Ադրբեջանում թյուրքախոսների կողքին բնակչության մի զգալի մասն են կազմում թալիշները, թաթերը, լեզգիները, ավարները և այլ տեղաբնիկ ժողովուրդներ։

Համաձայն 2009թ. մարդահամարի պաշտոնական տվյալների[6] «ադրբեջանցիները» կազմում են ամբողջ բնակչության շուրջ 92%-ը։ Սակայն, ըստ տարբեր աղբյուրներում տեղ գտած հաշվարկների հեղինակային վերլուծության, այդ թիվը տատանվում է 70-80%-ի սահմաններում։

Ադրբեջանական Հանրապետության արդի էթնիկական քարտեզը ձևավորող ժողովուրդներին, ըստ լեզվական պատկանելության, կարելի է պայմանականորեն բաժանել 4 հիմնական խմբի, որոնք են՝

[6] Ադրբեջանի Հանրապետության տարածքում վերջին մարդահամարն անցկացվել է 2019թ. աշնանը։ Տեղեկագրքի հրատարակության պահին պաշտոնական արդյունքները հրապարակված չեն եղել։

- **Թյուրքախոսներ**
  Նրանց թվում են մեծամասնություն կազմող կամ «տիտղոսակիր» այն ադրբեջանցիները, որոնք մինչև 20-րդ դարի 30-ական թվականները ավելի շատ հայտնի են եղել «անդրկովկասյան թաթարներ», «կովկասյան թ(յ)ուրքեր» կամ տարածքի մնացած բոլոր իսլամադավան ժողովուրդների հետ՝ ընդհանրական «(անդր)կովկասյան մուսուլմաններ» անվանումներով: Կառուցարկվող «ադրբեջանցի» էթնոսի ձևավորման գործում մեծ դեր է խաղացել և շարունակում է խաղալ քաղաքացիություն դենոմինացնող «ադրբեջանցի» եզրի մանիպուլյատիվ կիրառությունը և դրա տարածումը էթնիկական մակարդակում, երբ Ադրբեջանի Հանրապետության քաղաքացի թալիշը կամ ավարը որպես «ադրբեջանցի» (Ադրբեջանի քաղաքացիություն ունեցող) նույնացվում են «ադրբեջանցի» էթնիկական ինքնագիտակցության կրող թյուրքախոսների հետ: Այս խմբի մեջ են մտնում նաև թյուրքախոս մի շարք ենթաէթնիկական խմբեր, այդ թվում՝ փադար, շահսևան, այրում, քանգարլի, մուղանլու, թաքյալու, բայաթ, ալփաուտ, ահմադլի ցեղերի ներկայացուցիչները և այլք:

- **Իրանախոսներ**
  Այս խմբի թվում են թալիշները, կովկասյան պարսիկները (թաթեր) և քրդերը: Նշվածներից առաջինների կոմպակտ բնակության գոտին ադրբեջանական հանրապետության հարավային հատվածն է, որը ներառում է Բիլասուվարի, Ջալիլաբադի, Լերիքի, Մասալուի, Յարդմլուի, Ասթարայի և Լենքորանի վարչական

շրջանները[7]: Կովկասյան պարսիկների բնակության գոտին երկրի տարածքի հյուսիս-արևելյան հատվածն է, որի հարավային սահմանը Ապշերոնյան թերակղզին է, իսկ հյուսիսայինը՝ Խաչմազի վարչական շրջանը: Վերջիններիս կոմպակտ բնակության միակ վայրը Ղուբայի շրջանի Ղըրմըզը Ղասաբա գյուղն է: Քրդերը, որոնք թվաքանակով զիջում են վերոնշյալ երկու իրանական ժողովուրդներին, այսօր չունեն բնականության մեկ հիմնական կոմպակտ շրջան, այնուամենայնիվ, առավելապես կենտրոնացած են Նախիջևանի Ինքնավար Հանրապետությունում:

- **Քարթվելախոսներ**
  Այս խմբի մեջ են մտնում վրացիները և ինգիլոյները, որոնք հիմնականում բնակվում են Ադրբեջանի Հանրապետության հյուսիս-արևմտյան հատվածում, մասնավորապես՝ Ղախի շրջանում: Ըստ դավանական պատկանելության՝ ինգիլոյները բաժանվում են երկու խմբի՝ քրիստոնյաներ և մուսուլմաններ (սուննի):

- **Կովկասալեզուներ**
  Սրանց թվում են ուտիները, ավարները, լեզգիները, ծախուրները, ռուտուլները և այսպես կոչված շահդաղյան ժողովուրդները (բուդուղներ, խինալուղներ, ղրիզներ): Ուտիները բնակվում են գերազանցապես Ղաբալայի (պատմական Կապաղակ) վարչական շրջանում, ավարները՝ Ձաքաթալայի և Բալաքանի, լեզգիները՝ Ղուսարի, Խաչմազի, Օղուզի, Շաքիի, Իսմայիլիի, Ղաբալայի, Ղուբայի, Սումգայիթի վարչական շրջաններում, նաև՝ Բաքու քաղաքում: Ծախուրների

[7] Հենց նշված շրջանների ներառմամբ է 1993 թ. հռչակվել Թալիշ-Մուղանական Ինքնավար Հանրապետությունը:

բնակության հիմնական գոտին Զաքաթալայի վարչական շրջանն է: Համեմատաբար սակավ թվաքանակով ծախուրներ կան նաև Ղախի շրջանում: Շահդաղյան ժողովուրդների տարածման արեալը նույնանում է բացառապես Ղուբայի և Խազմազի վարչական շրջանների աշխարհագրական սահմանների հետ:

- **Սլավոնախոսներ**
  Սլավոնախոսների թվում մեծը կազմում են ռուսները (119.300 մարդ՝ ըստ 2009 թ. մարդահամարի), համեմատաբար ավելի նվազ՝ ուկրաինացիները և մոլոկանները:

Ադրբեջանի Հանրապետության տարածքում կա նաև ոչ մեծաթիվ հրեական համայնք (9100 մարդ՝ ըստ 2009 թ. մարդահամարի), որոնք խոսում են կովկասյան պարսկերենի առանձին բարբառով՝ ջուհուրիով: Բնակվում են հիմնականում Բաքվում և Ղուբայի վարչական շրջանում:

Մինչև 1991 թ. Ադրբեջանի էթնիկական քարտեզի վրա նշանակալի տեղ են ունեցել նաև հայերը, սակայն Ադրբեջանի վարած հայատյաց քաղաքականության արդյունքում հայկական բնակչությունը հեռացել է այս երկրից (համաձայն պաշտոնական վիճակագրության՝ Ադրբեջանում հայերը կազմում են բնակչության շուրջ 1.4%-ը, ինչը չի համապատասխանում իրականությանը):

Կրոնական կյանք

Ադրբեջանը, համաձայն սահմանադրության, աշխարհիկ պետություն է, որի բնակչության ճնշող մեծամասնությունը (95-98%-ը) դավանում է իսլամ: Ըստ պաշտոնական տվյալների՝ շիայականության (ջաֆարիական դպրոցի) հետևորդ-

ները կազմում են Ադրբեջանի մուսուլմանների ընդհանուր թվի 85%-ը, իսկ մնացյալ 15%-ը դավանում են սուննիականություն (հանաֆիական դպրոց)։ Սակայն հաշվի առնելով պաշտոնական վիճակագրական տվյալների հաճախակի խեղաթյուրումը և անճշտությունը՝ շիա-սուննի հարաբերակցությունը կարող է տարբեր լինել (ըստ որոշ հաշվարկների՝ շիաները կազմում են 65%-ը, սուննիները՝ 15%-ը)։

Թեև անվիճարկելի է շիայականության հետևորդների մեծամասնության փաստը, սակայն վերոնշյալ վիճակագրական տվյալները խնդրահարույց են նաև այն պատճառով, որ Ադրբեջանում պատմականորեն շիայական և սուննիական ինքնությունների միջև բաժանումը շատ հստակ չէ[8]։ Իրավիճակը ավելի խրթին է դարձնում նաև այն հանգամանքը, որ Ադրբեջանի մուսուլմանների շրջանում բավական նկատելի է սուֆիական եղբայրությունների ազդեցությունը։

Ադրբեջանը բնակչության մեջ շիաների համամասնությամբ երկրորդն է Իրանի Իսլամական Հանրապետությունից հետո։ Շիաներն առավելապես բնակվում են երկրի կենտրոնական, հարավային և արևելյան, իսկ սուննիները՝ հյուսիսային և արևմտյան շրջաններում։ Շիայադավան են ադրբեջանցիները, իրանալեզու տեղաբնիկ ժողովուրդները (թալիշներ, մասամբ՝ թաթեր[9] և այլն)։ Տեղաբնիկ ժողովուրդներից սուննիականության հետևորդներ են լեզգիները, ծախուրները, ավարները և այլն։

---

[8] Ուշագրավ է, որ կրոնական ու մշակութային բազմազանության և հանդուրժողականության պետական քարոզչաթեզերի ծիրում, ինչպես նաև կամենալով «բալանսավորել» երկրի կրոնական/իսլամական կյանքը և այն վարել իշխանահաճո հունով՝ Ադրբեջանի իշխանությունները 2014 թ. դեկտեմբերին Բաքվում բացված Հեյդարի մզկիթը նշանակել են որպես միասնադավան (vəhdət məscidi). այստեղ նամազ են անում և՛ սուննիական ծեսով, և՛ շիայական։

[9] Ղուբայի թաթերը սուննիադավան են։

Ադրբեջանի կրոնական կյանքում կարևոր դեր է խաղում շեյխուլիսլամը՝ «Կովկասի մուսուլմանների վարչության» ղեկավարը: Այս վարչությունը համարվում է Կովկասի մուսուլմանների հոգևոր-վարչական բարձրագույն կառույցը, որի ղեկավարը շիա է, իսկ տեղակալը՝ սուննի: 1980 թ.-ից շեյխուլիսլամի պաշտոնը ցմահ զբաղեցնում է Ալլահշուքյուր Փաշազադեն:

Ադրբեջանի մուսուլմանների վրա մեծ է արտաքին ազդեցությունը: Այս առումով անհրաժեշտ է առանձնացնել Իրանի մեծածավալ և երբեմն՝ ընդհատակյա ազդեցությունը շիայականություն դավանող բնակչության վրա: Բավական մեծ է նաև Թուրքիայի ազդեցությունը սուննիական բնակչության վրա: Ադրբեջանի քաղաքական ղեկավարությունը պարբերաբար պայքար է մղում հատկապես իրանական ազդեցության դեմ՝ համարելով այն սպառնալիք իր անվտանգությանը (իրանական ազդեցությամբ գործող շիայական խմբերի թեման ծայրաստիճան քաղաքականացված է ժամանակակից Ադրբեջանում):

Այդ պատճառով շիայական հոգևոր առաջնորդները և հասարակական գործիչները, ինչպես նաև կրոնական կազմակերպությունները մշտապես գտնվում են վերահսկողության տակ՝ հաճախ ենթարկվելով ճնշումների, ազատության սահմանափակումների և բռնության (օրինակ՝ արգելված է «Ադրբեջանի իսլամական կուսակցության» գործունեությունը, ձերբակալված են հայտնի գործիչները): Վերջին տարիներին իշխանություններն ուժեղացրել են կրոնական կյանքի վրա վերահսկողությունը՝ հանրային տարածքներում քրեականացնելով իսլամական կրոնական արարողությունները (2010 թ.-ից փաստացի գործում է պետական և կրթական հաստատություններում իսլամական գլխաշոր կրելու արգելքը, նախագահի հրամանով կրոնական խորհրդանիշները, կոչերը և հանրային ծեսերը (օրինակ՝ Աշուրայի արարողությունը)

թույլատրվում են միայն կրոնական հաստատության ներսում, առկա է կրոնական արգելված գրականության ցանկ, բարդացվել է կրոնական կազմակերպություններ գրանցման գործընթացը և այլն): Այս գործընթացին զուգահեռ՝ վերջին տարիներին նկատվում է իշխանությունների կողմից իսլամական հոետորաբանության ուժեղացում, ինչը ևս կոչված է վերահսկելու կրոնական կյանքը և «սեփական հունով» տանելու երկրում կրոնական կյանքի զարգացումը:

ԽՍՀՄ շրջանի գաղափարախոսական և քաղաքական ազդեցության պատճառով Ադրբեջանում մուսուլմանների մի նկատելի հատվածը ոչ թե օրինապահ հավատացյալ է, այլ միայն մասնակիորեն է հետևում իսլամական կենցաղավարությանը («մշակութային մուսուլման» կամ «նոմինալ մուսուլման»):

Ադրբեջանում բնակչության մի փոքր հատվածը դավանում է նաև քրիստոնեություն, հուդաիզմ և այլն: ԽՍՀՄ փլուզումից հետո երկրում տարածված են նաև տարաբնույթ կրոնական միավորումները (օրինակ՝ Եհովայի վկաներ, Հիսուսականներ և այլն):

Լեզու և գրականություն

Ադրբեջանի պետական լեզուն ադրբեջաներենն է: Այն պատկանում է ալթայան լեզվաընտանիքի թյուրքական լեզվախմբին (օղուզական ենթախումբ): Լեզվի ներկայիս տարբերակն սկսել է ձևավորվել 19-րդ դարի վերջին:

19-րդ դարում թյուրքախոս թաթարների կողմից օգտագործվում էր արաբատառ գիրը, որի բարեփոխման կոչերով պարբերաբար հանդես էին գալիս թաթար մտավորականները: Սակայն գրային համակարգի հիմնական փոփոխությունները տեղի ունեցան Ադրբեջանում խորհրդային կարգերի հաստատումից հետո: Այսպես, հանրության գրագիտու-

թյան մակարդակը բարձրացնելու, ինչպես նաև իսլամական/նախախորհրդային շրջանի ժառանգությունից կտրելու համար խորհրդային իշխանությունները որոշում կայացրին ադրբեջաներենի համար հաստատել լատինատառ այբուբենը (1923/1924թթ.), որի ներդրումն ընթացավ աստիճանաբար (զուգահեռաբար՝ լատիներենը որպես այբուբեն ներդրվեց նաև ԽՍՀՄ թյուրքախոս այլ ժողովուրդների մոտ): Սակայն արդեն 1930-ականներին թյուրքախոս ժողովուրդների հնարավոր միավորումը կանխելու (նկատի ունենալով Թուրքիայի գործոնը, որտեղ 1928 թ. ևս ընդունվել էր լատինատառ այբուբենը), ինչպես նաև խորհրդայնացումն արագացնելու համար Ստալինի միջնորդությամբ սկսվեցին քննարկումներ կյուրեղագրին անցնելու վերաբերյալ: Ի վերջո, 1939 թ. որոշում ընդունվեց անցում կատարել կյուրեղագրի՝ որոշ լրացումներով, որոնք պետք է առավել լավ արտահայտեին ադրբեջաներեն հնչյունները (որոշումն ուժի մեջ մտավ 1940 թ.):

Դեռևս ԽՍՀՄ գոյության վերջին երկու տասնամյակներում Ադրբեջանում կոչեր էին հնչում դարձյալ վերադառնալու լատինատառ այբուբենին (այդ ակտիվության ձևավորման վրա նկատելի ազդեցություն ուներ Թուրքիան): 1991 թ. դեկտեմբերի 25-ին անկախ Ադրբեջանի իշխանությունը որոշում է կայացնում վերականգնել լատինատառ գիրը: Համաձայն այդ որոշման՝ ժամանակակից ադրբեջաներենի այբուբենը բաղկացած է 32 տառից.

Aa, Bb, Cc, Çç, Dd, Ee, Əə, Ff, Gg, Ğğ, Hh, Xx, Iı, İi, Jj, Kk, Qq, Ll, Mm, Nn, Oo, Öö, Pp, Rr, Ss, Şş, Tt, Uu, Üü, Vv, Yy, Zz

Ժամանակակից ադրբեջաներենում առկա են մի շարք բարբառներ և խոսվածքներ, որոնք տարածված են գերազանցապես Ադրբեջանի Հանրապետության տարածքում: Դրանք ըստ աշխարհագրական տարածքի բաժանվում են 4 մեծ խմբի՝ *արևելյան* (Բաքվի, Ղուբայի, Շամախու բարբառ-

ներ, Լենքորանի ու Մուղանի խոսվածքներ), *արևմտյան* (Գյանջյայի, Ղազախի, Ղարաբաղի բարբառ, Այրումի խոսվածք), *հյուսիսային* (Շաքիի բարբառ, Ձաքաթալայի խոսվածք) և *հարավային* (Նախիջևանի և Օրդուբադի բարբառներ)։

Ադրբեջաներենը զարգացման ներկա փուլում առավել մեծ չափով կրում է գրական թուրքերենի ազդեցությունը։ Ժամանակակից գրական լեզվի բառաֆոնդում շարունակում են գերակշռել արաբերեն, պարսկերեն և ռուսերեն ծագման բառերը, որոնք փոխառվել են ուղղակիորեն կամ միջնորդավորված։

Բացի ադրբեջաներենից՝ Ադրբեջանում տարածված են տեղաբնիկ ժողովուրդների և ազգային փոքրամասնությունների լեզուները՝ թալիշերենը, լեզգիերենը, թաթերենը, քրդերենը և այլն։ Տարիքով ավագ սերնդի մոտ դեռևս շարունակում է մեծ տարածում ունենալ ռուսերենը, իսկ ավելի երիտասարդ սերնդի մոտ նկատելի է կողմնորոշումը դեպի թուրքերենը։

Ժամանակակից ադրբեջանական գրականության մեջ աչքի են ընկնում հատկապես այն գրողների ստեղծագործությունները, որոնց հեղինակները ապրում և ստեղծագործում են Ադրբեջանից դուրս։ Ազգությամբ ադրբեջանցի գրողներից մեծ ճանաչում է վայելում «Երիտասարդ Օրհան Փամուք» անունն ստացած Էյչին Սաֆարլին (Սեֆերլի)։ Նրա՝ մեծ մասամբ պոստմոդերնիստական ոճով գրված ստեղծագործությունների լեզուն ռուսերենն է, իսկ հիմնական թեմատիկան՝ արևելյան մշակույթն ու սերը (հայտնի ստեղծագործություններից են «Բոսֆորի քաղցր աղը», «Ես կվերադառնամ», «Հազար ու երկու գիշեր. մերոնք արևելքում», «Բոսֆորի լեգենդները», «Երջանկության բաղադրատոմսերը», «Պատմի՛ր ինձ ծովի մասին»)[10]։

[10] Վերջին աշխատանքը թարգմանվել է ադրբեջաներեն 2018 թվականին։

Շարունակում են մեծ հեղինակություն վայելել նաև այն գրողները, որոնք սկսել են ստեղծագործել խորհրդային շրջանում: (հիշատակության է արժանի գրող Անարը): Վերջին շրջանի ամենահայտնի գրական ստեղծագործություններից է գրող Աքրամ Այլիսլիի «Քարե երազներ» վեպը (գրքում հիշատակված են 1990 թվականին Բաքվում հայերի դեմ իրականացված դեպքերը, որոնց անդրադառնալու պատճառով գրողի դեմ սկսվել են հալածանքներ սեփական երկրում):

Քաղաքական թեմատիկայով ստեղծագործություններով ժամանակակից գրողներից աչքի է ընկնում ծագումով ադրբեջանցի Ղուրբան Սայիդը (հիշատակության է արժանի «Ալի և Նինո» վեպը):

Կրթություն և գիտություն

Ադրբեջանում գիտական և կրթական ժամանակակից համակարգերը գերազանցապես կառուցված են խորհրդային ժառանգության հիման վրա: Միևնույն ժամանակ ԽՍՀՄ փլուզումից հետո իրականացվել են մի շարք բարեփոխումներ, որոնց հիմքում ընկած էին արևմտյան և թուրքական գիտակրթական մոդելները: Նշված ոլորտները համակարգում է Ադրբեջանի կրթության նախարարությունը:

Ադրբեջանում նախնական կրթությունը տևում է 4 տարի (6-10 տարեկաններ, 1-4-րդ դասարան), հիմնական կրթությունը՝ 5 տարի (10-15 տարեկաններ, 5-8-րդ դասարան), միջնակարգ կրթությունը՝ 2 տարի (15-17 տարեկաններ, 9-11-րդ դասարան):

Բարձրագույն կրթությունն ապահովում են հիմնական 5 տիպի պետական և մասնավոր բուհեր՝ համալսարաններ, ակադեմիաներ, ինստիտուտներ, քոլեջներ և կոնսերվատորիա: Բուհերում դասավանդումն իրականացվում է ադրբեջա-

ներեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Համալսարանական կրթությունն իրականացվում է ըստ հետևյալ աստիճանների՝ բակալավրիատ, մագիստրատուրա, դոկտորանտուրա: Դոկտորանտուրայում ունկնդիրները կարող են ստանալ գիտության թեկնածուի կամ գիտության դոկտորի կոչումներ:

Ադրբեջանում գործում է ավելի քան 10 *պետական բուհ*՝ իրենց մասնաճյուղերով (այդ թվում՝ Բաքվի պետական համալսարանը, Բաքվի նավթի բարձրագույն դպրոցը, Ադրբեջանի տեխնիկական համալսարանը, Ադրբեջանի մանկավարժական համալսարանը, Բաքվի Սլավոնական համալսարանը, Ադրբեջանի պետական տնտեսագիտական համալսարանը, Ադրբեջանի բժշկական համալսարանը, Նախիջևանի պետական համալսարանը, Գյանջայի պետական համալսարանը և այլն), շուրջ 10 *ակադեմիա* (այդ թվում՝ Ադրբեջանի պետական նավթային ընկերության ակադեմիան, Ազգային անվտանգության ակադեմիան, Բաքվի ոստիկանական ակադեմիան, Ադրբեջանի նախագահին կից պետական կառավարման ակադեմիան և այլն), մի քանի *ինստիտուտներ* և *մասնավոր բուհեր* (այդ թվում՝ Մինգեչաուրի պոլիտեխնիկական ինստիտուտը, «Խազար համալսարանը», Արևմտյան համալսարանը և այլն):

Միջնակարգ և բարձրագույն կրթական հաստատություններ են գործում նաև Ադրբեջանի ԶՈՒ ենթակայության տակ՝ ապահովելով ռազմական կադրերի պատրաստումը և վերառրակավորումը (Հ. Ալիևի անվան բարձրագույն ռազմական դպրոց, Ջ. Նախիջևանցու անվան ռազմական վարժարան և այլն): Կրթական բարձրագույն հաստատություններ կան նաև անվտանգային այլ գերատեսչություններին կից:

Երկրում գիտական գործունեությունը գերազանցապես իրականացնում է Ադրբեջանի գիտությունների ազգային ակադեմիան, որը հիմնադրվել է Բաքվում 1945 թ.՝ ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայի ադրբեջանական մասնա-

ճյուղի հիմքի վրա: Ներկայումս ակադեմիան ունի 5 հիմնական բաժանմունք (ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների, քիմիական գիտությունների, երկրի մասին գիտությունների, կենսաբանական գիտությունների և հասարակական գիտությունների), որոնցում գործում են մի շարք ինստիտուտներ: Գործում են նաև ակադեմիայի Նախիջևանի և Գյանջայի տարածաշրջանային մասնաճյուղերը, ինչպես նաև Լենքորանի և Շաքիի գիտական կենտրոնները:

Մամուլ և սոցիալական ցանցեր

Ինչպես բոլոր ավտորիտար երկրներում, Ադրբեջանում նույնպես մամուլի իրական ազատությունն ի սպառ բացակայում է: Ինչպես ընդունված է նման դեպքերում, պետականորեն և մերձպետական շրջանակների կողմից ստեղծված են մի քանի հիմնական լուրաստեղծ (news-maker) լրատվական գործակալություններ և կայքեր, որոնց շուրջ արբանյակի նման դասավորված են նույնպես պետական կամ իշխանական այս կամ այն շրջանակի հովանու ներքո գործող լրատվականները: Վերջիններիս բովանդակության զգալի մասը կազմում են գործակալություններից պարզ արտատպումները, ինչպես նաև ժամանցային/կենցաղային բնույթի նյութերը:

Վերոնշյալ սկզբունքներով գործող ԶԼՄ-ներից հիշատակության են արժանի պետական «Ազերթաջ» (azertag.az), ինչպես նաև ֆորմալ առումով անկախ «Թրենդ» (trend.az), «Առցանց լրատվական գործակալություն» (ona.az) լրատվական գործակալությունները, «արբանյակային» «news.az», «haqqin.az», «report.az», «day.az», «1news.az», «oxu.az» էլեկտրոնային պարբերականները և այլն: Դե-յուրե մասնավոր հանդիսացող «Թրենդ» լրատվական գործակալությունն իրականում ամբողջությամբ գտնվում է Ադրբեջանում իշխող ընտանիքի, մասնավորապես՝ նրա փաշանյան թևի

համակարգման և հովանավորման ներքո: Ըստ ամենայնի, «Թրենդի» ներքո են գտնվում նաև 1news.az և day.az լրատվակայքերը:

Հայկական լսարանին ուղղված նպատակային քարոզչություն են իրականացնում azvizion.az, cbc.az կայքերը:

Նույն իրավիճակն է տիրում նաև հեռուստատեսության ոլորտում: Այստեղ հիշատակության է արժանի պետական «Ադրբեջանի հեռուստատեսությունը» (AzTV), դե-յուրե մասնավոր «Խազար ԹՎ»-ն, «Ադրբեջանի հանրային հեռուստատեսությունը» (İTV), «Real TV»-ն: Առանձին հիշատակության է արժանի CBC հեռուստաընկերությունը, որը պատկանում է Ադրբեջանի պետական նավթային ընկերությանը, և հեռարձակվում է որպես միջազգային հեռուստաալիք (լուրերի թողարկումը եթեր է հեռարձակվում 4 լեզուներով՝ ադրբեջաներեն, ռուսերեն, անգլերեն և հայերեն): Ադրբեջանում մեծ տարածում ունեն նաև արբանյակային հեռուստաալիքները:

Վերջին տարիներին գործարկվել են նաև ռազմական թեմատիկան լուսաբանող կայքեր՝ «ordu.az», վերջինիս ռուսական տարբերակը՝ «armiya.az», «Hərbi xəbərlər və məlumatlar»[11] ֆեյսբուքյան և ինստագրամյան միկրոբլոգը և այլն: Սրանք հիմնականում կապված են մերձպաշտպանական շրջանակների հետ (ըստ ամենայնի, կայքերի աշխատանքը համակարգվում է ՊՆ-ին մոտ կանգնած պաշտոնաթող զինվորականների կողմից):

Ադրբեջանում ընդդիմադիր մամուլի բացակայության պայմաններում առավել աչքի են ընկնում արտասահմանում գործող «Ռադիո ազատ Եվրոպա/Ազատություն ռադիոյի» ադրբեջանական տարբերակը («azadliq.org»), 2013 թ.-ին հիմնադրված ընդդիմադիր/հակաալիևյան «Մեյդան ԹՎ»-ն («meydan.tv»), որում մեծ տեղ են զբաղեցնում լրագրողական հետաքննությունները, ինչպես նաև զանազան բողոքի

[11] Թարգմանվում է «Ռազմական լուրեր և տեղեկություններ»:

ակցիաների առցանց լուսաբանումները: Ընդդիմադիր կողմնորոշում ունեն նաև «Ազատություն» թերթը (նախկինում՝ «Ադրբեջանի ժողովրդական ճակատի» պաշտոնական օրգանը) («azadliq.info»), «Մուսավաթ» կուսակցության պաշտոնական համանուն օրգանը ու վերջինիս արբանյակը համարվող minval.az պարբերականը և այլն: Առանձին հիշատակության է արժանի նաև ընդդիմադիր կողմնորոշում ունեցող «Թուրան» լրատվական գործակալությունը, որը գործում է նաև contact.az էլեկտրոնային տիրույթում:

Մի քանի հայտնի ընդդիմադիր լրագրողներ ներկայումս գտնվում են անազատության մեջ, իսկ ոմանք ապրում են վտարանդիության մեջ՝ այնտեղից շարունակելով իրենց գործունեությունը:

Ադրբեջանում սոցիալական ցանցերից առավել զարգացած են YouTube-ը, Facebook-ը, Instagram-ը և Ok.ru-ն: Սոցցանցերը փաստացի բռնապետության պայմաններում հաճախ վերածվում են հասարակական-քաղաքական քննարկումների հիմնական հարթակների, ինչի պատճառով երբեմն ժամանակավորապես դադարեցվում է այս կամ այն ցանցի աշխատանքը: Ֆեյսբուքյան հայտնի ընդդիմադիր էջերից է «Ազադ սյոզը», իսկ Յութուբում գործող ամենահայտնի ալիքներից՝ Kanal13.tv-ն:

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ներքին քաղաքականություն

Ադրբեջանի ներքին քաղաքական կյանքը կարելի է բնորոշել ավանդական հասարակության հենքի վրա կառուցված ավտորիտար համակարգերին բնորոշ հիմնական առանձնահատկություններով: Համակարգի կենտրոնում գտնվում է Իլհամ Ալիևը և իր մերձավոր շրջապատը, որոնց շուրջ ուղղահայաց հիերարխիկ կերպով դասավորված են բոլոր ուժային կենտրոնները: Համակարգի կայունության ապահովման համար կարևոր դեր է խաղում այսպես կոչված «հեյդարիզմը»՝ Հ. Ալիևի անձի պաշտամունքը, որը հանդիսանում է ներկայիս իշխանության լեգիտիմության առանցքային հիմքերից մեկը:

Չնայած Ի. Ալիևի պաշտոնավարման տարբեր տարիներին ամենատարբեր նշանակության հարցերով տեղի ունեցած բողոքի միջոցառումներին՝ նավթագազային եկամուտների ներհոսքի, պատերազմի, Ղարաբաղի և հայկական թեմաների՝ սոցիալական համախմբող գործոն լինելու շնորհիվ Ադրբեջանի իշխանությանը հաջողվում է զուտ ոստիկանական միջոցներով կառավարելի պահել երկիրը: Պատմական, այդ թվում՝ մեծմերձավորարևելյան փորձը ցույց է տալիս, որ նմանօրինակ համակարգերը հավերժ գոյություն չեն կարող ունենալ՝ առանց որակական տրանֆորմացիայի և կերպափոխման: Ադրբեջանի դեպքում խնդրին գումարվում է նաև Արցախյան հակամարտության և պատերազմի գործոնը:

Սահմանադրություն, պետական կարգ

Ադրբեջանի Հանրապետությունը միակազմ (ունիտար) և նախագահական տիպի հանրապետություն է: Անկախության

տարիներին երկրում չորս անգամ անցկացվել է սահմանադրական հանրաքվե, որից վերջինը՝ 2016 թ. սեպտեմբերի 26-ին:

Գործող սահմանադրությամբ Ադրբեջանը հռչակված է ժողովրդավարական, իրավական, աշխարհիկ, միակազմ հանրապետություն: Այստեղ պետք է ընդգծել, որ սահմանադրությունից բացակայում է սոցիալական պետություն լինելու մասին իրավանորմը: Դրա առկայությունը, ըստ սահմանադրահիրավական տեսության և պրակտիկայի, նշանակում է պետության կողմից հավելյալ հանձնառություններ՝ քաղաքացիների սոցիալական, աշխատանքային, կենսապահովման իրավունքների պաշտպանության և իրացման հարցում:

Ադրբեջանի սահմանադրության 7.3 հոդվածով ամրագրված է իշխանությունների բաժանման սկզբունքն օրենսդիր (Միլլի մեջլիս), գործադիր և դատական իշխանությունների:

Գործադիր իշխանությունն իրականացնում է Ադրբեջանի նախագահը: Միևնույն ժամանակ սահմանադրության 8.1 հոդվածով նա երկրի ղեկավարն է: Սրանով Ադրբեջանի նախագահական հանրապետական կառավարման ձևն ավելի մոտենում է աֆրիկյան և ամերիկյան օրինակներին, որն այլ կերպ անվանվում է նաև սուպերնախագահական: Իրավական հարթության մեջ այսպիսի ամրագրումը խիստ ներդաշնակ է իրական կյանքում առկա դե-ֆակտո ավտորիտար կառավարման ձևի հետ: Վերջինս էլ իր հերթին ունի թե՛ պատմաքաղաքական, թե՛ սոցիալ-մշակութային ուրույն պատճառներ, որոնցից են օրինակ՝ անցյալում ժողովրդավարական ավանդույթի բացակայությունը, գյուղական բնակչության համեմատաբար մեծ տոկոսը (48%), ավանդական հասարակություններին բնորոշ հարաբերություններն ու կառուցակարգը, ինչպես նաև ածխաջրածնային պաշարների առկայությունն ու արտահանումը, որը զարգացող երկրներից շատերում

(հետխորհրդային տարածքում՝ բոլորում) հանգեցնում է ուժեղ կենտրոնացված կառավարման համակարգի առաջանալուն՝ առանց զսպող և հակակշռող մեխանիզմների:

Ադրբեջանի Հանրապետության նախագահը ներկայացնում է երկիրը ներքին և արտաքին հարաբերություններում և մարմնավորում է «Ադրբեջանի Հանրապետության ժողովրդի միասնությունը»: Միևնույն ժամանակ վերջինս երաշխավորում է պետության ինքնիշխանության, տարածքային ամբողջականության և միջազգային պայմանագրերի կատարումը:

Երկրի ղեկավարը նաև հանդիսանում է զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարը:

Եթե պետության ղեկավարին պատվիրակված նման լիազորությունները քիչ թե շատ համահունչ են (սուպեր)նախագահական պետության սահմանադրությանը, ապա 8.4 հոդվածն ակնհայտորեն շեղվում է նույն սահմանադրությամբ հռչակված ժողովրդավարական սկզբունքներից՝ նախագահին վերապահելով դատական իշխանության անկախության երաշխավոր լինելը, քանզի սա հակասում է իշխանությունների բաժանման սկզբունքին:

Սահմանադրության 11-րդ հոդվածը վերաբերում է պետության տարածքին: Այն հռչակված է «միասնական, անձեռնմխելի և անբաժանելի»: Ադրբեջանի Հանրապետության տարածքի օտարման անթույլատրելիության մասին կետում նշված է, որ պետության սահմանները կարող են փոփոխվել միայն Միլլի մեջլիսի որոշմամբ Ադրբեջանի ամբողջ տարածքում բնակչության շրջանում անցկացված հանրաքվեի միջոցով Ադրբեջանի ժողովրդի կամարտահայտության հիման վրա: Հասկանալի է, որ նման իրավանորմի ներմուծումը սահմանադրության մեջ (սկսած տակավին 1995 թ. տարբերակից) պայմանավորված է գլխավորապես հայ-ադրբեջանական հակամարտության հանգամանքով, ինչպես նաև առհասարակ այդ պետության էթնոտարածքային առանձնա-

հատկություններով (սահմանամերձ տարբեր շրջաններում կոմպակտ բնակվող ոչ ադրբեջանական խմբեր, վերջնականապես չկարգավորված և խնդրահարույց սահման Վրաստանի հետ և այլն)։

Չնայած սոցիալական պետություն չլինելուն՝ սահմանադրության 12-րդ հոդվածով պետության գլխավոր նպատակ են հռչակված մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների, Ադրբեջանի Հանրապետության քաղաքացիների արժանապատիվ կենսամակարդակի երաշխավորումը։

Համաձայն Սահմանադրության՝ Ադրբեջանի պետական լեզուն ադրբեջաներենն է, որի զարգացման երաշխավորը պետությունն է։ Ուշագրավ է, որ պետության տարածքում խոսվող մյուս լեզուները դենոմինացնելու համար օգտագործվում է ոչ թե «ազգային փոքրամասնությունների լեզուներ» (կամ «ազգամիջյան հաղորդակցության լեզուներ» և այլն), այլ չեզոք և ֆորմալիզացված «ժողովրդի կողմից խոսվող այլ լեզուներ» ձևակերպումը։ Վերջիններիս հանդեպ պետության ստանձնած միակ պարտավորությունը դրանց բանավոր կիրառման արտոնումն ու զարգացման երաշխավորումն է։

Սոցիալական պարտավորությունների շարքում պետությունն ապահովում է անվճար պարտադիր միջին հանրակրթական կրթությունը։ Առհասարակ քաղաքացիների իրավունքների և պարտականությունների թվարկման հարցում Ադրբեջանի սահմանադրությունը հիմնականում կրկնում է համանման կառավարման համակարգ ունեցող եվրոպական տիպի երկրների սահմանադրական տեքստերը (դիցուք՝ Ֆրանսիա)։

Միլլի մեջլիս

Ադրբեջանի օրենսդիր մարմինը՝ Միլլի մեջլիսը, բաղկացած է 125 պատգամավորից: Ընտրություններն անցկացվում են բացառապես համամասնական ընտրակարգով: Հերթական գումարման ընտրություններն անցկացվում են յուրաքանչյուր 5 տարին մեկ՝ նոյեմբեր ամսին: Ըստ սահմանադրության 93-րդ հոդվածի՝ Միլլի մեջլիսը սեփական լիազորություններին վերաբերող հարցերով ընդունում է սահմանադրական օրենքներ, օրենքներ և որոշումներ, որոնք պետք է համապատասխանեն սահմանադրությանը: Ուշադրության է արժանի սահմանադրության այն հոդվածը, որով սահմանված են Միլլի մեջլիսում օրենսդրական նախաձեռնություններով հանդես գալու իրավունք ունեցող սուբյեկտները՝ մեջլիսականները, հանրապետության նախագահը, գերագույն դատարանը, ընտրական իրավունք ունեցող 40 հազար քաղաքացիներ, դատախազությունը և Նախիջևանի Ինքնավար Հանրապետության Գերագույն մեջլիսը: Միլլի մեջլիսի ընդունած օրենքներն ընդունման օրվանից սկսյալ՝ 14 օրվա ընթացքում ստորագրման համար ներկայացվում են նախագահին:

Ներկայումս Միլլի մեջլիսում մեծամասնություն է կազմում իշխող «Նոր Ադրբեջան» կուսակցությունը (74 մեջլիսական), որին հաջորդում է «Քաղաքացիական համերաշխություն կուսակցությունը» (2 պատգամավոր), ապա՝ «Մայր հայրենիք», «Ադրբեջանի ժողովրդավարական բարեփոխումների», «Ադրբեջանի ժողովրդավարական լուսավորություն», «Ադրբեջանի սոցիալ-դեմոկրատական», «Ադրբեջանի սոցիալական բարօրություն», «Մեծ կառուցակարգ», «Ամբողջ Ադրբեջանի ժողովրդական ճակատ», «Ազգային զարթոնք շարժում», «Միասնություն», «Քաղաքացիական միություն»

կուսակցությունները (1-ական պատգամավոր)։ Մնացյալ 39-ն անկուսակցական պատգամավորներ են։

Նախագահ

Գործադիր իշխանության ղեկավարը, ինչպես վերը նշվեց, նախագահն է։ Ադրբեջանի նախագահի պաշտոնում առաջադրվելու համար քաղաքացուն անհրաժեշտ է երկրում 10 տարուց ավել մշտական բնակություն, ընտրական ձայնի իրավունք, նախկինում ծանր հանցագործության համար դատվածության, ինչպես նաև այլ պետությունների հանդեպ պարտավորությունների բացակայություն և բարձրագույն կրթություն։ Երկքաղաքացիություն ունեցողները չեն կարող առաջադրվել Ադրբեջանի նախագահի պաշտոնում։ Նախագահը պաշտոնավարում է յոթ տարի ժամկետով։ Ադրբեջանում սահմանադրական վերջին փոփոխություններից հետո մտցվել են նաև առաջին փոխնախագահի և փոխնախագահների պաշտոնները։ Վերջիններս նշանակվում և պաշտոնից ազատվում են նախագահի կողմից։ Փոխնախագահի պաշտոնում կարող է նշանակվել ընտրական ձայնի իրավունք և բարձրագույն կրթություն ունեցող, ինչպես նաև այլ պետությունների հանդեպ պարտավորություններ չունեցող քաղաքացին։

Ադրբեջանի նախագահի՝ որպես պետության և գործադիր իշխանության ղեկավարի լիազորությունները բավական ընդարձակ են։ Վերջինս նշանակում է Միլլի մեջլիսի ընտրությունները, Միլլի մեջլիսի հաստատմանն է ներկայացնում բյուջեն, հաստատում պետական տնտեսական և սոցիալական ծրագրերը, Միլլի մեջլիսի համաձայնությամբ նշանակում և ազատում է վարչապետին, նշանակում և ազատում է նախարարներին, անհրաժեշտության դեպքում նախագահում է կառավարության նիստերը, որոշում ընդունում կառավա-

ության հրաժարականի մասին, բյուջեով գործադիր իշխանության համար նախատեսված ծախսային միջոցներով ստեղծում է գործադիր իշխանության կենտրոնական և տեղական մարմիններ, չեղարկում է կառավարության, ինչպես նաև Նախիջևանի Ինքնավար Հանրապետության կառավարության որոշումներն ու հրամանագրերը, գործադիր իշխանության կենտրոնական և տեղական մարմինների ընդունած ակտերը, Միլլի մեջլիսին է ներկայացնում սահմանադրական դատարանի, գերագույն դատարանի և վճռաբեկ դատարանի դատավորների թեկնածությունը, նշանակում է մյուս դատարանների դատավորներին, Միլլի մեջլիսի համաձայնությամբ նշանակում և ազատում է գլխավոր դատախազին:

Բացի այդ՝ Ադրբեջանի նախագահը նշանակման և ազատման համար Միլլի մեջլիսին է ներկայացնում կենտրոնական բանկի կառավարիչների խորհրդի անդամների թեկնածությունը, կառավարիչների խորհրդի անդամներից նշանակում է կենտրոնական բանկի նախագահ, Միլլի մեջլիսի հաստատմանն է ներկայացնում երկրի ռազմական հայեցակարգը, նշանակում և ազատում է զինված ուժերի բարձրաստիճան հրամանատարական կազմի անդամներին, ձևավորում և ղեկավարում է նախագահի աշխատակազմը, Միլլի մեջլիսին է ներկայացնում մարդու իրավունքների ընտրության հարցը, ինչպես նաև օտարերկրյա պետություններում և միջազգային կազմակերպություններում դիվանագիտական ներկայացուցչություններ հիմնելու հարցը, նշանակում և ազատում է արտերկրում երկրի դիվանագիտական ներկայացուցիչներին, ընդունում է օտարերկրյա պետությունների դիվանագիտական ներկայացուցիչների հավատարմագրերն ու հետկանչագրերը, ստորագրում և հաստատում է միջպետական և միջկառավարական միջազգային պայմանագրեր, նշանակում է հանրաքվե, ստորագրում և հրապարակում է օրենքներ, լուծում քաղաքացիությանը և քաղաքական

ապաստանին վերաբերող հարցեր, շնորհում ներում, պարգևատրում պետական պարգևներով, շնորհում բարձրագույն զինվորական և հատուկ աստիճաններ, հայտարարում ընդհանուր և մասնակի զորահավաք, զորացրում զորահավաքով զորակոչվածներին, ստեղծում անվտանգության խորհուրդ, հայտարարում արտակարգ և ռազմական դրություն, Միլլի մեջլիսի համաձայնությամբ պատերազմ հայտարարում և խաղաղություն կնքում, պետական բյուջեով այս նպատակների համար նախատեսված ծախսերով ստեղծում հատուկ պահպանության ծառայություններ և այլն:

Ռազմական դրության հայտարարման վերաբերյալ պետք է նկատել, որ նախագահը նման իրավասություն ունի, երբ պետության որոշակի հատվածը գտնվում է փաստացի ռազմակալման/օկուպացիայի տակ, առկա է երկրի դեմ զինված հարձակման, շրջափակման իրական վտանգ կամ երկրի տարածքն արդեն իսկ շրջափակման մեջ է: Սահմանադրահիրավական այս նորմից բխում է, որ քաղաքական որոշման առկայության դեպքում Ադրբեջանը ցանկացած պահի՝ ամենաուշը 24 ժամվա ընթացքում (այդքան է պահանջվում, որ նախագահը համապատասխան հրամանագիրը ներկայացնի Միլլի մեջլիսի հաստատմանը) կարող է պատերազմ հայտարարել Հայաստանի Հանրապետությանը:

Կառավարություն

Կառավարությունը ձևավորվում է հանրապետության նախագահի կողմից՝ վերջինիս գործադիր լիազորությունների կյանքի կոչումը կազմակերպելու նպատակով: Կառավարությունը հանդիսանում է նախագահի բարձրագույն գործադիր մարմինը, ենթակա և հաշվետու է վերջինիս: Կառավարությունը բաղկացած է վարչապետից, վերջինիս տեղակալներից, նախարարներից և կենտրոնական գործադիր

իշխանության այլ մարմինների ղեկավարներից: 2019թ. դրությամբ կառավարության կազմի կազմի մեջ են մտնում նախարարություններ, պետական կոմիտեներ, պետական ծառայություններ և գործակալություններ[12]:

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ		
Արտաքին գործերի նախարարություն	Ներքին գործերի նախարարություն	Պաշտպանության նախարարություն
Արդարադատության նախարարություն	Արտակարգ իրավիճակների նախարարություն	Էներգետիկայի նախարարություն
Տրանսպորտի, կապի և բարձր տեխնոլոգիաների նախարարություն	Բնապահպանության և բնական պաշարների նախարարություն	Էկոնոմիկայի նախարարություն
Գյուղատնտեսության նախարարություն	Ֆինանսների նախարարություն	Հարկերի նախարարություն
Կրթության նախարարություն	Առողջապահության նախարարություն	Աշխատանքի և բնակչության սոցիալական
Մշակույթի նախարարություն	Երիտասարդության և սպորտի նախարարություն	
ԿՈՄԻՏԵ		
Ընտանիքի, կանանց և երեխաների հարցերով պետական կոմիտե	Սփյուռքի հետ աշխատանքի պետական կոմիտե	Կրոնական կազմակերպությունների հետ աշխատանքի պետական կոմիտե

[12] Ծառայությունների և գործակալությունների ցանկը ներկայացված է ողջ ամբողջությամբ, առանձնացված են դրանցից առավել առանցքայինները:

Պետական մաք-սային կոմիտե	Վիճակագրության պետական կոմիտե	Քաղաքաշինության և ճարտարապետության պետական կոմիտե
Ունեցվածքի հար-ցերով պետական կոմիտե	Գաղթականների և տեղահանվածների հարցերով պետա-կան կոմիտե	
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ		
Պետական միգ-րացիոն ծառա-յություն	Պետական սահմանապահ ծառայություն	Պետական անվտանգության ծառայություն
Մոբիլիզացիայի և զինակոչի պե-տական ծառայություն	Արտաքին հետախուզության ծառայություն	Պահպանության հատուկ պետական ծառայություն
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ		
Մանդի անվտանգության պետական գործակալություն	Ջրոսաշրջության պետական գործակալություն	Հանրային ծառայու-թյունների և սոցիալա-կան նորարարություն-ների պետական գործա-կալություն (համակար-գում է ASAN ծառայու-թյունը)

Անհրաժեշտ է նշել, որ կառավարությունը, փաստացի, զուրկ է ինքնուրույնությունից և որոշումների կայացման մեջ ամբողջությամբ կախման մեջ է Ադրբեջանի նախագահի աշխատակազմից, որն գործառույթների ընդգրկմամբ ավելի մոտ է ԽՍՀՄ Կոմունիստական կուսակցության Կենտրոնա-կան կոմիտեին: Նախիջևանում գործադիր իշխանությունը իրականացնում է Նախիջևանի կառավարությունը:

Տեղական ինքնակառավարում

Տեղերում գործադիր իշխանությունն իրականացնում են տեղական գործադիր մարմինների ղեկավարները, որոնց նույնպես նշանակում և ազատում է նախագահը: Ուշագրավ է, որ տեղական գործադիր մարմինների լիազորությունների շրջանակը որոշվում է ոչ թե օրենքով, այլ նախագահի կողմից, ինչը հակասում է տեղական ինքնակառավարման ժողովրդավարական սկզբունքին և հավելյալ անգամ վկայում է այս երկրի գերկենտրոնացված-ուղղաձիգ կառավարչական մշակույթի մասին:

Դատական իշխանություն

Դատական իշխանությունն Ադրբեջանում իրականացնում են սահմանադրական դատարանը, գերագույն դատարանը, վճռաբեկ դատարանները, ընդհանուր իրավասության դատարանները և այլ մասնագիտացված դատարաններ:

Դատավոր կարող է լինել ընտրական ձայնի իրավունք ունեցող, բարձրագույն կրթությամբ և իրավագիտական մասնագիտությամբ 5 տարուց ավել աշխատած քաղաքացին: Սահմանադրական դատարանը բաղկացած է 9 դատավորից, որոնց նախագահի ներկայացմամբ նշանակում է Միլլի մեջլիսը: Նույն կարգով են նշանակվում նաև գերագույն և վճռաբեկ դատարանների դատավորները:

Արտաքին քաղաքականություն

Ինչպես գրեթե բոլոր ավտորիտար համակարգերում, Ադրբեջանում ևս արտաքին քաղաքականության թե՛ մշակումը, և թե՛ կյանքի կոչումն իրականացվում են ոչ ներառական եղանակով՝ ընդգրկելով որոշում ընդունողների և իրա-

կանացնողների սահմանափակ շրջանակ: Ըստ որում, որպես ինստիտուցիոնալ և պետականաշինական ավանդույթի առումով ավելի երիտասարդ/թույլ զարգացած պետություն՝ արտաքին քաղաքականության ուղենիշները հաճախ բխում են ոչ այնքան և/կամ ոչ միայն պետության՝ երկարաժամկետ հեռանկարում ունեցած ազգային շահերի, այլ/այլև իշխող վերնախավի (պայմանական սահմանմամբ՝ «ալիևյան»)՝ սեփական վերարտադրության նպատակամիտումներից:

Ադրբեջանը ցամաքային իր 6 հարևաններից հարևաններից երկուսի՝ *Հայաստանի* և *Արցախի* Հանրապետությունների հետ չունի դիվանագիտական հարաբերություններ: Հակամարտության շարունակման պայմաններում փակ են միջպետական սահմանները և հաղորդակցության ուղիները: Երկկողմ/եռակողմ շփումներն իրականացվում են գերազանցապես ԵԱՀԿ Մինսկի խմբի միջնորդությամբ:

Ռուսաստանի հետ Ադրբեջանի հարաբերությունների խորքային կառուցարկումն սկսվել է Հեյդար Ալիևի նախագահության տարիներին: 1997 թ. հուլիսի 3-ին կողմերն ստորագրել են հարաբերությունների հիմնադիր փաստաթուղթը՝ բարեկամության, համագործակցության և փոխադարձ անվտանգության մասին պայմանագիրը: Երկրորդ նմանօրինակ փաստաթուղթն ստորագրվել է 2008 թ. հուլիսի 3-ին՝ բարեկամության և ռազմավարական գործընկերության մասին հռչակագիրը: Անգամ պայմանագրերի թվականների պարզ արձանագրումը թույլ է տալիս նկատելու, որ դրանք եղել են Ռուսաստանի համար (անդր)կովկասյան տարածաշրջանում վերահաստատման/վերադարձի ժամանակաշրջաններ: Եվ իրոք, Ադրբեջանը ռուսական արտաքին քաղաքականության մեջ հանդես է գալիս հավասարաչափ ինչպես առանձին գործընկեր, այնպես էլ տարածաշրջանային ուժային հավասարակշռության համակարգում կարևոր գործոն:

Կողմերը նաև լուրջ առևտրական գործընկերներ են: 2018 թ. հունվար-հունիս ամսիներին Ադրբեջանի և Ռուսաստանի առևտրաշրջանառության ծավալը եղել է 1.2 մլրդ դոլար, որից 387 միլիոնը՝ ադբեջանական արտահանումը: Ադրբեջանը Ռուսաստան է արտահանում արտադրական ապրանքներ և գյուղատնտեսական հումք, հանքային ապրանքներ, մետաղներ, մեքենաներ, տեքստիլ և կոշիկ, քիմիական արդյունաբերության արտադրանքներ: Ռուսական արտահանման մեջ, անշուշտ, ի շարս մնացյալ ամենի՝ լուրջ տեղ է զբաղեցնում զենքի և զինամթերքի վաճառքը:

Վրաստանի հետ հարաբերություններն ընդհանուր առմամբ աչքի են ընկնում բարիդրացիությամբ և հիմնական փոխշահավետ տնտեսական համագործակցությամբ: Միևնույն ժամանակ առանց հիշատակման չի կարելի թողնել այն հանգամանքը, որ երկու պետություններն ունեն սահմանազատման չկարգավորված խնդիրներ, իսկ Վրաստանի՝ միջազգայնորեն ճանաչված տարածքի առանձին սահմանամերձ տեղամասերում, այդ թվում՝ Դավիթ Գարեջի վանական համալիրի շրջակայքում Ադրբեջանը միակողմանիորեն հաստատել է իր ռազմական վերահսկողությունը: Այնուամենայնիվ, երկկողմ հարաբերությունների հիմնական բովանդակությունը կազմում են տնտեսական համագործակցությունը և դրա համատեքստում ու ի շարս դրա՝ այն տարանցիկ նշանակությունը, որ Վրաստանն ունի Ադրբեջան-Թուրքիա-արտաշխարհ հարաբերություններում: Նշվածի մարմնացումներն են Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղը, Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազատարը, ինչպես նաև Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղին:

2019 թ. ամռան դրությամբ Ադրբեջանը Թուրքիայից և Ռուսաստանից հետո Վրաստանի երրորդ առևտրային գործընկերն է: Բացի այդ՝ Ադրբեջանին է բաժին ընկնում հարևան երկրի ընդհանուր արտահանման 11.9%, ըստ այդմ՝

Ռուսաստանից հետո Ադրբեջանը Վրաստանի երկրորդ արտահանման գործընկերն է: Վրաստանի ընդհանուր ներկրման մեջ Ադրբեջանին է բաժին հասնում 7.1%, որով Ադրբեջանը հետ է մնում միայն Թուրքիայից, Չինաստանից և Ռուսաստանից: Այս ցուցանիշների, ինչպես նաև Վրաստանում ադրբեջանական պետական և մասնավոր ընկերությունների ունեցած ներդրումների, Վրաստանի հարավային շրջաններում էթնիկ ադրբեջանական կոմպակտ բնակչության առկայության հաշվառմամբ ընդունված է համարել, որ Ադրբեջանն ազդեցության մի քանի համակցված գործիքներ ունի հարևան երկրի հանդեպ:

Իրանի Իսլամական Հանրապետության հետ Ադրբեջանի հարաբերությունները կարելի է նկարագրել որպես բազմաշերտ և միևնույն ժամանակ՝ հակասական: Դրանք բնորոշվում են նախկին մետրոպոլիայի և գաղութի՝ նոր ժամանակներում առանձին-առանձին անկախացած պետական կազմավորումներին հատուկ հարաբերություններով: Առանձնահատկությունն այն է, որ ի տարբերություն «դասական» գաղութատիրության՝ Ադրբեջանը թե՛ էթնոլեզվական, թե՛ սոցիո-մշակութային առումով առնվազն մինչև խորհրդայնացումը կազմել է համաիրանական աշխարհի քիչ թե շատ համաբաղադրիչ և հարազատ մասը: Ներկայումս միջպետական հարաբերություններում իրենց հավասար տեղն ունեն (թեպետ ժամանակ առ ժամանակ մեկը մյուսի հանդեպ կարող են գերադաս դիրք գրավել) ինչպես «դարավոր բարեկամության», այնպես էլ փոխադարձ անվստահության և կասկածամտության մոտիվները:

Ի սկզբանե Իրանը մեծ պատրաստակամություն է դրսևորել անկախացած Ադրբեջանը ճանաչելու, վերջինիս հետ հարաբերություններ հաստատելու հարցում: 1992 թ. փետրվար-մայիս ամիսներին իսլամական հանրապետությունը փորձում էր նաև միակողմանի միջնորդական առաքելու-

թյուն ստանձնել Լեռնային Ղարաբաղի պատերազմի/հակամարտության հարցում: Սա տեղավորվում էր ինչպես իրենից հյուսիս վակուումիզացված տարածաշրջանում ազդեցություն հաստատելու փորձի, այնպես էլ իսլամական հեղափոխության և շիայականության քաղաքական ավանդույթները (զարգացման «իրանական մոդել») դեպի նորանկախ Ադրբեջան արտահանելու ձգտման շրջանակներում: Ա. Էլչիբեյի (համա)թյուրքական քաղաքականության և Իրանի հանդեպ ժողովրդագրական-տարածքային գրեթե անթաքույց պահանջների առկայության պատճառով երկկողմ հարաբերությունները վատթարացան, Իրանն ավելի հակվեց դեպի Հայաստանի հետ հարաբերությունների ջերմացում և աջակցություն[13]: Հ. Ալիևի իշխանության տարիներին հարաբերությունները բերվեցին երկու հարևաններին բնորոշ քիչ թե շատ բարիդրացիական շփումների մակարդակի: 2005 թ. մայիսի 16-ին Բաքուն և Թեհրանը ստորագրել են ռազմական ոլորտում համագործակցության մասին համաձայնագիր, որը տարածաշրջանում ամերիկյան ռազմական ակտիվացման և Ադրբեջան-Իրան՝ 1990-ական թվականներից շարունակվող անվստահության մթնոլորտի պայմաններում լիցքաթափման մեկնարկի նշան էր: Հարաբերությունների բարելավում է արձանագրվել 2013 թ. Հասան Ռուհանիի՝ նախագահի պաշտոնը ստանձնելուց հետո: Հարաբերությունները զարգանում են ինչպես էներգետիկ, հաղորդակցային-տրանսպորտային, այնպես էլ դեղարտադրության ոլորտում[14]:

---

[13] Ընդհանուր առմամբ, սակայն, Արցախյան պատերազմի տարիներին Իրանի ռազմական աջակցությունը երկու կողմերին համակշռել է, սոցիետար սոլիդարության և հումանիտար աջակցության առումով ավելի շոշափելի օգնություն է հասել Ադրբեջանին:

[14] Սրանից զատ՝ Ադրբեջանի քաղաքացիները հաճախ բուժծառայության են դիմում Իրան, որտեղ այն համեմատաբար ավելի մատչելի ու որակյալ է: Ներադրբեջանական կենցաղային նարատիվներից է, որ «Ադրբեջանում բժշկություն չկա, մարդիկ Իրան են գնում բժշկի»:

Կողմերի հարաբերություններում շարունակում են խնդրահարույց մնալ Իսրայելի հետ Ադրբեջանի հարաբերությունները և դրանց բալանսավորումն իրանական ռազմավարական մտահոգությունների հետ, ԱՄՆ կողմից Իրանի հանդեպ վարվող (տարածաշրջանային) քաղաքականության սահմաններում ադրբեջանական դիրքավորման խնդիրը, իրանական հոգևոր ազդեցությունն Ադրբեջանում և Ադրբեջանի կողմից Իրանի հյուսիսի թյուրքախոս շրջանների «ադրբեջանականացման» իռեդենտիստական խնդրականը:

Թուրքիայի և Ադրբեջանի հարաբերությունները բնութագրվում են ռազմավարական գործակցության և իրական դաշնակցությանը բնորոշ բոլոր անհրաժեշտ տարրերով: Կողմերի՝ միմյանց հանդեպ ունեցած փոխադարձ հետաքրքրությունն ու շահերը շատ հաջող կերպով զուգակցվում են նաև մշակութային և լեզվական ընդհանրություններով՝ միջպետական քաղաքական-տնտեսական հարաբերությունների համար ստեղծելով նաև սոցիո-մշակութային հենք: Սրա բարձրակետը ժամանակին Հ. Ալիևի կողմից հնչեցված «մեկ ազգ, երկու պետություն» (bir millət, iki dövlət) կարգախոսն էր:

Հիշատակության է արժանի կողմերի միջև ռազմական համագործակցությունը: Իրավապայմանագրային առումով այն սկզբնավորվել է 1992 թ. -ին՝ նախ մայիսի 3-ին ստորագրված մարզակրթական, մասնագետների փոխանակման և գիտատեխնիկական համագործակցության մասին, ապա օգոստոսի 11-ին փոխադարձ ռազմական մարզակրթական համագործակցության մասին համաձայնագրերով: Արցախյան պատերազմի տարիներին Թուրքիան թե՛ ֆորմալ, թե՛ ոչ ֆորմալ խողովակներով ակտիվորեն աջակցում էր Ադրբեջանին, այդ թվում՝ ռազմական խորհրդականների և պանթուրքիստական ոգով տոգորված կամավորական զինված ջոկատների տեսքով:

Ներկայումս կողմերի ռազմական համագործակցությունը պայմանավորող հիմնական փաստաթուղթը ռազմական փոխօգնության մասին 2010 թ. օգոստոսի 16-ին ստորագրված ռազմավարական համագործակցության և փոխադարձ օգնության մասին համաձայնագիրն է, որի 2-րդ հոդվածով սահմանվում է երրորդ կողմի կողմից ագրեսիայի դեպքում փոխադարձ օգնություն: Ակտիվ է նաև կողմերի միջև ռազմատեխնիկական և ռազմարդյունաբերական համագործակցությունը: Թուրքիան Ադրբեջանին մատակարարում է տարբեր տրամաչափի համազարկային կրակի հրթիռային համալիրներ, որոնց մի մասը տեղակայված է Նախիջևանում, ինչպես նաև թևավոր հրթիռներ: Բացի այս՝ թուրքական շուրջ 20 ընկերություններ Ադրբեջանի տարածքում ունեն դուստր ձեռնարկություններ կամ այս կամ այն կերպ համագործակցային հարաբերությունների մեջ են ադրբեջանական ռազմարդյունաբերության հետ: Այս շարքում ուշագրավներից է թուրքական «ASELSAN» ընկերության կողմից ադրբեջանական ՋՈՒ համար արբանյակային կառավարման կենտրոնի կառուցման փաստը: Նշված ընկերությունից Ադրբեջանը գնում է նաև հակադրոնային համակարգեր: Թուրքական ռազմատեխնիկական ընկերությունները զբաղվում են նաև Ադրբեջանի զենքերի արդիականացմամբ:

Ադրբեջան-Թուրքիա ռազմական համագործակցության ծիրում տեղին է անդրադառնալ նաև Նախիջևանում «թուրքական բազայի առկայության» մասին խոսույթին: Բանն այն է, որ 2010 թ. -ին ընդունված Ադրբեջանի ռազմական հայեցակարգի 29-րդ հոդվածը Ադրբեջանին իրավունք է վերապահում «ռազմաքաղաքական միջավայրի հիմնավոր փոփոխության դեպքում Ադրբեջանի Հանրապետության տարածքում օտարերկրյա ռազմական բազաների տեղակայմանը կամ այլ ձևով օտարերկրյա ռազմական մասնակցությանը ժամանակավոր թույլտվություն տալու»: 2013 թ. ստեղծվեց Նախիջևա-

նի առանձին համազորային բանակը (Naxçivan Əlahiddə Ümumqoşun Ordusu): Այս ամենն ինչպես հայկական, այնպես էլ միջազգային փորձագիտական և հրապարակախոսական տիրույթում շշուկներ ծնեց Նախիջևանում թուրքական ռազմաբազայի տեղակայման կամ արդեն իսկ տեղակայված լինելու հնարավորության մասին: Իրականում դրա որևէ ուղղակի վկայություն չկա, բայց այն, որ Նախիջևանի տարածքը կարևոր դեր ունի ադրբեջանա-թուրքական ռազմական համագործակցության տեղագրության մեջ, ակնհայտ է ինչպես Նախիջևանին մոտ տեղակայված թուրքական զորամիավորումների խիտ ցանցից, այնպես էլ ինքնավար հանրապետության տարածքում պարբերական ռեժիմով անցկացվող երկկողմ զորավարժություններից:

Թուրք-ադրբեջանական հարաբերություններում հիշատակության են արժանի երկկողմ առևտրաշրջանառության ցուցանիշները, որ ընդհանրական պատկերացում են թողնում տնտեսական հարաբերությունների մասին: Այսպես՝ 2019 թ. -ի օգոստոսի դրությամբ երկկողմ առևտրաշրջանառությունն աճելով հասել է 163885 միլիոն դոլարի: Թուրքիայից Ադրբեջան արտահանումը կազմում է 138423 միլիոն դոլար, իսկ Ադրբեջանից Թուրքիա արտահանումը՝ 25462 միլիոն դոլար: Անհրաժեշտ է նշել նաև Ադրբեջանի մեծածավալ ներդրումները Թուրքիայի տնտեսության մեջ, որոնք վերջին տարիներին աճում են հատկապես նավթային արդյունաբերության ոլորտում: Կողմերի միջև քաղաքական-հումանիտար ասպարեզում երկար ժամանակ խնդրահարույց էր վիզաների ռեժիմի հարցը, որ վերջնական հանգուցալուծում ստացավ 2019 թ. , երբ սեպտեմբերի 1-ից Ադրբեջանը վերացրեց Թուրքիայի քաղաքացիների համար վիզային ռեժիմը:

Չնայած առկա ռազմավարական ու դաշնակցային հարաբերություններին, պետք է նշել, որ Թուրքիայի և Ադրբեջանի միջև երբեմն ծագում են տարաձայնություններ (առա-

ջին հերթին՝ կապված տարածաշրջանային քաղաքականության հետ): Այս համատեքստում տեղին է հիշատակել 2008-2009 թթ. հայ-թուրքական «ֆուտբոլային դիվանագիտության» ընթացքում երկկողմ հարաբերություններում արձանագրված լարվածությունը, որի ընթացքում Ադրբեջանը ճնշում և հակաքարոզչություն էր բանեցնում Թուրքիայի վրա, ինչն, ըստ գիտական գրականության մեջ առկա դիտարկումների, քիչ դեր չունեցավ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման տապալման հարցում թուրքական կողմի որոշման վրա: Տարաձայնությունների պատճառ են հանդիսանում նաև Թուրքիայում բնակվող զգալի թվով ադրբեջանցիներին քաղաքացիություն չտալու և վերջիններիս Թուրքիայից արտաքսման կրկնվող դեպքերը:

Ադրբեջանը հետևողական ջանքեր է գործադրում Մերձավոր Արևելքի տարածաշրջանում երկկողմ և բազմակողմ համագործակցություն իրականացնելու համար: Այս առումով առավել դինամիկ են *Իսրայելի* հետ Ադրբեջանի հարաբերությունները, որոնց առանցքը ռազմատեխնիկական ոլորտում երկկողմ համագործակցությունն է: Մերձավորարևելյան տարածաշրջանում համագործակցության մյուս կարևոր ուղղությունը *Պարսից ծոցի* արաբական երկրներն են: Վերջին տարիներին շոշափելի ակտիվություն է նկատվում նաև Ադրբեջան-*Չինաստան* հարաբերություններում, որի շրջանակներում Ադրբեջանը նպատակ է հետապնդում դառնալ Չինաստանն ու Միջին Ասիան Եվրոպային կապող և Ռուսաստանի տարածքին այլընտրանքային ուղի:

Ամերիկայի Միացյալ Նահանգների հետ Ադրբեջանի հարաբերությունները վերջին տարիներին դինամիկ զարգանում են՝ խարսխված լինելով առաջին հերթին տնտեսական և անվտանգային փոխշահավետ գործակցության վրա: Ադրբեջանի տարածքը ծառայում է որպես փոխաբեռնման կետ ԱՄՆ-ի՝ դեպի Աֆղանստան ուղևորվող ռազմական

փոխադրումների համար: Բացի այդ Միացյալ Նահանգները աջակցում են Ադրբեջանի անվտանգային որոշ ենթակառուցվածքների արդիականացմանը: ԱՄՆ՝ ի դեմս ամերիկյան ընկերությունների մասնակցում է Ադրբեջանի նավթագազային պաշարների արդյունահանման և տեղափոխման գործընթացին: Պակաս կարևոր չէ Ադրբեջանի խաղացած դերը Իրան-ԱՄՆ հակամարտության պայմաններում, որը տարածաշրջանային հավելյալ «գրավչություն» է հաղորդում այդ երկրին ԱՄՆ աչքերում:

Ադրբեջանն ընդգրկված է *Եվրամիության* «Արևելյան գործընկերության» ծրագրի մեջ, որի շրջանակներում էլ ձևավորվում են ԵՄ-Ադրբեջան հարաբերությունները:

ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐ

Ադրբեջանի Հանրապետության Զինված Ուժերը, համաձայն սահմանադրության, պաշտպանում են պետության անկախությունը, տարածքային ամբողջականությունը և անձեռնմխելիությունը: Դրանք բաղկացած են երեք տեսակի զորքերից՝ ցամաքային ուժեր, օդուժ և ռազմական նավատորմ:

Ադրբեջանի *ցամաքային ուժերը* բաղկացած են բանակային 4 կորպուսից՝ 1-ին (շտաբը՝ քաղաք Բարդա), 2-րդ (շտաբը՝ Բեյլագանի շրջանի Միլաբադ գյուղ), 3-րդ (շտաբը՝ քաղաք Շամխոր) և 4-րդ (շտաբը՝ Ապշերոնի շրջանի Փիրաքաշքյուլ գյուղ), մեկ առանձին համազորային բանակից (շտաբը՝ քաղաք Նախիջևան), ինչպես նաև կենտրոնական հրամանատարության մի քանի զորամիավորումներից:

Նշված ստորաբաժանումներից յուրաքանչյուրն ունի 4-6 մոտոհրաձգային բրիգադ, 1-2 հրետանային/հրթիռա-հրետանային բրիգադ, մինչև 1 տանկային բրիգադ, ինչպես նաև կապի, հետախուզության, հակաօդային պաշտպանության, ինժեներական, թիկունքի ստորաբաժանումներ:

Ադրբեջանի *օդուժի* մասին առկա տվյալները սակավ են: Մոտավոր հաշվարկներով այն բաղկացած է 77 միավոր Մի-8/17 և 50 միավոր Մի-24/35Մ ուղղաթիռներից և 14 միավոր ՄիԳ-29 և 39 միավոր Սու-25 կործանիչ և գրոհային ինքնաթիռներից, որոնց որոշ մասը չի բացառվում, որ գտնվում է ոչ թռիչքային վիճակում:

Ադրբեջանը ԽՍՀՄ-ից ժառանգել է օդանավակայանների բավականին լայն և զարգացած ցանց, որոնցից մի քանիսը մինչ այժմ գործում են (Նասոսնայայի, Քյուրդամիրի, Ղալայի, Սանգաչալի, Եվլախի օդակայանները և այլն):

Ադրբեջանական ռազմական *նավատորմի* նոր կենտրոնակայանը գտնվում է Բաքվի Ղարադաղ շրջանից հարավ

ընկած վայրում: Այն գերազանցապես բաղկացած է խորհրդային և լեհական արտադրության նավերից (ԽՍՀՄ ժառանգություն), թեպետ վերջին տարիներին ձեռք են բերվել շուրջ երկու տասնյակ նոր նավեր[15]:

Բացի զինված ուժերից՝ ռազմական կառույցներ են հանդիսանում նաև Ադրբեջանի պետական սահմանապահ ծառայությունը՝ իր ցամաքային զորքով, օդուժով և առափնյա պահպանության ծառայությամբ (պետության երկրորդ ամենամեծ ռազմական կառույցը), Ներքին գործերի նախարարության ներքին զորքերը, Արտակարգ իրավիճակների նախարարության քաղաքացիական պաշտպանության ուժերը, Պետական պահպանության հատուկ ծառայությունը:

Ադրբեջանի ԶՈՒ թվաքանակի վերաբերյալ տվյալներն ամբողջական չեն: Համաձայն տարբեր հաշվարկների՝ այն տատանվում է 82.000-85.000 սահմաններում (որից շուրջ 8000-ը՝ ծառայում են օդուժում և հակաօդային պաշտպանության ուժերում, իսկ շուրջ 2500-ը՝ նավատորմում):

Զինված ուժերը ձևավորվում են խառը սկզբունքով՝ ժամկետային զորակոչվածների և պայմանագրային զինծառայողների միջոցով: Համաձայն օրենքի՝ Ադրբեջանի արական սեռի բոլոր քաղաքացիները 18 տարեկանը լրանալուն պես անցնում են ծառայության, որի ժամկետը 18 ամիս է: Համալսարանի շրջանավարտների համար սահմանված է 12-ամյա ծառայություն: Կախված կրթության աստիճանից կամ առողջական վիճակից՝ զորակոչիկներին կարող են տրամադրվել տարկետումներ (կամ նրանք կարող են ընդհանրապես ազատվել ծառայությունից):

Վերջին տարիներին երկրում արձանագրված ժողովրդագրական փոփոխությունների պատճառով Ադրբեջանի ԶՈՒ համար պայմանագրային ծառայությունը ստացել է

[15] Տեղին է նշել, որ Ադրբեջանի ռազմածովային ուժերից զատ՝ իր սեփական նավատորմն ունի նաև պետական սահմանային ծառայությունը:

ավելի մեծ նշանակություն: Համաձայն ադրբեջանական պաշտոնական աղբյուրների՝ պայմանագրային զինծառայողները կազմում են բանակի 80%-ը, սակայն այս թիվը չի արտացոլում իրական դրությունը և կազմում է շուրջ 60% (պայմանագրային ծառայությունը լայնորեն սկսել է կիրառվել 2013-2014 թթ. բանակի արդիականացման ծրագրի շրջանակներում): Համաձայն օրենքի՝ 19-40 տարեկան կանայք ևս կարող են ծառայել բանակում:

Ադրբեջանի բանակը համալրված է շուրջ 520 տանկերով (Տ-72, Տ-90, Տ-55), մինչև 308 հետևակի մարտական մեքենաներով (ԲՄՊ-2 (շուրջ 188), ԲՄՊ-3 (շուրջ 120)), շուրջ 386 զրահափոխադրիչով (ԲՏՌ-70, ԲՏՌ-80, ԲՏՌ-82Ա, Marauder, Matador), 200-400 միավոր տարբեր տիպի զրահապատ մեքենաներով (Cobra, Scorpion B), շուրջ 200 միավոր զրահապատ քարշակներով (ՄՏԼԲ), ավելի քան 1000 հրետանային միջոցով («Գվոզդիկա», «Ակացիա», «Պիոն», Nona-S, Msta-S, Vena, «Գիացինտ», «Ռապիրա» և այլն) և համազարկային կրակի կայաններով (Kasirga, LYNX, «Սմերչ», «SOU», «Պոլոնեզ»), 4 օպերատիվ-մարտավարական հրթիռային կայանով (LORA), մինչև 53 միավոր ռազմական ինքնաթիռներով, մինչև 50 հարվածային ուղղաթիռով:

ՀԱՎԵԼՎԱԾ

Ադրբեջանում գործող կուսակցություններ

Ադրբեջանի կուսակցական կյանքի մասին խոսելիս հարկավոր է հիշել, որ այն հեռու է զարգացած (կոնսոլիդացված) ժողովրդավարություններին բնորոշ գաղափարականությունից, մրցակցայնությունից և կառուցակարգվածությունից: Խորհրդարանում գործող կուսակցությունները լավագույն դեպքում Իլհամ Ալիևի նախագահության առաջին ժամկետի ընթացքում ստեղծված և ներկայացուցչականությունից զուրկ միավորներ են՝ հաճախ անվանապես ընդդիմադիր, իրականում՝ իշխանություններին սատարող և զուրկ հանրային հենարանից:

Ադրբեջանում իշխող կուսակցությունը *«Նոր Ադրբեջանն»* (Yeni Azərbaycan Partiyası) է: Այն հիմնվել է 1992 թ. նոյեմբերի 21-ին Հեյդար Ալիևի և վերջինիս սատարող 91 մտավորականների կողմից: Ներկայումս կուսակցության ղեկավարն Իլհամ Ալիևն է: 1993 թ.-ից սկսած՝ «Նոր Ադրբեջանին» բնորոշ են ավտորիտար համակարգերում գործող իշխանական կուսակցություններին հատուկ բոլոր տարրերը՝ հոչակված պահպանողական գաղափարախոսություն, թույլ մրցակցային ընտրություններում անընդմեջ հաղթանակներ, կուսակցական ղեկավարության «ժառանգական սերնդափոխություն», մասնակիցների անդամակցություն՝ որպես կարիերային աճի երաշխիք, իրական գաղափարախոսական հենքի բացակայություն և այլն: «Նոր Ադրբեջանը» հաղթել է 1995 թ., 2000 թ., 2005 թ., 2010 թ. և 2015 թ. կայացած խորհրդարանական ընտրություններում: Կուսակցությունը գերներկայացված է ինչպես Միլլի մեջլիսում, այնպես էլ կառավարությունում, պետական կառավարման այլ մարմիններում և տեղական ինքնակառավարման մարմիններում:

Ներկայումս, ըստ տարբեր գնահատականների, կուսակցության անդամների թիվը 700-740 հազար է, այսինքն՝ մոտավորապես երկրի բնակչության 10%, ինչը մի կողմից վկայում է կարճաժամկետ հեռանկարում կուսակցության ունեցած սոցիալական մեծ բազայի մասին, մյուս կողմից հաստատում է վերոնշյալ պնդումները իշխող կուսակցության շարքերի արհեստական գերհագեցվածության մասին:

Խորհրդարանական ներկայություն ունեցող քաղաքական մյուս միավորը *«Քաղաքացիական համերաշխություն կուսակցությունն»* (Vətəndaş Həmrəyliyi Partiyası) է: Վերջինս հիմնադրվել է 1992 թ.-ի աշնանը՝ սեպտեմբերի 26-ին: Աջակողմյան ազգային-պահպանողական կուսակցություն է: Ղեկավարը Սաբիր Ռուստամխանլուն է: Անդամների թիվը հաշվվում է շուրջ 20 հազար:

Խորհրդարանական մյուս ուժը *«Մայր հայրենիք»* կուսակցությունն (Ana Vətən Partiyası) է: Այն հիմնադրվել է 1990 թ. նոյեմբերի 24-ին: Կուսակցության հիմնադիրը և ներկայիս նախագահը Ֆազայիլ Աղամալուն է: Ազգայնականություն և ազգային պահպանողականություն դավանող աջակողմյան այս կուսակցության իդեալը «միասնական և ամբողջական Ադրբեջանն» է:

Խորհրդարանում ներկայացված *«Ադրբեջանի ժողովրդավարական բարեփոխումների»* կուսակցությունը (Azərbaycan Demokratik İslahatlar Partiyası) հիմնադրվել է 2005 թ. մայիսի 27-ին: Կուսակցության առաջնորդն Ասիմ Մոլլազադեն է, իսկ հիմնադիրը՝ Էլշան Մուսաևը: Կուսակցությունը գրանցվել է 1995 թ. օգոստոսի 4-ին:

«Ադրբեջանի սոցիալ-դեմոկրատական» կուսակցությունը (Azərbaycan Sosial-Demokrat Partiyası) հիմնադրվել է 1989 թ. Զարդուշտ Ալիզադեի կողմի: Ներկայումս նրան փոխարինել է որդին՝ Արազ Ալիզադեն: Վերջինս նախագահական վերջին ընտրություններին ստացել է 54603 ձայն (1.38%):

«Ադրբեջանի սոցիալական բարօրություն» կուսակցությունը (Azərbaycan Sosial Rifah Partiyası) նույնպես ծնունդ է առել 1992 թ.-ին: Ղեկավարը Խանհուսեյն Քյազիմովն է: Կուսակցության հռչակված նպատակն ազատ աշխատանքի զարգացումը, վերջինս եկամտի միակ աղբյուր դարձնելը և ձեռնարկատիրության կայացմանը հասնելն է:

«Մեծ կառուցակարգ» կուսակցությունը (Böyük Quruluş Partiyası) հիմնադրվել է 2003 թ., ունի ձախական, ինչպես նաև լիբերալ-դեմոկրատական օրակարգ և գաղափարախոսություն: Ստեղծման ժամանակ ղեկավար է ընտրվել Ֆազիլ Մուստաֆաևը (Ղազանֆարօղլու): Վերջինիս քաղաքական կարիերան սկիզբ է առնում «Ադրբեջանի ժողովրդական ճակատ» կուսակցությունից և հակահայկական պայքարի միջավայրից: 1995-1998 թթ. եղել է Թուրքիայում Աբուլֆազ Էլչիբեյի անձնական ներկայացուցիչը:

«Միացյալ Ադրբեջանի ժողովրդական ճակատ» կուսակցությունը (Bütöv Azərbaycan Xalq Cəbhəsi Partiyası) հիմնադրվել է 2004 թ. ապրիլի 3-ին այն ժամանակվա պատգամավոր Ղուդրաթ Հասանղուլիևի (Աբուլֆազ Էլչիբեյի խորհրդականը) կողմից, որը շարունակում է ղեկավարել այս քաղաքական ուժը: Վերջինս 2003 թ., 2008 թ., 2013 թ., 2018 թ. եղել է Ադրբեջանի նախագահի թեկնածու: Վերջին ընտրություններին ստացել է 119390 ձայն (3.02%):

«Ազգային զարթոնքի շարժում» կուսակցությունը (Milli Dirçəliş Hərəkatı Partiyası) հիմնադրվել է 2003 թ.-ին Ֆարաջ Ղուլիևի կողմից, որ շարունակում է ղեկավարել կառույցը: Կուսակցությունն ունի ընդգծված ազգայնական ուղղվածություն, գաղափարական հայր է համարվում Աբուլֆազ Էլչիբեյը: Առաջնորդ Ֆ. Ղուլիևը նախագահական վերջին ընտրություններին ստացել է 46010 ձայն (1.17%):

«Միասնություն» կուսակցությունն (Vəhdət Partiyası) ստեղծվել է 1994 թ.-ին: Ղեկավարն է համահիմնադիր Թահիր Քարիմլին:

Ինչ վերաբերում է «Քաղաքացիական միությանը» (Vətəndaş Birliyi Partiyası), ապա վերջինս ստեղծվել է 1999 թ. Մոսկվայում պաշտոնաթող նախագահ Այազ Մութալիբովի կողմից: Հետագայում կուսակցությունը պառակտվել է, Ա. Մութալիբովը հարել է «Սոցիալ-դեմոկրատական» կուսակցությանը (2003 թ.), իսկ «Քաղաքացիական միության» ղեկն ստանձնել է (մինչ օրս) Սաբիր Հաջիևը:

Արտախորհրդարանական ընդդիմությունից ուշադրության են արժանի *«Մուսավաթ»*, *«Ադրբեջանի ժողովրդական ճակատ»* կուսակցությունները: *«Մուսավաթը»* (Müsavat Partiyası) հիմնադրվել է 1911 թ.-ին՝ Անդրկովկասի մուսուլմանության (թաթարների) շրջանում քաղաքական սոցիալիզացիայի և մոդերնիզացիոն գաղափարների տարածման շրջանում: 1918-1920 թվականներին եղել է անկախ Ադրբեջանի իշխող քաղաքական ուժը, որից հետո հայտնվել է քաղաքական վտարանդիության մեջ: Վերանկախացած Ադրբեջանում «Մուսավաթը» երկու անգամ (2003 թ., 2013 թ.) մասնակցել է նախագահական ընտրություններին՝ ի դեմս Իսա Ղամբարի և Ջամիլ Հասանլիի: 2005 թ. Միլլի մեջլիսի ընտրություններում կուսակցությունը ստացել է 5 տեղ՝ 125-ից: Ներկայումս կուսակցությունը ղեկավարում է Արիֆ Հաջիլին, անդամների թիվը խիստ մոտավոր հաշվարկներով 100 հազար է: Ունի քիչ թե շատ ճյուղավորված և կազմակերպված շրջանային կառույցներ, որոնց ակտիվ անդամները հաճախ այս կամ այն պատրվակով ենթարկվում են քաղաքական հետապնդումների:

Նմանատիպ վիճակում է նաև *«Ադրբեջանի ժողովրդական ճակատը»* (Azərbaycan Xalq Cəbhəsi Partiyası): Վերջինս ստեղծվել է արդեն նորօրյա անկախացման օրերին՝ 1989 թ.

հուլիսի 16-ին, Աբուլֆազ Էլչիբեյի և ևս 14 հոգու կողմից: 1992-1993 թթ.՝ Աբուլֆազ Էլչիբեյի նախագահության տարիներին, եղել է վերջինիս քաղաքական ու ռազմական հենարանը՝ զինված ջոկատներ ունենալով ինչպես երկրի ներսում, այնպես էլ ռազմաճակատում: 2000 թ.-ից հետո մինչ օրս կուսակցությունը ղեկավարում է Ալի Քարիմլին: Վերջին անգամ կուսակցությունը Միլլի մեջլիսի ընտրություններում անցողիկ շեմը կարողացել է հաղթահարել 2005 թ.-ին (5 տեղ): Անդամների թիվը խիստ մոտավոր հաշվարկներով 50 հազար է:

Ընդդիմադիր գործելաոճով վերջին տարիներին աչքի է ընկնում նաև *«Հանրապետական այլընտրանք»* (ReAL - Respublikaçi Alternativ Partiyasi) կուսակցությունը, որի համահիմնադիրը և առաջնորդը Իլղար Մամադովն է: Հիմնադրվել է որպես շարժում 2009 թ.՝ պահանջելով վերադարձնել միևնույն անձի կողմից նախագահի պաշտոնը զբաղեցնելու սահմափակումը, որը հանվել էր Ի. Ալիևի նախաձեռնությամբ: 2018 թ. ապրիլին կայացած ֆեյսբուքյան համագումարով շարժումը վերածվել է քաղաքական կուսակցության՝ ունենալով համակիրների նկատելի զանգված:

Ընդդիմադիր դաշտում գործող առանցքային ուժերից կարելի է համարել նաև *«Ադրբեջանի իսլամական կուսակցությունը»* (Azərbaycan İslam Partiyası), որը ստեղծվել է 1991 թ. Ապշերոնի ոչ ֆորմալ շիայական «մայրաքաղաքում»՝ Նարդարան ավանում: Սակայն արդեն 1995թ. զրկվել է քաղաքական գործունեություն ծավալելու արտոնագրից: Կուսակցության հիմնադիրը Ալիաքրամ Ալիևն է: 2007 թ. կուսակցության առաջնորդ է դարձել Մ. Սամադովը, որը կուսակցությունը հայտարարել է ընդդիմադիր Ադրբեջանի կառավարությանը: Կուսակցությունն աչքի է ընկնում իրանամետ, ինչպես նաև հակաամերիկյան քարոզչությամբ: Կուսակցության անդամների հանդեպ ճնշումները և բռնությունները պետության կողմից կրում են շարունակական բնույթ:

Ադրբեջանի քաղաքական գործիչներ

Իլհամ Ալիև

Ադրբեջանի նախագահը և կառավարության ղեկավարը Իլհամ Ալիևն է: Ծնվել է 1961 թ. դեկտեմբերի 24-ին: Ավտորիտար համակարգերին (այդ թվում՝ հետսովետական) բնորոշ իշխանական մշակույթով վերջինս պաշտոնը ժառանգել է նախորդից՝ իր հայր Հեյդար Ալիևից: Մինչ այդ՝ 1994-2003 թթ. եղել է պետական նավթային ընկերության առաջին փոխնախագահ, 1995 թ. և 2000 թ. ընտրվել է Միլլի մեջլիսի պատգամավոր, 1999 թ. ընտրվել է «Նոր Ադրբեջան» կուսակցության փոխնախագահ, 2001 թ.-ին՝ նախագահի առաջին տեղակալ, 2003 թ. օգոստոսին հոր կողմից նշանակվել է վարչապետ, նույն տարում կայացած ընտրություններում ընտրվել է նախագահ: Այդ պաշտոնում վերընտրվել է 2008 թ., 2013 թ. և 2018 թ.: 2005 թ.-ից «Նոր Ադրբեջան» կուսակցության նախագահն է:

Մեհրիբան Ալիևա

Ադրբեջանի առաջին փոխնախագահ Մեհրիբան Ալիևան երկրի նախագահի կինն է: Ծնվել է 1964 թ. օգոստոսի 26-ին Փաշաների ընտանիքում: 1995 թ. հիմնել և ղեկավարել է «Ադրբեջանի մշակույթի բարեկամներ» բարեգործական հիմնադրամը, 1996 թ. հիմնել և գլխավորել է «Ադրբեջանի ժառանգություն» պատմամշակութային եռալեզու ամսագիրը: Նույն տարում ադրբեջանական մշակույթի քարոզչության նպատակով հիմնել է մեկ այլ եռալեզու ամսագիր՝ «Ադրբեջան-ժառանգու-

թյուն»: 2004 թ.-ից «Հեյդար Ալիևի» հիմնադրամի հիմնադիր նախագահն է: 2009 թ.-ին Բաքվում վերջինիս նախաձեռնությամբ բացվել է ժամանակակից արվեստի թանգարան:

1995 թ. անդամակցել է իր սկեսրոջ ղեկավարած իշխող «Նոր Ադրբեջան» կուսակցությանը, 2004 թ.-ից դարձել է կուսակցության քաղաքական խորհրդի անդամ, իսկ 2013 թ. հունիսից՝ փոխնախագահ: 2005-2017 թթ. անընդմեջ ընտրվել է Միլլի մեջլիսի պատգամավոր:

Հեյդար Ալիև

Հեյդար Ալիևը ծնվել է 1923 թ. մայիսի 10-ին: Ըստ պաշտոնական կենսագրության՝ ծնվել է Նախիջևան քաղաքում: Ըստ ժամանակակիցների վկայության և ժողովրդական հիշողության՝ Ալիևների ընտանիքը բնակվել է ՀԽՍՀ Սիսիանի շրջանում, և Հեյդար Ալիևը ծնվել է տեղիս Թանահատ (թյուրքաբան տարբերակով՝ Ջոմարդլու) գյուղում: 1938-1966 թթ. քաղաքացիական և հատուկ պատրաստվածության կրթություն է ստացել Նախիջևանի մանկավարժական տեխնիկումում, Ադրբեջանի արդյունաբերության ինստիտուտում (ճարտարապետության ֆակուլտետ), ԽՍՀՄ պետանվտանգության ժողկոմատի՝ ղեկավար օպերատիվ կազմի վերապատրաստման լենինգրադյան դպրոցում, Ադրբեջանի պետական համալսարանում (պատմության ֆակուլտետ), Ֆ. Ձերժինսկու անվան՝ ՊԱԿ բարձրագույն դպրոցում: 1941 թ.-ից աշխատել է պետական անվտանգությանն առնչակից պաշտոններում՝ կուտակելով պետական կառավարման, կադրերի կազմակերպման և ցանցավորման, ինչպես նաև «ներհամակարգային ինտրիգների» ահռելի փորձ:

1969 թ. հուլիսի 14-ին Ադրբեջանի Կոմկուսի կենտկոմի պլենումում Հ. Ալիևն ընտրվել է առաջին քարտուղար՝ այդ պաշտոնում աշխատելով մինչև 1987 թ.: Ադրբեջանը ղեկավարելու տարիներին ուշադրություն է դարձրել տնտեսության ոչ նավթային սեկտորի զարգացմանը, ինչպես նաև, ելնելով այդ տարիներին թափ հավաքող ազգայնական մտայնություններից, Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ադրբեջանականացմանը և առհասարակ Հայաստանի և վերջինիս ղեկավարներ Անտոն Քոչինյանի և Կարեն Դեմիրճյանի դեմ «ազգային հարցի» պայքարում հաջողություններ գրանցելուն: Ներքին կադրային քաղաքականության ասպարեզում Հ. Ալիևն իշխանության առաջին տարիները նվիրել է կոռուպցիայի դեմ պայքարի անվան տակ իրականացվող կադրային զտումներին՝ ազատված պաշտոններին նշանակելով իրեն հավատարիմ/համերկրացի մարդկանց (գլխավորապես Նախիջևանից)՝ ձևավորելով երկարաժամկետ հեռանկարում անմրցունակ պետական ապարատին բնորոշ և մտերիմներից բաղկացած փակ վարչախումբ, որտեղ դրսից դժվար է մտնելը, իսկ ներսում հեշտ է կոռուպցիոն մեխանիզմներով առաջանալը:

Հետխորհրդային տարիներին Հ. Ալիևի քաղաքական կարիերան շարունակվել է նախ որպես Նախիջևանից ընտրված պատգամավոր (1990 թ. աշուն), ապա Նախիջևանի ԻԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահ: Ադրբեջանում պատերազմական անհաջողություններով ուղեկցվող իշխանության ճգնաժամի արդյունքում 1993 թ. ամռանը Հեյդար Ալիևը գործող նախագահ Աբուլֆազ Էլչիբեյի կողմից հրավիրվել է Բաքու և ստանձնել երկրի փաստացի ղեկավարումը՝ նույն տարվա հոկտեմբերին նաև ընտրվելով նախագահի պաշտոնում: Պետական կառավարման նշանակալի փորձը և դրսից ներհոսող «նավթադոլարները» թույլ են տվել Հ. Ալիևին արագորեն վերակազմակերպելու պետական ապարատը,

ազատվելու «խանգարող» կադրերից, բալանսավորելու արտաքին քաղաքականությունը և ուղենշելու Լեռնային Ղարաբաղի հակամարտության հարցում Ադրբեջանի հետագա քաղաքականությունը, այն է՝ չգնալ կտրուկ քայլերի, որ կարող են սասանել իրենց ընտանեկան իշխանությունը[16], իսկ հակամարտության՝ իրենց համար ցանկալի լուծումը թողնել ուժային գործոնով կարգավորման համար բարեպատեհ ժամանակի:

Ներկայումս Ադրբեջանում նարատիվային և տեքստագրական մակարդակում հաստատված է Հ. Ալիևի անձի պաշտամունքը, վերջինիս կերպարը մատուցվում է՝ որպես ադրբեջանական ժողովրդի հայր, «համազգային առաջնորդ», «մեծ առաջնորդ», որը փրկեց երկիրն ու ժողովրդին դավաճան նախորդների վարած ազգակործան քաղաքականությունից[17]: Հասարակական-քաղաքական կյանքի մասին վերջինիս «աֆորիզմները» հանդիպում են համացանցի ադրբեջանական սեգմենտում, այդ թվում՝ պետական/կառավարական գերատեսչությունների կայքերում՝ հիշեցնելով Քեմալ Աթաթուրքի անձի պաշտամունքի ձևավորումը Թուրքիայում:

---

[16] Ըստ դիվանագիտական-պաշտոնական շրջանակներում երկար տարիներ շրջանառված բանավոր վկայության՝ Հ. Ալիևը 2001 թ. ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի հետ ԱՄՆ Քի Վեսթ ավանում ձեռք բերած պայմանավորվածությունները խզել է Ադրբեջան վերադառնալուն պես՝ միջազգային գործընկերներին հայտնելով, որ իշխանությունը որդուն փոխանցելու խնդիր ունի և չի կարող ոչ պոպուլյար որոշման գնալ (ըստ մասնակի հրապարակված նյութերի՝ Քի Վեսթում ի շարս այլի՝ նախատեսվում էր նաև նախկին Լաչինի շրջանով անցնող «միջանցքային» մի հատվածի անցում հայկական պետության սուվերեն կազմ):

[17] Ուշագրավ է, որ այս թեզի շուրջն է կառուցվում նաև Հ. Ալիևի պատերազմական գործունեության նկարագրությունը՝ որպես ռազմական գործողություններում դրական բեկում մտցրած, այն դեպքում երբ քանակական և որակական առումով ամենաշատ տարածքներ Ադրբեջանը կորցրել է հենց 1993 թ. հունիս-1993 թ. հոկտեմբեր ամիսներին, երբ Հ. Ալիևն զբաղված էր երկրի ներսում սեփական իշխանության ամրապնդմամբ:

Բացի այս՝ Հ. Ադրբեջանի գրեթե բոլոր քաղաքներում կենտրոնական պողոտաները, փողոցները, տարատեսակ մշակութային և կրթական հաստատություններ կոչվում են Հ. Ալիևի անունով:



Աբուլֆազ Էլչիբեյ

Աբուլֆազ Էլչիբեյը (իսկական ազգանունը՝ Ալիև) ծնվել է 1938 թ. հունիսի 24-ին Նախիջևանի Քաղաքիկ (թյուրք.՝ Քալաքի) գյուղում: 1975 թ. ավարտել է Ադրբեջանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետը (արաբական բանասիրության մասնագետ): 1963-1964 թթ. լեզվական փորձուսուցում է անցել Եգիպտոսում որպես թարգմանիչ: Շարունակել է ասպիրանտական ուսումը՝ թեկնածուական ատենախոսություն պաշտպանելով միջնադարյան Հնդկաստանում իշխած թյուրքախոս մուսուլմանական թուղլաքյանների դինաստիայի մասին: Ուշագրավ է, որ Ա. Ալիևը հետաքրքրվել է այդ թեմայով հայտնի պատմակեղծարար Ջիյա Բունյադովի խորհրդով:

Որպես այլախոհ-պանթուրքիստ՝ Ա. Ալիևը ձերբակալվել 1975 թ.-ին՝ ազատ արձակվելով 1 տարի անց և աշխատանքի տեղավորվելով ԱդրԽՍՀ գիտությունների ակադեմիայում: Հակագաղութային պայքարի տարիներին Ա. Ալիևը, ազգայնականության ոգուն համապատասխան, որդեգրել է հեղափոխական մականուն՝ «Էլչիբեյ», որ մոտավոր թարգմանությամբ նշանակում է «ժողովրդական խոսքառաք/բանագնաց»: 1989 թ. հունիսի 16-ին Ա. Էլչիբեյը դարձել է Ադրբեջանի «Ժողովրդական ճակատի» ղեկավարը: Ա. Էլչիբեյի հակագաղութային, ազգայնական և հայրենասիրական բոցաշունչ ելույթները համընկնում էին այդ տարիներին գոյացած հասարակական պահանջի տրամադրություններին. արդյունքում ժողովրդական ճնշման տակ 1992 թ. մարտին Ադրբե-

ջանի առաջին նախագահ Այազ Մութալիբովը հրաժարական է տվել, իսկ մայիսի 15-ին՝ վերջնականապես «կապիտուլացվել»՝ իշխանությունը փաստացիորեն հանձնելով ժողճակատայիններին՝ Ա. Էլչիբեյի գլխավորությամբ: Վերջինս հաղթել է 1992 թ. հունիսի 7-ին կայացած նախագահական ընտրություններում՝ շրջանցելով մնացյալ 4 թեկնածուներին:

Ա. Էլչիբեյի նախագահության տարիներին ադրբեջանական պետականությունը շարունակել է ընկղմված մնալ հետարդյունաբերական փլուզման, պատերազմական անհաջողությունների և հանրակարգային անկման ճիրաններում: Բովանդակային առումով Ա. Էլչիբեյին չի հաջողվել հանրային կյանքի որևէ ասպարեզում գրանցել այնպիսի հաջողություն, որ թույլ կտար պահպանել իր անձի և կուսակցության շուրջ հանրային լայն մոբիլիզացիան: Ձախողվել է նաև հավասարակշռված արտաքին քաղաքականության վարումը՝ անհեռատեսորեն կողմնորոշվելով դեպի Թուրքիա և արևմուտք, փչացնելով հարաբերությունները հարևաններ Ռուսաստանի և Իրանի հետ:

Ներքաղաքական ծանր իրադրության պայմաններում 1993թ. հունիսի 18-ին Ա. Էլչիբեյը քաշվում է ծննդավայր Նախիջևան և այդուհետ դադարում քաղաքական լուրջ դերակատարում ունենալ Ադրբեջանի կյանքում: Նա մահացել է Թուրքիայում 2000 թ. օգոստոսի 22-ին, հուղարկավորվել Բաքվում:

Այազ Մութալիբով

Այազ Մութալիբովը ծնվել է 1938 թ. մայիսի 12-ին Բաքվում՝ ծագումով շամախեցի բժիշկների ընտանիքում: 1962 թ. ավարտել է նավթի և քիմիայի ադրբեջանական ինստիտուտը: 1977 թ.-ից զբաղեցրել է կուսակցական պաշտոններ, իսկ արդեն 1990 թ. հունվարի 25-ին ընտրվել է

Ադրբեջանի Կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար: Նախքան ԽՍՀՄ փաստացի փլուզումը փորձել է կենտրոնի աջակցությամբ էթնիկ զտման միջոցով «լուծել» ղարաբաղյան հարցը («Օղակ» գործողություն): ԽՍՀՄ փաստացի փլուզման օրերին՝ 1991 թ. սեպտեմբերի 8-ին, անցկացված նախագահական ընտրությունների ժամանակ, լինելով միակ թեկնածուն, հավաքել է 98.5% ձայն: Ա. Մութալիբովի նախագահությունը ժամանակագրորեն համընկել է ԼՂՀ հռչակման, անկախության հանրաքվեի անցկացման և նախկին ԼՂԻՄ տարածքում Ադրբեջանի առաջին ռազմական անհաջողությունների հետ: 1992 թ. փետրվարի 26-ին Խոջալու ավանի անկումից հետո ընդդիմադիր «Ադրբեջանի ժողովրդական ճակատի» ճնշման ներքո Ա. Մութալիբովը մնացել է միայնակ՝ ստիպված լինելով մարտի 6-ին հրաժարական տալ: Օգտվելով ռազմաճակատում շարունակվող անհաջողություններից (մայիսի 9-ին հայկական ուժերի ձեռքն է անցել Շուշին)՝ Ա. Մութալիբովը մայիսի 14-ին փորձել է հետ ստանձնել նախագահի լիազորությունները՝ հայտարարելով, որ «եթե կարիք լինի, դիկտատուրայի էլ պիտի գնանք», սակայն մեկ օր անց դարձյալ գահընկեց է արվել զինված ժողճակատայինների հեղաշրջման արդյունքում: 1992-2011 թ. անցկացրել է Ռուսաստանում՝ քաղաքական վտարանդիության մեջ:

Իսա Ղամբար

Իսա Ղամբարը ծնվել է 1957 թ. փետրվարի 24-ին Բաքվում: 1974-1979 թթ. սովորել է Ադրբեջանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում: Ադրբեջանի գիտությունների ակադեմիայում աշխատակցելու տարիներին թեկնածուական ատենախոսություն է պաշտպանել «1978-1979 թթ. իրանական հեղափոխությունը» թեմայով: Տակավին 1987 թ. ՝ ԽՍՀՄ քաղաքական ճգնաժամի օրերին, հիմնել է «Նոր Մուսավաթ» թերթը, ևս երկու տարի անց համահիմ-

նադրել «Ադրբեջանի ժողովրդական ճակատ» ազգայնական/հակագաղութային կուսակցությունը: 1992 թ. մայիս-հունիս ամիսներին՝ պայմանավորված Աբուլֆազ Էլչիբեյի՝ իշխանությունից հեռանալով և գոյացած իշխանական-պաշտոնական վակուումով՝ ի պաշտոնե հանդես է եկել որպես նախագահի լիազորությունների կատարող: Նույն տարվա նոյեմբեր ամսից մինչև 2014 թ. սեպտեմբեր ղեկավարել է ընդդիմադիր «Մուսավաթ» կուսակցությունը՝ ակտիվ մասնակցություն ունենալով նաև համաընդդիմադիր մոբիլիզացիոն աշխատանքներին, մասնավորապես՝ «Ազատություն» ընդդիմադիր կուսակցությունների դաշինքին (2005 թ.), ԱԺՃ-Մուսավաթ ընտրական դաշինքին (2010 թ.) և ընդդիմադիր ուժերի միասնական «Ազգային խորհրդին» (Milli Şura): Որպես ընդդիմադիր թեկնաու մասնակցել է 2003 թ. նախագահական ընտրություններին՝ ըստ պաշտոնական վիճակագրության 13.97% ձայներով զբաղեցնելով 2-րդ տեղը:

Ալի Քարիմլի

Ալի Քարիմովը (Քարիմլի) ծնվել է 1965 թ. ապրիլի 28-ին Սաաթլուի շրջանի Ազաղքյանդ գյուղում: 1986-1991 թթ. սովորել է Ադրբեջանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետում: Անցել է ուշ սովետական հանրային ակտիվ վարք ունեցող երիտասարդին բնորոշ քաղաքական կարիերա՝ համալսարանական ֆակուլտետի կոմսոմոլի քարտուղարից, մինչև ազգայնական «Ադրբեջանի ժողովրդական ճակատ» կուսակցության համալսարանական բաժնի համաստեղծում և նախագահում: Ա. Քարիմովը մասնակցել է նաև կուսակցության կանոնադրության մշակմանը: Ա. Էլչիբեյի նախագահության օրոք ծառայել է որպես պետական քարտուղար, ինչպես նաև նախագահի աշխատակազմի տարածքային կառավարման և իշխանության մարմինների հետ աշխատանքների բաժնի պետ: Ա. Էլչիբեյի մահվանից հետո՝

2001 թ., կուսակցության հերթական համագումարում ընտրվել է և ցարդ պաշտոնավարում է որպես նախագահ: Պատգամավոր է ընտրվել 1995 թ., 2000 թ., 2005 թ. խորհրդարանական ընտրություններին (վերջինի դեպքում ի նշան ընտրակեղծարարության դեմ բողոքի փաստացի չի ստանձնել մանդատը):

Տարբեր տարիներին ակտիվ դերակատարում է ունեցել ընդդիմադիր դաշտի համախմբման-ինքնակազմակերպման գործում: 2005-2010 թթ. համահիմնադրել և մասնակցել է «Ազատություն» ընդդիմադիր կուսակցությունների դաշինքին, 2010 թ. համահիմնադրել է ԱԺՃ-Մուսավաթ ընտրական դաշինքը, իսկ 2013 թ. -ից ընդդիմադիր ուժերի միասնական «Ազգային խորհրդի» (Milli Şura) համահիմնադիր է: Չնայած ակտիվ ընդդիմադիր գործունեությանը՝ մամուլում և ժողովրդական խոսքում հաճախ Ա. Քարիմլու հանդեպ հնչում են «կեղծ ընդդիմադրի» կամ «իշխանությունների դրածո ընդդիմադրի» վերաբերյալ մեղադրանքներ: Անշուշտ, հասարակության մի որոշակի հատվածն էլ ընդդիմադիր գործչին մեղադրում է «արտասահմանյան գործակալության», «դրսից փող ստանալու» և այլ նմանօրինակ արարքների մեջ:

Մովսում Սամադով

Մովսում Սամադովը ծնվել է 1965 թ. -ի սեպտեմբերի 4-ին Ղուբայում: 1983-1990 թթ. սովորել է Ադրբեջանի բժշկական ինստիտուտի բժշկապրոֆիլակտիկ ֆակուլտետում՝ ստանալով թերապևտի մասնագիտացում: 1990-1992 թթ. -ներին ավարտելով պարտադիր զինվորական ծառայությունը՝ որպես բժիշկ աշխատել է նախ Դաղստանում (ՌԴ), ապա Ղուբայի շրջանի Դիգահ գյուղում: 1995-2002 թթ. կրթությունը շարունակել է շիայական հոգևոր կրթական կենտրոն Ղոմ քաղաքում (ԻԻՀ)՝ գիտաաստվածաբանական կենտրոնում («Իսլամական բարձրագույն համալսարան»): Քաղաքական

գործունեությունն սկսել է «Ադրբեջանի ժողովրդական ճակատ» կուսակցությունից, ապա 1993 թ.-ին հարել վերջինից անջատված-ճյուղավորված «Ադրբեջանի իսլամական կուսակցությանը»: Ղոմից վերադառնալուց հետո (2002 թ. փետրվար) ներգրավվել է կուսակցության ղեկավարման աշխատանքներում՝ մինչև 2007 թ. գլխավորելով կուսակցության Ղուբայի շրջանային կազմակերպությունը, այնուհետև՝ ամբողջ կուսակցությունը: Կուսակցության ղեկավար ընտրվելուց հետո դիմել է արդարադատության նախարարություն՝ կառույցի գրանցումը վերականգնելու հարցով, սակայն մերժվել է:

Անձնական-կուսակցական գաղափարները եղել են նկատելիորեն հակաարևմտական (հակաամերիկյան, հակաիսրայելական հռետորաբանությամբ) և իրանամետ: 2011 թ. հունվարի 2-ին Միլլի մեջլիսում ունեցել է սուր ելույթ՝ քննադատելով իշխանություններին երկրի խնդիրների մեջ: Հետաքրքրական է, որ կրոնական բողոքի մոտիվները (իսլամի հանդեպ հալածանք, հիջաբի արգելք և այլն) այդ ելույթում զուգակցված են եղել սոցիալական, իրավական և ազգային խնդրաբազայի հետ (կոռուպցիա, մարդու իրավունքներ, Ղարաբաղի հարց), ինչը հավելյալ վկայում է այն մասին, որ «արտապետական» իսլամն Ադրբեջանում կարող է այլընտրանքային բողոքամիջոցի վերածվել սոցիալական ֆրուստրացիան արտահայտելու համար: Ելույթից 5 օր անց ձերբակալվել է, 2011 թ.-ին՝ դատապարտվել 12 տարվա ազատազրկման, որը շարունակվում է ցարդ:

Իլղար Մամադով

Իլղար Մամադովը ծնվել է 1970 թ. հունիսի 14-ին Բաքվում: Ի. Մամադովի հայրը սերում է Սյունիքի մարզի Դաս-

տակերտ գյուղից[18]: Քաղաքական և քաղաքատնտեսական մասնագիտացմամբ կրթություն է ստացել Մոսկվայի Մ. Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանում, ապա Հունգարիայում գտնվող Կենտրոնական եվրոպական համալսարանում (1997 թ.): 1990-ականների վերջին քաղաքական կարիերան սկսել է չափավոր աջակողմյան «Ազգային անկախություն կուսակցության» շարքերում՝ 1998-2003 թթ. աշխատելով որպես փոխնախագահող: 2009 թ. -ի մարտի 19-ին հեռուստատեսային ուղիղ եթերով քննադատել է նախընթաց օրն Ի. Ալիևի նախաձեռնությամբ անցկացված սահմանադրական փոփոխության հանրաքվեն, որով վերացվել է նախագահի պաշտոնավարման համար առկա ժամկետային սահմանափակումը: Այդ ժամանակ վերջինս արդեն համահիմնադրել էր «Հանրապետական այլընտրանք» ընդդիմադիր շարժումը:

2013 թ. փետրվարին Ի. Մամեդովը ձերբակալվել է ադրբեջանական իշխանությունների կողմից, ինչն ընդդիմադիր համայնքի և միջազգային հանրության տարբեր ներկայացուցիչների կողմից դիտվել է որպես քաղաքական բռնաճնշում՝ ի կանխումն նույն տարվա հոկտեմբերին կայանալիք նախագահական ընտրություններին Ի. Մամեդովի մասնակցության՝ որպես ընդդիմության միասնական թեկնածու: Պայմանական կարգով վաղաժամ ազատ է արձակվել 2018 թ. օգոստոսի 13-ին: Տեղին է հիշատակել, որ Ի. Մամեդովի՝ ակնհայտորեն քաղաքական նպատակադրումներով իրականացված կալանքն ու ձերբակալությունը ժամանակագրորեն համընկել են Արևմուտքի և Ադրբեջանի միջև հակասությունների ու տարամիտումների գոյացմամբ, ինչը հանգեցրել է

[18] Ուշագրավ է, որ տակավին 2009 թ. Ի. Մամադովը յութուբյան իր ալիքում տեղադրել է Դաստակերտի ճանապարհից հայ օգտատիրոջ արած նկարահանում՝ վերնագրելով այն «Դաստայար. Ձանգեզուրում մեր ավերված գյուղը» (https://www.youtube.com/watch?v=fi54x-RIcRE):

տարբեր տարիների Ի. Մամեդովի հարցով արևմտյան քննադատության՝ առ ադրբեջանական իշխանություններ (ԱՄՆ պետդեպարտամենտ, Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարարություն, Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարություն, ԵՄ, ԵԽԽՎ և իհարկե, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշում)։

Ադրբեջանի պետական տոներ և հիշատակի օրեր[19]

Հունվարի 1-2	Նոր տարի
Մարտի 8	Կանանց օր
Մայիսի 9	Ֆաշիզմի դեմ հաղթանակի օր
Մայիսի 28	Հանրապետության օր *Նշվում է 1918թ. Ադրբեջանի Հանրապետության հռչակման օրը:*
Հունիսի 15	Ադրբեջանական ժողովրդի Ազգային Փրկության օր *Նշվում է Հեյդար Ալիևի՝ 1993թ. Ադրբեջանի Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահ ընտրվելու օրը:*
Հունիսի 26	Ադրբեջանի Հանրապետության Զինված Ուժերի օր *Նշվում է 1918թ. Ադրբեջանում կանոնավոր բանակի ձևավորման օրը:*
Հոկտեմբերի 18*	Պետական անկախության օր *Նշվում է 1991թ. Ադրբեջանի Հանրապետության Գերագույն խորհրդի կողմից «Պետական անկախության մասին» ակտի ընդունվելու օրը:*
Նոյեմբերի 9	Ադրբեջանի Հանրապետության պետական դրոշի օր *Նշվում է 1918թ. Ադրբեջանի Հանրապետության կողմից պետական դրոշի ընդունման օրը:*
Նոյեմբերի 12*	Սահմանադրության օր

[19] Բացի աստղանիշով նշված օրերից՝ մնացյալ պետական տոները համարվում են ոչ աշխատանքային: Նովրուզի, Ղուրբանի և Ռամադանի տոների անցկացման օրերը կապված են իսլամական փոփոխվող օրացույցի հետ և ամեն տարվա դեկտեմբերին կառավարությունը հայտարարում է հաջորդ տարի դրանց անցկացման ամսաթվերը:

	Նշվում է 1995թ. սահմանադրական հանրաքվեի (որով ընդունվեց նորանկախ Ադրբեջանի սահմանադրությունը) օրը:
Նոյեմբերի 17*	Ազգային վերածնունդի օր *Նշվում է 1988թ. Բաքվի Լենինի (այժմ՝ Ազադլրգ) հրապարակում զանգվածային ցույցերի մեկնարկի օրը:*
Դեկտեմբերի 31	Աշխարհի ադրբեջանցիների համերաշխության օր *Նշվում է նախիջևանցի խուլիգանների կողմից ԽՍՀՄ-ԻԻՀ սահմանային տեղամասի քանդման և «Արաքսով բաժանված ադրբեջանցիների վերամիավորման» օրը:*
Մարտի 20-24 (նշվում է հինգ օր)	Նովրուզի (Գարնան գալստյան) տոն
Փոփոխվող օրացույց (երկու օր)	Ղուրբան (Զոհաբերության) տոն
Փոփոխվող օրացույց (երկու օր)	Ռամադանի (իսլամական պահքի) տոն

Որպես հիշատակության օրեր են նշվում Համազգային սգի օրը (հունվարի 20), այսպես կոչված «Խոջալուի զոհերի հիշատակի օրը» (փետրվարի 26) և «Ադրբեջանցիների ցեղասպանության օրը» (մարտի 31) և այլն:

Հեյդար Ալիևի անձի պաշտամունքի հետ է կապված ոչ միայն «Ազգային փրկության օրը», այլև մայիսի 10-ին (Հ. Ալիևի ծննդյան օրը) նշվող «Ծաղկի տոնը»:

Առավել կրոնական կենցաղ վարող քաղաքացիները, բացի Ղուրբան բայրամից և Ռամադանից, նշում են նաև այնպիսի տոներ, ինչպիսին է աշուրան:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

լրացուցիչ ընթերցանության համար

Ադրբեջան. ռազմաքաղաքական հանդես, Ջորակն հիմնադրամ, Երևան, 2018

Էլբակյան Է., Հայ-ադրբեջանական պատերազմը և մերօրյա հերոսները, Երևան, 2015

Մարջանյան Ա., Ադրբեջանական Հանրապետության սոցիալ-տնտեսական համակարգը, Երևան, 2013

Սարգսյան Ա., Հայատյացությունը Ադրբեջանում. Ռեսենտիմենտի և ավտորիտարիզմի խաչմերուկում, Երևան, 2013

Ստեփանյան Գ., Բաքու քաղաքի հայության պատմություն, Երևան, 2013

Փաշայան Ա., Իսլամն Ադրբեջանում. անցյալը և ներկան, Երևան, 2014

Адибекян А., Элибегова А., Армянофобия в Азербайджане, Ереван, 2013

Асатрян Г., Этническая композиция Ирана: От «Арийского простора» до Азербайджанского мифа, Ереван, 2012

Казинян А., Полигон "Азербайджан": политико-культурологическое исследование : в 2 кн., Москва, 2015

Altstadt A., The Azerbaijani Turks: Power and Identity under Russian Rule, Hoover Institution Press, 1992

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՎԱՐՈՒԺԱՆ ԳԵՂԱՄԻ ԳԵՂԱՄՅԱՆ
ԷԴԳԱՐ ԱՐՄԵՆԻ ԷԼԲԱԿՅԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱԴՐԲԵՋԱՆ

տեղեկագիրք

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Վ. Գեղամյանի

Տպագրված է «Վարդան Մկրտչյան» ԱՁ-ում:
ք. Երևան, Հր. Ներսիսյան 1/125

Ստորագրված է տպագրության՝ 23.12.2019:
Չափսը՝ 60x84 1/16: Տպ. մամուլը՝ 6.375:
Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.am